digitised by A.R.A.R.@

Բնության գրկում



Ծաղկաձոր: Ծաղիկների հովիտ, մանկական զվարթ երգերի ու կանչերի հովիտ: Այս անունը երգ է դարձել, մանկական անհոգ հասակի և ուրախության խորհրդանիշ: Այստեղ՝ Ծաղկունյաց լեռների այս գողտրիկ վայրում, վաղ առավոտից մինչև ուշ երեկո հորդում է համբարային կյանքը: Այստեղ երեխաները սովորում են բնության հետաքրքրաշարժ գիրքը կարդալ, օրն ի բուն ունկնդրում են բնության ձայներին: Անտառը հեքիաթ է դառնում նրանց համար, ծաղիկները հրճվանքի արցունքը աչքերին պատմում են արևի տակ անվերջորեն ծնվող հրաշալիքների, աշխարհը լցնող գույների ու բույրերի մասին: Երեխաները սովորում են հաղթահարել լեռնային դժվարին վերելքները, արշավային կյանքի դժվարությունները: Այստեղ են սկիզբ առնում մանկական առաջին ծանոթությունները, որ հետո կյանքում պիտի վերածվեն մեծ ու իսկական բարեկամության:



Տեսարաններ Ծաղկաձորի պիոներական համբարներից:



digitised by A.R.A.R.@

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ. ՕՐԱՆԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿԱՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

№ 8 (209) ՕԳՈՍՏՈՍ 1963 Թ.
ԵՐԵՎԱՆ

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՂԻՈՎ

ՊԱՅՔԱՐԻ ՈՒ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

ԱՐԱ ԼԵՌԱՆ ՍՏՈՐՈՏՈՒՄ

ՍԵՎԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՆՈՐ ՄԱԼԵԹԻՑՈՒՄ

ԱՆԿԵՂԾ ՍԻՐՈ ԱՇԽԱՐՀ

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՁՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՂԱՆԴՆԵՐԸ

ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Շապիկը՝ նկարիչ Մ. ՂՐԻՑԱՆԻ

ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՂԻՈՎ

Ամենաբանական ու արդարացի հասարակարգի կառուցման ճանապարհին կարևոր ուղենիշ, մեր ժողովրդի գաղափարական-քաղաքական կյանքում խոշոր իրադարձություն հանդիսացավ Սովետական Միության կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հունիսյան պլենումը: Պլենումը քննարկեց «Պարտիայի գաղափարական աշխատանքի հերթական խնդիրները»: Այդ հարցի առթիվ կեկուցումով հանդես եկավ ՍՄԿՊ Կենտկոմի քարտուղար ընկ. Լ. Ֆ. Իլյիչովը: Ընդունված ծավալուն որոշման մեջ պլենումը, ելնելով պարտիայի XXII համագումարի որոշումներից և Ծրագրից, որոշեց պարտիայի աշխատանքի հիմնական ուղղություններն ու կոնկրետ խնդիրները աշխատավորների կոմունիստական դաստիարակության ասպարեզում:

Իր հերոսական պայքարով հանուն աշխատանքի մարդկանց բարօրության ու երջանկության, լենինյան պարտիան ձեռք է բերել սովետական ժողովրդի, բոլոր երկրների աշխատավորների խոր հարգանքը, վստահությունն ու սերը: «Պարտիայի գործունեության գլխավոր արդյունքը այն է,—ընդգծվում է Կենտկոմի պլենումի որոշման մեջ,— որ սովետական իշխանության տարիներին սոցիալիզմը մեր երկրում հաղթանակեց լիովին ու վերջնականապես, դաստիարակվում է կոմունիստական իդեալների և բարոյական բարձր սկզբունքների մարդը, միլիոնավոր մարդկանց աշխարհայացքը պատմության մեջ առաջին անգամ ձևավորվում է մարքսիզմ-լենինիզմի գիտական հիման վրա. սովետական ժողովուրդը այժմ ունի կոմունիզմի կառուցման կոնկրետ, գիտականորեն հիմնավորված պլան»:

Կենտրոնական կոմիտեի պլենումի աշխատանքի օրերին փայլուն հաջողությամբ ավարտվեց տիեզերական նոր հոյակապ էպոպեն՝ հերոս տիեզերագնացներ Վ. Ֆ. Բիկովսկու և Վ. Վ. Տերեշկովայի ղեկավարած «Վոստոկ—5» և «Վոստոկ—6» արբանյականավերի տիեզերական տևական համատեղ թռիչքը: Տիեզերքի յուրացման մեջ, ինչպես կիսկակետում, երևում են մեր էկոնոմիկայի, գիտության, տեխնիկայի, մշակույթի մեծ հաջողությունները, սոցիալիստական հասարակարգի հզորությունը:

Հունիսյան պլենումում բազմակողմանիորեն քննության առնվեցին գաղափարական աշխատանքի հերթական խնդիրները:

Գաղափարական ճակատը կարևոր ճակատներից մեկն է կոմունիզմի հաղթանակի համար մղվող պայքարում, որովհետև սովետական ժողովրդի վճռական հաջողությունները կոմունիստական շինարարության մեջ, սոցիալիստական երկրների բոլոր ժողովուրդների նվաճումները դասակարգային ուժերի նոր դասավորում են ստեղծել համաշխարհային ասպարեզում, երբ իմպերիալիզմը արդեն չի կարող պատերազմի միջոցով կործանել սոցիալիզմը և նա երկու սիստեմների տնտեսական մրցակցության մեջ մեկը մյուսի հետևից պարտություն է կրում:

Այժմ իմպերիալիստական երկրների կառավարող շրջանները, չհրաժարվելով սոցիալիզմի դեմ ուղղված պայքարի այլ ձևերից, իրենց հիմնական հույսը դնում են սոցիալիստական պետությունների նկատմամբ գաղափարական դիվերսիա գործադրելու վրա: Ջողարկվելով գաղափարների խաղաղ գոյակցության լոզունգով, նրանք փորձում են մեր հասարակության մեջ ներքաշել արվեստի «անպարտիականության», «ստեղծագործության բացարձակ ազատության», գաղափարապրկության ու ապաքաղաքականության, «սերունդների կոնֆլիկտի» ստահոդ կոնցեպցիաները: Մեր պարտիան իր առաջնահերթ պարտականությունն է համարում անհաշտ, հարձակողական պայքար մղել իմպերիալիստական գաղափարախոսության դեմ, աշխատավորությանը պաշտպանել նրա նեխիչ ազդեցությունից, պանգվածներին է՛լ ավելի ակտիվորեն հաղորդակից դարձնել կոմունիզմի մեծ գաղափարներին, մշտապես հոգ տանել մարքս-լենինյան ուսմունքի անաղարտության, նրա կարգացման նկատմամբ:

Կենտկոմի պլենումի որոշման մեջ ընդգծվում է. «Արդի պայմաններում պարտիայի գաղափարական-դաստիարակչական աշխատանքի գլխավոր խնդիրն է՝ դաղափարապես ապահովել ՍՄԿՊ Ծրագրի կենսագործումը, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, կոմունիստական հասարակական հարաբերությունների ձևավորումը, նոր մարդու դաստիարակությունը, բարձրացնել քաղաքական գոնությունը, ծավալուն հարձակում գործել իմպերիալիստական գաղափարախոսության դեմ, մարդկանց գիտակցության մեջ անցյալի մնացուկների դեմ»:

Պլենումը ընդհանրացրեց գաղափարական աշխատանքի փորձը և բացահայտեց նրանում եղած թերությունները, որոշեց նրա ուղղությունները, որոնց վրա պետք է կենտրոնացվեն պարտիայի, պետական մարմինների, արհեստակցական միությունների, կոմերիտմիության և հասարակական մյուս բոլոր կազմակերպությունների ջանքերը:

Սովետական մարդիկ հայրենասիրական խոր հպարտություն են զգում իրենց հայրենիքի համար, լենինյան մեծ պարտիայի համար, որի ղեկավարու-

digitised by A.R.A.R.@

թյամբ մեր ժողովուրդը թևակոխել է կոմունիզմի ելման բնագծերը: Սովետական հայրենասիրության և սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով բոլոր աշխատավորների, առանձնապես երիտասարդության, դաստիարակությանը ինչպես միշտ, այնպես էլ այժմ մեծ նշանակություն է տրվում:

Պլենումը իր որոշումներում նշեց մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդայի՝ ամբողջ գաղափարական աշխատանքի վճռական օղակի, կազմակերպման խնդիրները, ժողովրդի կոմունիստական աշխարհայացքի ձևավորման, գաղափարական-գիտական դաստիարակության մեջ գիտության դերի բարձրացման անհրաժեշտությունը, նշված է մամուլի, ռադիոյի, կինոյի ու հեռուստատեսության, դպրոցի, որպես գաղափարական ճակատի հարվածային ուժերի, հատուկ կարևոր նշանակությունը:

Պլենումն ընդգծեց, որ նոր մարդու դաստիարակության, կոմունիստական մշակույթի ձևավորման գործում հսկայական նշանակություն ունի գրականության ու արվեստի հետագա զարգացումը: Պլենումը ջերմորեն հավանություն տվեց այն գաղափարներին և դրույթներին, որ ձևակերպվել են ստեղծագործական ինտելիգենցիայի հետ ունեցած հանդիպումների ժամանակ ընկեր Ն. Ս. Խրուշչովի ելույթներում, գաղափարներ և դրույթներ, որոնք դրսևորում են մեր պարտիայի լենինյան կուրսը գրականության ու արվեստի բնագավառում, պարտիայի հոգատարությունը նրանց հետագա ծաղկման նկատմամբ:

Պարտիայի գաղափարական աշխատանքի նշանակությունն ու էությունը Սովետական Միությունում կոմունիզմի կառուցման ժամանակակից փուլում ամբողջ լիակատարությամբ բացահայտված են ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի պլենումում, ընկեր Ն. Ս. Խրուշչովի արտասանած փայլուն ճառում:

ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի պլենումի որոշումները և ընկեր Ն. Ս. Խրուշչովի ելույթը կրկին անգամ բացահիկ ցայտունությամբ արտահայտում են մարքսիզմ-լենինիզմի, մեր սոցիալիստական գաղափարախոսության հաղթական ուժը և մարտական ոգին, մի գաղափարախոսություն, որ դարձել է նոր կյանքի միլիոնավոր կառուցողների դրոշն ու զենքը:

«Աշխարհում գոյություն են ունեցել և գոյություն ունեն զանազան շատ պարտիաներ,— ասել է ընկեր Ն. Ս. Խրուշչովը:— Սակայն նրանց մեջ առանձնահատուկ տեղ են գրավում մարքս-լենինյան կոմունիստական, բանվորական պարտիաները, այնպիսիները, ինչպիսին է մեր պարտիան: Նրա ուժը կոմունիզմի մեծ գործի հաղթանակի նկատմամբ կոմունիստների անսասան համոզվածության մեջ է, այն բանում, որ նա միշտ և ամեն ինչում ղեկավարվում է մարքս-լենինյան տեսությամբ: Խորաթափանց կերպով նայելով ապագային, նա ժողովրդի առջև բացահայտում է առաջընթացի գիտականորեն հիմնավորված ուղիները, մասսաների մեջ արթնացնում է հսկայական եռանդ, ժողովրդին առաջնորդում է լուծելու վիթխարի խնդիրներ: Սոցիալիզմի թշնամիները ինչքա՜ն ատամներ են ջարդել պայքարելով մեր երկրի դեմ: Եվ նրանք արդեն հասկացել են, որ գլխավոր այն ուժը, որը ապահովում է սոցիալիզմի, կոմունիզմի կառուցման ամբողջ աշխատանքի ճիշտ ղեկավարությունը, նրան տալիս է կազմակերպված, պլանաչափ բնույթ և ռևոլյուցիոն թափ, ապահովում է այդ շինարարության բոլոր հաջողությունները, կոմունիստների պարտիան է, նրա գիտականորեն հիմնավորված քաղաքականությունը, ռևոլյուցիոն գաղափարախոսությունը, նրա ռևոլյուցիոն փիլիսոփայությունը՝ մարքս-լենինյան տեսությունը»:

Պլենումը նաև ընդգծեց, որ Սովետական Միության կոմունիստական պարտիան իրենից կախված ամեն ինչ անում է միջազգային կոմունիստական շարժման համախմբումն ամրապնդելու համար՝ մարքսիզմ-լենինիզմի, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների հիման վրա:

Պլենումը քննարկեց նաև «Չինաստանի կոմպարտիայի Կենտկոմի ներկայացուցիչների հետ ՍՄԿՊ Կենտկոմի ներկայացուցիչների առաջիկա հանդիպման մասին» հարցը և այդ առթիվ միահամուռ որոշում ընդունեց:

1963 թվականի հուլիսի 5-ին տեղի ունեցավ Հայաստանի կոմպարտիայի VIII պլենումը, որը լսեց ու քննարկեց Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ն. Զարոբյանի զեկուցումը ՍՄԿՊ Կենտկոմի հունիսյան պլենումի արդյունքների և հանրապետության պարտիական կազմակերպությունների գաղափարական աշխատանքի խնդիրների մասին:

Պլենումի մասնակիցները լիակատար միահամուռության և համախմբվածության իրադրության մեջ հավանություն տվեցին Սովետական Միության կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հունիսյան պլենումի որոշումներին, որ նշանավոր իրադարձություն հանդիսացավ պարտիայի և ամբողջ սովետական ժողովրդի գաղափարական-քաղաքական կյանքում:

Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի պլենումը նշեց, որ հանրապետության պարտիական կազմակերպությունները զգալի աշխատանք են կատարել աշխատավորների կոմունիստական դաստիարակության, ՍՄԿՊ XXII համագումարի, պարտիայի Ծրագրի, ՍՄԿՊ Կենտկոմի նոյեմբերյան պլենումի որոշումների պրոպագանդման, զանգվածների քաղաքական ու աշխատանքային ակտիվության հետագա բարձրացման գործում: Քաղաքական, դաստիարակչական աշխատանքի բոլոր ձևերը ի սպաս են դրվել հանրապետության աշխատավորների առջև յոթնամյա պլանով առաջադրված խնդիրների հաջող լուծմանը:

Պլենումը նշեց, որ սովետական մարդիկ իրավամբ հպարտանում են այն հաջողություններով, որ վերջին տաս տարում ձեռք են բերվել երկրի տնտեսական, քաղաքական և գաղափարական կյանքի ասպարեզում:

Անցած տասնամյակի վեհությունը ակնառու կերպով երևում է Սովետական Հայաստանի օրինակով:

Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը վերջին տասը տարում աճեց 2,6 անգամ, այդ թվում՝ քիմիական արդյունաբերության ծավալը՝ 3,6 անգամ, մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության ծավալը՝ 5,3 անգամ: 1953 թվականից մինչև 1963 թվականը հանրապետության արդյունաբերությունը 2,5 անգամ ավելի արտադրանք է թողարկել, քան 1921 թվականից մինչև 1952 թվականը:

Հիշյալ ժամանակամիջոցում կառուցվել և շահագործման են հանձնվել 75 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն և 2 միլիոն 817 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն՝ նախորդ 32 տարվա մեկ միլիոն 907 հազար քառակուսի մետրի դիմաց: Ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումները երկու անգամ գերազանցել են 1921—1952 թվականների ներդրումներին:

Զգալիորեն աճել է գյուղատնտեսական մթերքների արտադրությունը: 1953 թվականից մինչև 1962 թվականը մսի արտադրությունն ավելացավ 63 տոկոսով, կաթինը՝ 86 տոկոսով, բրդինը՝ 60 տոկոսով, ձվինը՝ 125 տոկոսով: Նույն ժամանակամիջոցում ապրանքաշրջանառությունն աճեց 2,3 անգամ: Մեծ հաջողություններ են ձեռք բերվել հանրապետության բնակչության նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման գործում:

Պլենումն ընդգծեց, որ հանրապետությունում կոմունիստական աշխատանքի շարժմանը մասնակցում են ավելի քան 105 հազար մարդ, 93 արդյունաբերական ձեռնարկություն, 538 բաժանմունք, հերթափոխ և տեղամաս, հազարավոր բրիգադներ: Նրանցից կոմունիստական աշխատանքի հարվածայինների և կոլեկտիվների բարձր կոչմանն են արժանացել արդեն մոտավորապես 25 հազար մարդ, 123 բաժանմունք, հերթափոխ ու տեղամաս, 1.164 բրիգադ: Տարեցտարի աճում է ռացիոնալիզատորների ու գյուտարարների բանակը, բարձրանում է նրա դերը էկոնոմիկայի զարգացման և զանգվածների աշխատանքային դաստիարակության գործում: 1962 թվականին և 1963 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում կային 14.048 ռացիոնալիզատոր ու գյուտարար: Այդ ժամանակամիջոցում արտադրության մեջ արմատավորվել են 12.824 ռացիոնալիզատորական առաջարկ և 13 գյուտ, որոնք տվել են 11 միլիոն 599 հազար ռուբլու տնտեսական օգուտ:

Պլենումը կանգ առավ երիտասարդության հետ կատարվող դաստիարակչական աշխատանքի հարցերի վրա: Խոսվեց ի բարօրություն հայրենիքի տասնյակ և հարյուր հազարավոր պատանիների ու աղջիկների անձնվեր աշխատանքի, կոմունիզմի վեհ գաղափարներին նրանց անսահման նվիրվածության մասին: Ընդգծվեց, որ արդիականության հարցը կարևորագույններից մեկն է մեր գրականության մեջ: Ստեղծագործության գեղարվեստական արժեքի չափանիշն այն է, թե նա որքան ճշտորեն է արտացոլում դարաշրջանը, ժողովրդի կյանքը: Գեղարվեստական ստեղծագործության արդիականությունը դարաշրջանի վերարտացոլումն է, պատմությունն ստեղծող մարդու կերպարի ստեղծումը: Դրանով գրողները դառնում են հասարակական կյանքի ակտիվ մասնակիցներ:

Գրականության հասարակական նշանակությունը, նրա դերը ժողովրդի հոգևոր կյանքում երբեք այնպիսի ուժով չէին արտահայտվել, ինչպես արտահայտվեցին Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո: Հեղափոխությունը դարձավ գրականության և ժողովրդի միասնության հիմքը, անսահման հնարավորություններ ստեղծեց սոցիալիստական ռեալիզմի զարգացման համար: Գրականության և արվեստի աշխատողները միշտ պետք է հիշեն Վ. Ի. Լենինի իմաստուն խոսքերն այն մասին, որ գեղարվեստական ստեղծագործությունը պետք է օգուտ բերի ընթերցողին, նրան օգնի հասկանալու մեր իրականության մեծ իրադարձությունները, դառնալու կյանքի դասագիրք:

Պլենումը նշեց, որ վերջին տարիներին ուժեղացել է կապը արտասահմանյան հայ առաջադիմական կազմակերպությունների հետ: Գրականության, արվեստի և սպորտային կազմակերպությունների ներկայացուցիչները սկսել են ավելի հաճախակի մեկնել արտասահմանյան հայ գաղութները, որ նպաստեց հայ առաջադիմական կազմակերպությունների համախմբմանը սփյուռքում դաշնակների և նրանց ստահոդ հակասովետական պրոպագանդայի դեմ մղվող պայքարում:

Հայաստանի կառավարությունը մեծ աշխատանք է կատարել արտասահմանից հայերի կազմակերպված զանգվածային հայրենադարձության գործում: Արդեն շատ հայեր են հայրենադարձվել Կիպրոսից, Միացյալ Արաբական Հանրապետությունից և Իրանից, և շատ հազարներ անհամբերությամբ պատրաստվում են վերադառնալու Սովետական Հայաստան, որը սփյուռքահայերի միակ հայրենիքն է: Եվ այսուհետև էլ հոգատարություն կցուցաբերվի օտարության մեջ ապրող մեր հայրենակիցների նկատմամբ և կշարունակվի նրանց հայրենադարձության կազմակերպումը: Նոր քաղաքացիների նկատմամբ կցուցաբերվի մեծ ուշադրություն և օգնություն, որ նրանք մեր կյանքին որքան կարելի է շուտ հաղորդակից դառնան և ակտիվորեն մասնակցեն կոմունիստական շինարարությանը:

Պլենումը միաժամանակ նշեց գաղափարական բնագավառում եղած լուրջ թերություններն ու բացերը:

Հայաստանի կոմպարտիայի Կենտրոնական Կոմիտեի պլենումը որոշեց, որ մեր հանրապետության պարտիական կազմակերպությունները լայն աշխատանք կծավալեն ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի հունիսյան պլենումի որոշումները կենսագործելու համար, արմատապես կբարելավեն ամբողջ գաղափարական աշխատանքը և կապահովեն զանգվածների քաղաքական ու աշխատանքային ակտիվության նոր վերելք մեր երկրում կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարում:

1550 - Ա. Հ.
8012-63
Гос. Библиотека ՀԱՍՌ-Арм.ССР
digitised by A.R.A.R.@



Յու. Վինոգրադով. ՌՍԴԲԿ II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ։

ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Հ. ԻՆՃԻԿՅԱՆ

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը բոլորեց իր գոյության վաթսուն տարին։ Մարդկային պատմության մեջ դժվար թե լինի մեկ ուրիշ կուսակցություն, որին հաջողվեր այնպիսի իմաստությամբ և հետևողական կերպով հասնել դրած նպատակներին, ինչպես այն իրագործում էր բոլշևիկների կուսակցությունը իր անցած՝ պրոլետարական պետության ստեղծման և սոցիալիստական հասարակության կառուցման դժվարին ու պանծալի ճանապարհին։

Բոլոր ժամանակների և ժողովուրդների լավագույն մարդկանց երազը՝ կոմունիզմի պայծառ գաղափարների իրականացումը՝ շնորհիվ բանվորական կուսակցության գործունեության ու պայքարի դառնում էր ռեալ, դառնում կենսական։ Ու չնայած դժվարություններին, պարտություններին և հալածանքին, կոմունիստական շարժումը աճում էր, ծավալվում, առնանում։

Ընդամենը 9 մարդ հավաքվեց Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության առաջին համագումարին՝ 1898 թվականին Մինսկում։ Սակայն ընտրված կենտրոնները ձերբակալվեցին և պարտիան որպես միասնական կազմակերպություն չստեղծվեց։ Դեռ ավելին։ Եվրոպայի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում գլուխ բարձրացրած օպորտունիզմը՝ հանձինս Բեռնշտայնի և նրա հետևորդների, ունեցավ իր տարատեսակը Ռուսաստանում, որը կոչվում էր «էկոնոմիզմ»։ Բուրժուազիայի գաղափարական ազդեցության այս տարածողները կողմնակից էին բանվորական շարժման տարերային զարգացմանը, դեմ էին հեղափոխական միասնական կուսակցության ստեղծմանը։ Իսկ բանվորական շարժումը բուռն զարգացման շրջան էր մտնում։ Ահա այսպիսի պայմաններում Ռուսաստանի մարքսիստները՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ և նրա ստեղծած «Իսկրա» թերթի օգնությամբ նախապատրաստեցին կուսակցության հերթական երկրորդ համագումարի հրավիրումը։

Այն հավաքվեց 1903 թվականի հուլիսի 30-ին Բրյուսելում, այնուհետև ոստիկանական հետապնդումներից խուսափելով իր նիստերը տեղափոխեց Լոնդոն։ Ինչպես հայտնի է, այն դարձավ բոլշևիկների կուսակցության հիմնադիր համագումարը և որպես այդպիսին՝ համաշխարհային բանվորական շարժման համար հանդիսացավ շրջադարձային կետ։

Համագումարի գլխավոր խնդիրն էր, նշել է Վ. Ի. Լենինը, ստեղծել իրապես հեղափոխական բանվորական

digitised by A.R.A.R.@



Առաջին ռուսական ճեղափոխության նախօրյակին, 60 տարի առաջ, Լոնդոն լեռներում, կազմակերպվեց Անդրկովկասի և Հայաստանի լենինյան–իսկրայական ճնշագույն կազմակերպություններից մեկը՝ Հաղպատի կոմունիստական բջիջը, որը իր գոյության առաջին իսկ օրերից, ՌՍԴԲԿ II համագումարից հետո, մնկընդմիշտ կանգնեց բոլշևիկյան դիրքերում: Դա այն կազմակերպություններից մեկն էր, որը պանծալի էջեր գրեց Անդրկովկասի և Հայաստանի աշխատավորների ճեղափոխական շարժման պատմության մեջ: Հաղպատի պարտիական կազմակերպության 60-ամյակը ճանդիսավոր կերպով նշեցին մեր ճանրապետության աշխատավորները:

Նկատում՝ այն չենք, ուր տեղի է ունեցել Հաղպատի կոմունիստական բջջի առաջին ժողովը:

Լուսանկար՝ Նեմրութի

կուսակցություն այն սկզբունքային և կազմակերպական հիմունքներով, որոնք առաջադրեց և մշակեց «Իսկրա»-ն:

Համագումարի հենց առաջին նիստերից երևաց, որ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները միատարր չեն: 26 սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններից ներկայացված 43 պատգամավորներից՝ 33-ն էին «Իսկրա»-ի կողմնակիցներ, որոնց մի մասը ևս կայուն իսկրայականներ չէին: Հետևաբար տարբեր խմբավորումների միջև մղվեց չափազանց սուր պայքար բոլոր հիմնական հարցերը քննարկելիս: Այսպես, երբ Վ. Ի. Լենինի առաջարկով, համագումարը անցավ կարևոր մի հարցի՝ հրեական բանվորական միության՝ Բունդի հնտագա ինքնուրույն գոյության նպատակահարմարության հարցի քննարկմանը, մինոլորտը շիկացավ, բախվեցին զանազան երանգների ներկայացուցիչներ: Լենինի և Պլեխանովի ղեկավարությամբ պատգամավորների բացարձակ մեծամասնությունը գտնում էր, որ բանվորական կուսակցությունը պետք է ընդգրկի բոլոր գոյություն ունեցող սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, որոնք այսուհետև կարող են գոյություն ունենալ միայն որպես միասնական կուսակցության տեղական կազմակերպություններ: Բունդը չէր համաձայնվում այդ կարծիքի հետ և պահանջում էր ինքնավար կազմակերպության իրավունքներ: Բունդին հետևեցին ուրիշները: Վեճերը եղան երկարատև և սուր:

Կարգապահության և կազմակերպվածության բոլոր կողմնակիցները, Լենինի գլխավորությամբ, կարողացան հասնել այն բանին, որ համագումարը հատուկ որոշում կայացրեց և պարտադրեց կազմալուծել բոլոր այն կազմակերպությունները, որոնք կոչվելով սոցիալ-դեմոկրատական, ցանկանում էին մնալ ինքնուրույն, չմտնել միասնական կուսակցության կազմի մեջ:

Նման վճռական պայքարը գոյություն ունեցող տարընթացության դեմ կանխորոշեց համագումարի այլ կարևոր հարցերի քննարկման բախտը: Այսպես. երբ սկսվեց կուսակցության ծրագրի քննարկումը, համարյա ամբողջ համագումարը ցուցաբերեց միասնություն և միայն օպորտունիստների մի փոքրաթիվ խումբ փորձեց վիճարկել ծրագրի կարևորագույն դրույթները: Վեճի առարկա դարձան նախ պրոլետարիատի դիկտատուրայի մասին ծրագրում եղած ձևակերպումները:

«Էկոնոմիստների» կարծիքով պրոլետարական դիկտատուրայի պահանջը չի դրվել Արևմտյան Եվրոպայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ծրագրերում, որովհետև կապիտալիզմի զարգացմանը համընթաց տեղի է ունենում բանվոր դասակարգի տնտեսական վիճակի բարելավում և առանց դիկտատուրայի՝ անցումը դեպի սոցիալիզմ: Մենք հնարավորություն ունենք, հենվելով տասնյակ տարիների հեղափոխական փորձի վրա հերքել թե պատմության գիրկն անցած օպորտունիստներին և թե կապիտալիզմի այսօրվա ջատագովներին, որոնք կրկնելով իրենց նախորդներին՝ բացատում են դասակարգային պայքարի անհրաժեշտությունը ու գովերգում իրապես գոյություն չունեցող «ժողովրդական կապիտալիզմը»: Նման տեսակետներ պաշտպանողները բնականաբար դեմ դուրս եկան ՌՍԴԲԿ երկրորդ համագումարում և մեր ժամանակներում դեմ են մարքսիզմի ծրագրային այն դրույթին, որ բանվոր դասակարգի շարժման միակ և արժանի ղեկավարը կարող է և պետք է լինի կուսակցությունը: Կյանքը ինքը հաստատեց ու շարունակում է ցույց տալ մարքսիզմի այս դրույթի ճշմարտությունը:

Ռուսաստանի նման երկրում կարևորագույն հարցերից մեկը գյուղացիության հարցն էր, որը չափազանց սուր բնույթ ուներ և պահանջում էր իր լուծումը: Վ. Ի. Լենինը հատուկ ուշադրությամբ մշակել և պաշտպանում էր կուսակցության ագրարային ծրագիրը, որի պահանջն էր գյուղացիական կոմիտեների ստեղծումը ու նրանց օգնությամբ հողային հարցի լուծումը սկսած ճորտատիրության մնացուկների ոչնչացումից մինչև խոշոր հողատերերի, պետության, վանքերի և այլ սեփականատերերի հողերի բռնագրավումը և նրանց հանձնումը գյուղացիներին: Այս ճանապարհով միայն հնարավոր դարձավ ապահովել բանվոր դասակարգի և գյուղացիության ամուր դաշինքը հաղթանակած սոցիալիզմի երկրներում: Նույն ձևով այդ հարցը դրված է նաև Արևելքի և Արևմուտքի բոլոր այն երկրներում, որտեղ գյուղացիությունը կազմում է ազգաբնակչության բացարձակ կամ զգալի մեծամասնությունը:

Ոչ պակաս կարևոր էր բազմազգ Ռուսաստանի համար ազգային հարցի ճիշտ լուծումը մանավանդ այն պայմաններում, երբ ցարիզմը գործում էր «բաժանիր, որ տիրես» հայտնի սկզբունքով: Համագումարը երկար պայքարից հետո ընդունեց և հռչակեց ազգերի ինքնորոշման իրավունքը, որը կազմեց կոմունիստական կուսակցության ծրագրի կարևոր մասը և հրաշալի գործադրումը գտավ սովետական երկրում:

Կուսակցության 2-րդ համագումարը 6 նիստ նվիրեց կանոնադրության քննարկմանը, նրա տարբեր հոդվածների ճիշտ ձևակերպումներին: Այստեղ բախվեցին Լենինի և Մարտովի հայտնի տեսակետները կուսակցության անդամի պարտականությունների վերաբերյալ: Ի հակադրություն Մարտովի, Լենինը կողմնակից էր ամուր՝ իր կարգապահությամբ ու միասնականությամբ մինչև այդ եղած սոցիալ-դեմոկրատական կուսակցություններից տարբերվող նոր տիպի կուսակցության ստեղծմանը: Ինչպես նա հետագայում նշեց, հարցի էությունն այն էր, որ անհրաժեշտ էր ստեղծել կուսակցություն, որի հիմքում դրված լիներ ցենտրալիզմի գաղափարը: Դժվարին պայքարը այս հարցում ևս վերջացավ լենինյանների հաղթանակով:

digitised by A.R.A.R.@

Քայլ առ քայլ, սուր պայքարի պայմաններում, կուսակցության երկրորդ համագումարը ընդունեց ծրագիրը, կանոնադրությունը, ընտրեց կենտրոնական կոմիտե և «Իսկրա» թերթի խմբագրական կոլեգիան։ Պայքարի ընթացքում Վ. Ի. Լենինի շուրջը համախմբվեցին բոլոր «կայուն իսկրայականները», որոնք համագումարի վերջում կազմեցին մեծամասնություն։ Այսպես հաղթանակեց լենինյան գիծը և ստեղծվեց մեծամասնականների, բոլշևիկների կուսակցությունը։

Իր գոյության 60 տարիների ընթացքում Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը մեծագույն հաջողությամբ ղեկավարեց Ռուսաստանի հեղափոխական բանվոր դասակարգի և ժողովրդական մասսաների պայքարը ցարիզմի ու կապիտալիզմի դեմ և նվաճեց Հոկտեմբերյան մեծ հաղթանակը։

Մարքսիզմ-լենինիզմի դրոշի ներքո նա կարողացավ հաղթահարել բոլոր դժվարությունները և ստեղծել նոր՝ աշխատավորության շահերը պաշտպանող սոցիալիստական պետություն՝ կազմված իրավահավասար սովետական ազգերի միությունից։ Կոմունիստական կուսակցության առաջ ծառացան ժամանակին հետամընաց Ռուսաստանի նոր սոցիալիստական տնտեսության զարգացման բարդ ու դժվարին խնդիրները, որոնց հաջող լուծումը Սովետական Միությանը դարձրին աշխարհի հզորագույն պետություններից մեկը։

Կոմունիստական կուսակցությունը կարողացավ կազմակերպել փառապանծ հաղթանակը ֆաշիզմի և ռեակցիայի ուժերի հանդեպ երկրորդ աշխարհամարտի տարիներին։ Նա իր մեջ ուժ գտավ հաղթահարելու ներքին հակասություններն ու դժվարությունները և մնալու իր դիրքերում որպես կոմունիզմ կառուցող սովետական ժողովուրդների կազմակերպիչն ու առաջնորդը։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ անընդհատ հաջողությունների է հասել ժողովրդական տնտեսության, գիտության ու տեխնիկայի զարգացումը մեր երկրում։ Բավական է հիշատակել, որ սովետական արդյունաբերությունը ութ օրում արտադրում է այնքան, ինչքան Ռուսաստանի արդյունաբերությունն արտադրում էր ամբողջ տարում։ Տեխնիկական և արդյունաբերական հզոր վերելքն են վկայում սովետական տիեզերական նավերի և տիեզերագնացների, ուրիշների կողմից դեռևս անկրկնելի հաջողությունները։

Մեծ է և կարևոր Սովետական Միության կոմունիստական կուսակցության դերը միջազգային կոմունիստական շարժման և ազգային-ազատագրական պայքարի մեջ։ Նրա բազմամյա փորձն ու իմաստությունը, խորհուրդներն ու օգնությունը եղբայրական կոմունիստական և բանվորական կուսակցություններին, որոնք գործում են աշխարհի գրեթե 90 երկրում, դժվար է գերագնահատել։

Սոցիալիստական համաշխարհային սիստեմի ստեղծումը, սոցիալիզմի և կոմունիզմի գաղափարների տարածման հզոր թափը, բանվորական և դեմոկրատական շարժումների լայն ծավալը, ազգային-ազատագրական շարժումների հաղթանակի շնորհիվ իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզումը, հանուն խաղաղության պայքարի կողմնակիցների համաշխարհային նշանակալից հաջողությունները, այս բոլորը աներկբայորեն կապված են Սովետական Միության և նրա ղեկավար ուժը հանդիսացող կոմունիստական կուսակցության հաղթանակների հետ։

Ահա այդպիսին է Վ. Ի. Լենինի ստեղծած և ղեկավարած բոլշևիկների կուսակցության անցած 60-ամյա պանծալի ուղին։

Սովետական Միության կոմունիստական պարտիայի 60-ամյակի պատվին Երևանի «Հաղթանակի» զբոսայգում կայացավ էրեմ սերունդների ներկայացուցիչների ավանդական ճանդիպում։ Տեղի ունեցան էրգ, պարեր, արտասանություն, զվարճալի խաղեր։ Վերջում վառվեց վաթսուն խարույկ։ Նկարում՝ Հանդես է գալիս Հայֆիլհարմոնիայի պարի անսամբլը։

Լուսանկար՝ Նեմրութի



digitised by A.R.A.R.@



Եղվարդի բերքառատ դաշտերում շարունակվում է ցորենի բերքահավաքը:

Ամպերը կուտակվում էին Արագածի գագաթներին, սողում էին ցած վիշապների նման և դուրս լողալով կապուտակ երկինքը արագ խտանում էին երկնակամարում: Շուտով մթնեց նաև Արա լեռան հարթավայրը: Ջամիները սուրացին անսանձ ոստյուններով, ուժգնորեն դեպի գետին թեքելով հեռվում կանաչին տվող Աշտարակի փարթամ այգիների ծառերը, ահաբեկելով կանաչը, ծաղիկները, որ երփներանգ գորգերի նման ալեկոծվում էին հովիտներում:

Սակայն Եղվարդի մեքենափորձարկման կայանի ընդարձակ բակում, ուր մենք ժամանեցինք, բնության այդ կայրագին խաղը ամենևին ապդեցություն չունեցավ:

Աշխույժ էր բակը, աշխատանքային եռուզեռով լի: Մի կողմում հավնդում էին տրակտորները, որոնցից մի քանիսը ահռելի որոտ արձակելով, շտապեցին դեպի դաշտերը: Մի ուրիշ տեղում փորձարկման համար շարժման մեջ էր դրվում Դոնեցկից Եղվարդի կայանն ուղարկված խոր վարի հսկա գութանը, որ առաջավոր տրակտորիստ Խաչիկ Տիգրանյանի տրակտորը այս ու այն կողմ էր շարժում:

Հանկարծ բակը լցվեց երիտասարդական կրնգուն ձայներով. դրանք Երևանի գյուղատնտեսական տեխնիկումի սաներն էին, որ իրենց օրվա գործնական աշխատանքները կայանում կատարելուց հետո աշխույժով դուրս թափվեցին շենքից և սկսեցին իրենց տեղերը գրավել Երևան մեկնող մարդատար ավտոմեքենայում:

Ասենք՝ Եղվարդի մեքենափորձարկման կայանը բացի իր անմիջական նշանակությունն ունենալուց, նաև գյուղատնտեսական կադրերի դարբնոց է, որտեղ իրենց երեք ու կես ամսյա պրակտիկան են անցնում նաև Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետի վերջին կուրսերից 70 ուսանողներ, որոնք բնակվում են հենց կայանում:

Գլխավոր ինժեներ Մարտին Փափյանին մենք հանդիպեցինք կայանի գրասենյակից դուրս գալիս: Ջահել, թիկնեղ, բարձրահասակ, առնական դիմագծերով, նա գտնվում էր մի խումբ ինժեներների ու բրիգադավարների շրջապատում, որոնք նրանից ցուցումներ ստացած շատ շուտով հեռացան տարբեր կողմեր, թողնելով նրան մենակ մեզ հետ:

— Հիմա արդեն ձեր տրամադրության տակ եմ,— դիմեց նա մեզ՝ դեմքին հաճելի ժպիտ խաղացնելով:

— Մեզ հետաքրքրում է մեքենափորձարկման կայանը: Ծանոթացրեք մեզ նրա աշխատանքին: Մեզ հայտնի է, որ Սովետական Միության մեջ գործում է միայն 28 այսպիսի կայան:

— Դուք չեք սխալվել: Ես ձեզ կծանոթացնեմ միայն կայանի աշխատանքներին: Բայց ահա Եղվարդի փորձնական տնտեսությանը կծանոթացնի մեզ մոտ տնտեսության կառավարիչ Վաչագան Միքայելյանը: Ահա նա, ծանոթացեք խնդրեմ:

Երկինքը հանկարծ պոռթկաց ահավոր ամպրոպից և անձրևի խոշոր կաթիլները միանգամից տեղացրեցին ցած: Շտապեցինք կայանի դիրեկտոր, ինժեներ-մեխանիկ Ռավմիկ Պետրոսյանի աշխատասենյակը. նա գործով այդ օրը մեկնել էր Երևան:

*

...Ու մեր առջև բացվեց կայանի ծավալուն աշխատանքների և փայլուն հեռանկարների մի հոյակապ պատկեր:

Ահա պատկերացրեք. Սովետական Միության գյուղատնտեսական մեքենաշինության գործարաններից կոլտնտեսություններին և սովետական տնտեսություններին ուղարկվում էին գյուղատնտեսական մեքենաներ: Այդ մեքենաները ստացվում էին, բաշխվում, բայց ահա լավ չէին գործում, որովհետև դրանք ամենևին չէին հարմարեցված Հայաստանի տեղական պայմաններին:

Ինչպե՞ս վարվել: Թողնել այդպես, այլևս անհանդուրժելի էր. թափվում էր

ՄԵՆ ԼԵՌԱՆ ՍՏՈՐՈՏՈՒՄ

Գ. ՍԵԴՐԱԿՅԱՆ



digitised by A.R.A.R.@

հսկայական աշխատանք, տեղերում կուտակվում էին մեքենաները, ժողովրդական հսկայական բարիքը մնում էր անօգտագործելի: Ի՞նչ անել, ո՞ւր տանել, երբ դրանք չէին արդարացնում իրենց:

Լուծումը գտնվեց, երբ 1961 թվականի մայիսին Եղվարդի սովետական տնտեսության հիմքի վրա ստեղծվեց Հայաստանի պետական մեքենափորձարկման կայանը: Նրա խնդիրները պարզ էին. մանրակրկին ստուգել, փորձարկել գյուղատնտեսական նորագույն մեքենաներն ու գործիքները: Պարզել դրանց կարողությունը, աշխատունակությունն ու պիտանիությունը Հայաստանի պայմաններում: Օգնել հանրապետական կազմակերպություններին, որ ընդրանք գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների ճիշտ հայտեր ներկայացնեն և մանավանդ փորձարկվի արդեն արտադրության մեջ եղած մեքենաների որակը: Փորձարկման արդյունքներն իրենց առաջարկներով ներկայացնել գործարաններին, կոնստրուկտորական բյուրոներին՝ նկատված թերությունները վերացնելու, ավելի արտադրողական ու կատարելագործված դարձնելու դրանք:

Եվ ահա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ սկսեցին ստացվել Միության շատ քաղաքներից՝ Օդեսայից, Ռիշնից, Ռոստովից, Գորկուց, Լենինգրադից, Լվովից, Ջբիլիսիից, Բաքվից և այլ քաղաքներից:

Անցած երկու տարին մեծ փորձ է հաղորդել կայանի անխոնջ կոլեկտիվին: Նա իր 16 ինժեներների, 7 տեխնիկ-մեխանիկների, 6 գյուղատնտեսների, լաբորանտների և այլ աշխատողների միջոցով, որոնց առավելագույն մասը ավարտել է Հայաստանի գյուղատնտեսական ուսումնական հաստատությունները, փորձարկման արդեն ցգալի աշխատանք է կատարել:

Բերենք մի քանի օրինակ միայն:

Կայանը Կիրովոգրադի «Կրասնայա զվեզդա» գործարանից պարարատանյութ շաղ տվող մեքենա ստացավ: Փորձարկումը ցույց տվեց, որ այդ մեքենան լուրջ թերություններ ունի: Արդյունքը ներկայացվեց գործարանին: Եվ ի՞նչ: Շուտով ստացվեց այդ մեքենայի տարբերակը. թերություններն արդեն վերացվել էին: Կայանը կրկին փորձարկեց այն և նրա տված դրական գնահատականի հիման վրա գործարանն արդեն անցել է այդ մեքենայի վանգվածային արտադրության:

Օդեսայի «Հոկտեմբերյան հեղափոխություն» գործարանի՝ այգիների, տընկարանների, անտառաշերտերի հողամշակության համար ստեղծած նոր մեքենային Եղվարդի կայանը փորձարկումից հետո վատ գնահատական չըտվեց: Նշվեց միայն ամուր հողերում աշխատելու նրա անհրաժեշտ ամրության պակասը: Եվ գործարանը, հիմնվելով կայանի ինժեներական կազմի եզրակացության վրա, բարելավում է այդ օգտակար մեքենան:

Այդպիսի մի օրինակ կարող է ծառայել նաև Լենինգրադում արտադրված քարհավաք բավականին հզոր մեքենայի վերաբերյալ կայանի տված եզրակացությունը: Մեքենան օգտակար է, բայց ահա թերություն ունի: Եվ գործարանը այն ավելի է կատարելագործում, ավելի է հարմարեցնում Հայաստանի առանձնահատուկ պայմաններին:

Այսպիսի օրինակներ դարձյալ կարելի է բերել: Դրանք վկայում են Եղվարդի մեքենափորձարկման կայանի, այդ բոլորովին նոր, երիտասարդ մասնագիտական ուժերով հագեցված գիտական ձեռնարկության առօրյան, որ այնքան գեղեցիկ է և ուսանելի:

Եղվարդի կայանը փորձարկման իր աշխատանքները կատարելու համար ստեղծել է հողի մշակման, քարհավաքի, խաղողագործական և այգեգործական, վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարող, տեխնիկական չափումների, ագրոտեխնիկական պահանջների, մեքենաների տնտեսական շահավետությունն ու պիտանիությունը բացահայտող յոթ լաբորատորիաներ:

Կայանը շնորհիվ իր արդյունավետ գործունեության արդեն լայն հեղինակություն է վայելում: Բավական է նշել, որ այս տարի նա փորձարկելու է 50 նոր և արտադրության մեջ գտնվող 27 մեքենա ու գործիք:

Մեր հանրապետությունը քարքարոտ շատ տարածություններ ունի: Հենց քարքարոտ են Եղվարդի ոչ այնքան հեռավոր մատույցները: Իսկ դրանք փոքրածավալ հողեր չեն: Եղվարդն ունի 8.800 հեկտար հողային տարածություն, որից միայն 3.700-ն են վարելահողեր: Մնացածը խոպան ու քարքարոտ հողեր են: Ասենք՝ քանի որ վարելահողերը լայն մշակում չեն ստացել, հետևապես դրանք էլ կարոտ են ավելի խորը մշակման:

Այսպիսով քարքարոտ հողերի յուրացման խնդիրը բավականաչափ հրատապ է ու անհետաձգելի: Եվ միանգամայն հասկանալի է, որ քարհավաք նոր մեքենաների ստեղծմամբ են զբաղված նաև մեր հանրապետության գլխի թվով գիտնականներ ու կոնստրուկտորներ: Այս տարի կայանը փորձարկման է ենթարկելու նաև «Հայգյուղտեխնիկա»-ի վեց մեքենաներն ու սարքավորումները, ինչպես նաև Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի դոկտոր-պրոֆեսոր Սմբատ Սահակյանի երկու քարհավաք մեքենաները:

*

Լայնարձակ ու գեղեցիկ է Արա լեռան հարթավայրը: Խճուղու երկու կողմերում դեպի շատ հեռուն տարածվող հացահատիկային ծփուն արտերը, նորաբաց այգիները՝ թիկնած հենասյուներին, պտղատու այգիները, բանջարանոցները — այս ամբողջ տնտեսությունը Եղվարդի մեքենափորձարկման կայանինն է:

Իսկ Եղվարդի տնտեսությունը, որ սովխոզային տիպի տնտեսություն է, իրենից մի կատարյալ լաբորատորիա է ներկայացնում, ու կայանը հենց արտադրական պրոցեսում է կատարում իր գյուղատնտեսական մեքենաների փորձարկումների մի մասը: (Մյուս մասը փորձարկվում է հանրապետության տարբեր շրջանների կոլտնտեսություններում և սովետական տնտեսություններում):

Բավականաչափ խոշոր է Եղվարդի տնտեսությունը: Ունի 870 հեկտար խաղողի այգիներ: Նոր են դրանք՝ 1959 թվականից: Եվ չնայած դրան, անցյալ տարի այգիներից 80 տոննա խաղող ստացվեց: Այս տարի սպասվում է ավելի շատ՝ 500 տոննա: Իր այդ այգիներում կայանը այս տարի փորձարկելու է մի շարք մեքենաներ:

Առատ բերք է տալու հապար հեկտարի ցանքատարածությունը՝ 30 ցենտներ հեկտարից: Եղվարդի տնտեսությունը զբաղվում է նաև անասնաբուծությամբ և մեղվաբուծությամբ, բանջարա-բոստանային մշակույթների մըշակմամբ, թեև այդ չէ նրա հիմնական զբաղմունքը:

Եվ այդ ամբողջ աշխատանքը կատարում են սովետական տնտեսության մարդիկ: Միավորված 21 բրիգադներում նրանք ջանադիր գործում են կայանում ու տնտեսության մեջ:

Եղվարդում առաջավոր շատ մարդիկ կան: Տրակտորային երկու բրիգադներում իրենց հիանալի աշխատանքով աչքի են ընկնում կոմպլեքսային բրիգադի բրիգադավար Գարուշ Սիմոնյանը, տրակտորիստներ Բաբկեն Ղապարյանը, Գուրգեն Մեսրոպյանը, Ալատ Մկրտչյանը, Վրեժ Միքայելյանը և ուրիշներ, որոնք սիրում են իրենց աշխատանքը, ապրում են իրենց աշխատանքով: Ոչ պակաս առաջավոր են նաև մարդիկ տնտեսության մեջ՝ այգեգործներ Վանուշ Մարգարյանը, Օֆիկ Հարությունյանը, Օնիկ Ալավերդյանը, դաշտավար Ժորնիկ Վարդանյանը, պտղաբույծ Տորիկ Զաքարյանը, կրթվորուհի Սաթենիկ Զաքարյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց տնտեսության



Եղվարդի մեքենափորձարկման կայանի գլխավոր ինժեներ Մարտին Փափազյանը (կենտրոնում) ցուցումներ է տալիս տեխնիկ փորձարկող Վ. Գեղամյանին և դիտարկող Մարիամ Սաֆարյանին:

→

← Եղվարդի մեքենափորձարկման կայանի բակում: Խարիսխ երևում են ներքի դրված փորձարկման ենթակա գյուղատնտեսական մեքենաները:



digitised by A.R.A.R.@

բարգավաճման համար չեն խնայում ո՛չ իրենց հորդաբուխ եռանդը, ո՛չ իրենց անսպառ ուժերը:

*

Անձրևը դադարել էր: Կապուտակ երկինքն էր շողում մեր գլխավերևում: Քայլում էինք գյուղի փողոցներով: Հին Եղվարդը արդեն կերպարանափոխվում է, հետզհետե դեն նետելով իր հնոտիները: Նոր դպրոց, նոր մանկապարտեզ, նոր ակումբ, որի ինքնագործ խմբակներում աշխույժով մասնակցում են հարյուրից ավելի մարդիկ, անհատական նոր, գեղեցկատես բնակարաններ...

Սակայն ի՞նչ համեմատություն կարող է լինել Եղվարդի այժմյան վիճակի և այն մեծ հեռանկարների միջև, որ պատրաստվում է նրա համար: Կայանի ու տնտեսության բանվորական հսկայական կոլեկտիվի համար ստեղծվելու են կյանքի, աշխատանքի ու կենցաղի առավել բարելավ պայմաններ:

Նախատեսվում է բոլորովին նոր տեսք տալ Եղվարդին: 125 հեկտարի փոխարեն (որ այժմ կբաղեցնում է գյուղը) 25 հեկտար տարածության վրա կկառուցվի քաղաքատիպ ավան՝ բոլոր հարմարություններն ունեցող 3—4 հարկանի բնակելի տներով: Ավանը ունենալու է տնտեսական, հասարակական ու կենցաղային շենքեր, մշակութային օջախներ, հյուրանոց: Ավանը 8,5 կիլոմետր նոր խճուղով իր ամենակարճ հաղորդակցությունը կունենա Երևանի հետ:

Եղվարդում կատարվելու է հսկայական խաղողի սկզբնական մշակումը գինու գործարանի համար: Կառուցվելու են սառնարանային սարքավորումներ խաղողը ձմեռը պահելու համար: Ավանն ունենալու է երեք խոշոր ջերմոց, որոնք բանջարեղեն են մատակարարելու մայրաքաղաքին:

Պահածոների գործարանի կառուցմամբ կմշակվեն պտուղները, կպատրաստվեն բավմապիսի կոմպոտներ, մուրաբաներ: Կընդլայնվեն պտղատու այգիները, ցանքատարածությունները: Խաղողի այգիները կընդգրկեն 1.500 հեկտար տարածություն: Եվ եթե Եղվարդի տնտեսությունը ներկայումս օգտվում է Արկնի—Շամիրամ ջրանցքի ջրից, ապա առաջիկա տարիներին նա ջուր կստանա նաև Ապարանի ջրանցքից, որ կառուցվելու է 1965 թվականին: Եղվարդի որոշ հողամասերի ոռոգմանը իր օգնությունը ցույց կտա նաև Ապարանի ջրամբարը:

Այս ամենը գեղեցիկ հեռանկարներ են, որոնք արդեն նախագծված են և անպայման կիրականացվեն: Այս տարի արդեն շարք կմտնի մի մասնաշենք իր սարքավորումներով, ուր կկենտրոնացվեն փորձարկման կայանի բոլոր յոթ լաբորատորիաները: Շահագործման կհանձնվի նորոգման արհեստանոցը: Ավելի արդյունավետ կաշխատի հենասյուների գործարանը, նա օրական 900 հենասյուն է արտադրում, որոնց մի մասը օգտագործվում է Եղվարդի այգիների համար, մյուսը տրվում սովետական այլ տնտեսությունների:

Եղվարդի մեքենափորձարկման կայանը մի գիտական ինստիտուտ է, ուր փորձարկվում, կյանքի ուղեգիր են ստանում գյուղատնտեսական շատ մեքենաներ ու գործիքներ: Նա գյուղատնտեսական մեքենաշինական գործարանների և կոնստրուկտորական բյուրոների լավագույն օգնականն է ու խորհրդատուն:

Նոր, տուֆակերտ շենք ունի Եղվարդի մանկապարտեզը: Այդ մանկապարտեզում դաստիարակվում են մեքենափորձարկման կայանի և տնտեսության բանվորների երեխաները, որոնք գտնվում են հոգատար պայմաններում: Նկարում՝ մանկապարտեզի երեխաները զվարճալի խաղերից հետո հանգստանում են:

Լուսանկարները՝ Գ. Գեորգյանի



Այս Հարի...

Մշակութային հետաքրքիր ու բազմաբովանդակ կյանքով է ապրում Լենինականը՝ մեր Հանրապետության երկրորդ ծաղկող ու բարգավաճող ոստանը: Վաղուց ի վեր այդ քաղաքը հայտնի է իր երաժշտական, թատերական և ժողովրդական ինքնագործունեության հարուստ ավանդներով: Լավ աշխատելու հետ մեկտեղ լենինականցիները գիտեն և լավ հանգստանալ: Նրանք սիրում են երգն ու երաժշտությունը, թատրոնն ու կինոն: Քաղաքի աշխատավորության սիրելի վայրերն են դարձել պետական դրամատիկ թատրոնը, Հայֆիլհարմոնիայի Լենինականի բաժանմունքը, տիկնիկային թատրոնը, կինոթատրոնները, բզբոսայգիները, մշակույթի տները, պլանետարին:

Քաղաքում գործում են ավելի քան հարյուր բանվորական ակումբ, 68 գրադարաններ-ընթերցարան, երաժշտական ու նկարչական մի քանի դպրոցներ: Սրանք ծաղկող քաղաքի մշակութային կյանքի միայն հիմնական օջախներն են, որոնց թիվը գնալով ավելանում, մեծանում է գրեթե ամեն տարի, ամեն ամիս: Վերցնենք թեկուզ միայն այս տարի. որքա՜ն ուրախալի նորություններ կան քաղաքում, որքա՜ն նոր բան է արվել...

Վերջերս Մայիսյան ապրատամբության անվան տեքստիլ կոմբինատի աշխատավորները հիանալի նվեր ստացան. բացվեց կոմբինատի վերակառուցված ակումբը, որը այսօր դարձել է ինչպես կոմբինատի, այնպես էլ քաղաքի մյուս ձեռնարկությունների աշխատողների հանգստի կազմակերպման լավագույն հաստատություններից մեկը:

Նորակառույց մշակութային այս պալատը ունի հիանալի հարմարություններ և հաճելի տպավորություն է թողնում այցելուների վրա: Երբ մտնում եք ճարտարապետորեն ձևավորված նախասրահը, սիրտներդ լցվում է խինդով: Ամեն ինչ այստեղ ձևավորված է ճաշակով և խնամքով: Աստիճանները տանում են ճեմասրահը, որի բարձր առաստաղից կախված բազմերանգ լուսամփոփները սրահում տարածում են հաճելի լուսավորություն: Գեղեցիկ է և ճեմասրահը. նրա անկյուններում դրված են ծաղիկներ ու ծաղկաթիթեր, որոնք ստեղծում են գարնան պատրանք:

Ակումբի զարդն է հսկայական դահլիճը: Դա քաղաքում եզակի է ոչ միայն իր մեծությամբ, այլև ձևավորմամբ: Այստեղ միանգամից կարող են ներկայացումներ կամ կինոֆիլմեր դիտել ավելի քան 600 հանդիսատես: Կիսափափուկ, հարմարավետ նստարանները թեքությամբ իջնում, հասնում են բեմին: Բեմը կառուցված է տեխնիկայի վերջին խոսքով

digitised by A.R.A.R.@



Լենինականի Կրուպսկայայի անվան պուրակում է գտնվում հայ մեծ երգահան Արմեն Տիգրանյանի կիսանդրին: Գործ՝ երիտասարդ քանդակագործ Խ. Իսկանդարյանի: Պատվանդանի ճեղինակն է երգահանի որդին, ճարտարապետ է. Տիգրանյանը:

ամեն ինչ ավտոմատացված է: Դահլիճին և բեմին շքեղ տեսք են տալիս բազմաթիվ լուսասարքերը, ճաշակով ձևավորված լուսամփոփիները:

Լավագույն հարմարություններ են ստեղծված և մանուկների համար: Տեքստիլագործների երեխաները այստեղ գտնում են ամեն ինչ՝ իրենց հանգիստը խելացիորեն կազմակերպելու համար: Երիտասարդության տրամադրության տակ են դրված համերգների, պարերի անցկացման հատուկ սրահներ ու սենյակներ: Հանձին տեքստիլ կոմբինատի բանվորական ակումբի՝ քաղաքը հարստացել է ևս մի նոր մշակութային օջախով:

Վերջին ժամանակների ծրնունդ է քաղաքի Օրջոնիկիձեի անվան հրապարակը, ուր գալիս և դադար են առնում քանի լայնահուն փողոցներ: Հրապարակի շուրջը բարձրանում են բազմաթիվ տուֆակերտ շենքեր և այդ ամենի համապատկերը լրացնում է

«Հայաստան» կինոթատրոնի շենքը. ար վերջերս կառուցվել է Լենինականի Օրջոնիկիձեի անվան հրապարակում:

Լուսանկարը՝ Ռ. Խոռենի

վեհորեն վեր բարձրացած նորակառույց կինոթատրոնի շենքը: Նրա ճակատին հսկայական տառերով գրված է մշակութային այդ նոր հաստատության անունը՝ «Հայաստան»:

Ոչ բարձր աստիճանները այցելուներին տանում են գեղեցիկ և ճաշակով կահավորված ճեմասրահը: Այստեղից հատուկ մուտքերով կարելի է մտնել գեղեցիկ դահլիճը, որը տեղավորում է 600 հանդիսատես: Դահլիճն ունի օդափոխիչ սարքեր, որոնք հնարավորություն են տալիս այնտեղ ըստեղծելու նորմալ ջերմաստիճան: Կինոթատրոնը ապահովված է հայրենական արտադրության առաջնակարգ սարքավորումներով:

Քաղաքի Կրուպսկայայի անվան պուրակում վերջերս հանդիսավոր պայմաններում բացվեց հայ ազգային առաջին օպերայի ստեղծող Արմեն Տիգրանյանի հուշարձանը: Մեծ երգահանի հայրենակիցների երախտագիտության վառ արտահայտություններից մեկն է դա:

Տիգրանյանի բրոնզյա կիսանդրին ներկայացնում է երգահանին ստեղծագործական ներշնչման պահին: Երբ նայում ես, թվում է, թե նորից ոգեշնչվելու է մեծ ստեղծագործողը և իր ձեռքի արտահայտիչ շարժումներով նորից կյանքի են կոչվելու նոր, գողտրիկ մեղեդիներ:

Արձանի բարձրությունը պատվանդանի հետ մոտ հինգ մետր է: Պատվանդանը կերտված է գրանիտից, որի վրա ոսկեզօծ տառերով գրված է՝ «Արմեն Տիգրանյան 1870—1950»: Պատվանդանի հեղինակն է կոմպոզիտորի որդին՝ հանրապետության վաստակավոր շինարար, ճարտարապետ Էդմոնդ Տիգրանյանը, իսկ արձանի հեղինակն է երիտասարդ շնորհալի քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանը:

Այժմ արձանի պատվանդանի վրա լենինականցիները միշտ գնում են գունագեղ ու բուրավետ ծաղիկներ՝ ի նշան այն բանի, որ այսօր էլ մեզ հետ ապրում ու ստեղծագործում է մեծանուն երգահանը և նրա հիանալի ստեղծագործությունները երբեք ու երբեք չեն կորցնում իրենց թարմությունը:



ՀՅՈՒՐԵՐ ՍՓՅՈՒՌՔԻՑ

Նարից Սովետական Հայաստանում էր գտնվում ամերիկաձայ ծանոթ գրող Կարապետ Սիտալը, որին ոչ միայն արտասահմանի հայ գաղթօջախներում, այլև Հայրենիքում շատերը ճանաչում են թե՛ ստեղծագործությամբ և թե՛ անձամբ: Այս անգամ նա եկել էր ծանոթանալու նոր հայրենադարձների հետ և առաջին գիրք գրելու նրանց կյանքի մասին:

Կ. Սիտալը մոտ մեկ ամիս գրտնվելով Հայաստանում, շրջեց հանրապետության քաղաքներն ու ավաններ, առաջարաձներն ու ձեռնարկություններ, հանդիպում ունեցավ նոր հայրենադարձների հետ, եղավ նրանց բնակարաններում, աշխատանքի վայրերում: Ամենուրեք Սովետական Հայաստանի նոր քաղաքացիներ գոհունակություն էին հայտնում, որ իրենց հնարավորություն տրվեց անձնական աշխատանքով մասնակցել հայրենիքի վերելքի ճվիրական գործին:

Նրան ուրախացրին հատկապես երեխաների ու երիտասարդության համար ստեղծված պայմանները: Մանուկները տեղավորվել են մանկապարտեզներում, պատանիները ու աղջիկները իրենց տեղն են գտել դպրոցական նստարանների վրա, հայրենիքում ծնված ու հասակ առած իրենց հարազատ եղբայրների ու քույրերի կողքին:

* * *

Մոտ երկու շարաթ մեր բնկերության հյուրն էր լիբանանահայ գրող Գևորգ Աճեմյանը: Այդ միջոցում նա հնարավորություն ունեցավ ծանոթանալու մեր իրականության ամենատարբեր կողմերին, շփվելու ժողովրդի ամենատարբեր խավերի հետ, հանդիպելու արվեստի ու մշակույթի բազմաթիվ ներկայացուցիչների հետ:

Գևորգ Աճեմյանը հաղթահամայր երևանի բազմաթիվ մշակութային օջախներում լինելուց բացի, այցելեց նաև մեր հանրապետության մի շարք հաղթները: Լենինականում նա հիացավ նորակառույց գիշերօթիկ դպրոցի գեղեցիկ ու հարմարավետ շենքերով, դպրոցի սաների բազմազանվանդակ կյանքով, նրանց շնորհալի կատարումներով: Կիրովականում հետաքրքրությամբ ծանոթացավ «Ավտոմատիկա» գործարանի բանվորների աշխատանքին, ինչպես նաև հայրենադարձ ընտանիքների նոր կյանքին: Մի ամբողջ օր Աճեմյանը բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի և արձակագիր Անահիտ Սահինյանի հետ շրջեց մեր նորակառույց հաղթաներ՝ Հրազդանը, Լուսավանը և նոր Հաներն ու Լուսակերտ ավաններ: Նույն օրը երևկոյան Գ. Աճեմյանը իր ուղեկիցների հետ այցելեց արձակագիր Հրաչյա Քոչարին՝ Լուսակերտի նրա ամառանոցում:

Հայրենիքից ստացած բազմաթիվ ու բազմապիսի տպավորությունների շարքում Աճեմյանի հիշողության մեջ անջնջելի կմնա Թալինի շրջանի Նաղարչիկ գյուղը: Այստեղ, Արագածի բարձր լանջերին նա գտավ սասունցի իր հարազատների մի ամբողջ գեղացատան, որոնց մասին մինչ այդ միայն նամակներից գիտեր: Ամբողջ երկու օր Աճեմյանը գրող Գեղամ Սևանի հետ վայելեց սասունցիների այս փոքրիկ գյուղի ավանդական հյուրասիրությունը:

digitised by A.R.A.R.@



Նվարդ Գրասերյանը՝ ճայրենադարձված Եգիպտոսից: Բնակվում է Երևանի Նոր Զեյթուն արվարձանում՝ իր սեփական տանը:

Սևանի

— Վերցրե՛ք, իմ ձեռքով եմ պատրաստել,— ասում էր դեռատի մի կին՝ կողքին նըստած մի այլ կնոջ, որ տարիքով իրենից ավելի երիտասարդ էր:

Վերջինս էլ նրան էր հյուրասիրում.

— Վերցրե՛ք, վերցրե՛ք...

Սակայն ուղևորների մեջ մի կին առանձնանում էր: Կլիներ նա 50—55 տարեկան, ոչ ավել: Չնայած նրա մազերի ճերմակը գերակշռում էր, բայց դեմքը թարմ էր: Կինը ուղևորներից տարբերվում էր առոգանությամբ, խոսում էր հանգիստ, անշտապ: Լսելով նրան՝ դժվար չէր կռահել, որ հայրենադարձուհի է: Ուղևորներից մեկը դարձավ դեպի նա ու ասաց սիրալիր.

— Դուք եկվո՞ր եք, մայրիկ:

— Եկվոր եմ, տղաս...

Ու հետո ժպտերես ավելացրեց.

— Բայց ինձ եկվոր չեմ համարում:

— Ճիշտ է, էլ ի՞նչ եկվոր՝ հայրենի հողի վրա:

Տիրեց լռություն:

Ուղևորներից շատերին նա հետաքրքրեց: Նա պատուհանից նայում էր դուրս, հիանում ամեն ինչով, հիանում բոլոր այն նորություններով, ինչ կար Սևան տանող ճանապարհի երկու կողմերին:

Մեքենան անցնում էր Քանաքեռի սարահարթով, երբ կինը ասես ինքն իրեն ասաց.

— Այսչա՛փ էլ շինարարություն... ոչ մի երկրում չեմ տեսել:

— Շա՛տ երկրներում եք եղել, մայրիկ:

Կինը ժպտաց, զգաց հարցի կարևորությունը:

— Շա՛տ...

Նա խորը հոգոց քաշեց, հետո շարունակեց.

— Միջերկրական ծովի բոլոր երկրներում եղել եմ... վերջինը Ալեքսանդրիան եղավ, եվտորուսը սլանում էր դեպի Սևան: Մեքենայի մեջ քսանից ավելի ուղևորներ կային: Խոսակցություններից պարզվեց, որ բոլորն էլ տարբեր մասնագիտության տեր մարդիկ էին: Մեքենան նոր էր Երևանից դուրս եկել և դեռ չէր հասել Քանաքեռի բարձունքը, երբ ճանապարհորդները իրար մտերմացան: Ընկերված դրույցը գնալով ջերմանում էր: Հետո սկսեցին իրար հյուրասիրել, ով ինչով կարող էր: Կարծես ոչ ոք իրար անծանոթ մարդիկ էին մեքենայում հավաքվել, այլ մի ընտանիքի անդամներ, այնքան որ սրտաուռչ վերաբերմունք կար իրար նկատմամբ:

— Այս քաղաքը հասակ առավ աչքերիս առջև,— հիացական ասաց կինը:

— Ուրեմն առաջին անգամ չէ՞, որ գալիս եք,— հարցրեց մի ուղևոր:

— Ո՛չ, դավակս, ամեն տարի այս ճանապարհով երկու անգամ կգամ և նորից ետ կվերադառնամ Երևան: Բոլոր փոփոխությունները կտեսնեմ աչքովս: Օրինակ, սա կար... բայց այս շինությունը չկար՝ անցյալ տարի: Այստեղ ամայի տարածություն էր: Կուրախանա մարդու սիրտ՝ տեսնելով այսչափ նորություններ: Ճիշտ էր ասում Եգիպտոսի հայերի հոգևոր թեմապետը. «Երբ հայրենիք երթաս — կմխիթարվես»: Այո, եկա ու մխիթարվեցի:

— Ինչո՞վ,— անսպասելի հարցրեց մեկը:

— Ամեն ինչով...

Նվարդ Գրասերյանը, որ ուներ նաև Հակոբյան ազգանունը, այդպիսի հարցի չէր սպասում: Նա մի պահ լռեց: Հետո հավաքեց մտքերը, ծանր ու թեթև արեց եղելությունները, անցած-գնացած օրերի հուշերը:

— Հայրենիքը ինձ պես կանանց համար է, տղաս, ինչիս պետք էր օտարություն: Քար կնետեր ամեն ոք: Ստորության սովոր չէ հայ կինը, դավակս:

digitised by A.R.A.R.@

ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ջեմ ասում, թե աղքատ կապրեի այնտեղ, չեմ էլ ասում՝ թե հարուստ էի։ Փողի մեջ չէ մարդուս ունենալը։ Ջոր հացկեր, տանդ մեջ կեր։ Եկա, որ կերածս չտան երեսովս... Որ ձանձրալի չլինի։ Մի դեպք պատմեմ ինձ հետ պատահած, կուզե՞ք լսել։

— Պատմեք։

Ճանապարհորդները լարեցին իրենց լսողությունը։

— Ձեր հարցի պատասխանը այդ դեպքի նկարագրությամբ եմ ուզում տալ,— ավելացրեց Նվարդ Գրասերյանը և շարունակեց։— Եղել եմ որբերի խնամակալուհի, կարմիր խաչի նախագահ, մասնակցել եմ ազգային գործերին, տիկնանց ընկերության անդամ եմ եղել, աշխատել եմ բարեգործական միության մեջ։ Ամուսինս աշխատում էր բամբակի գործի վրա, վաճառական էր, մահացել է 1947 թվականին։ Այս ամենը կորան աչքիցս, երբ մի օր երկու հրեանների իրար գրկախառնված տեսա ծովափին։ Գերմանիայից Պաղեստին էր գալիս մեկը, մյուսը՝ նավահանգիստ՝ նրան դիմավորելու էր եկել։ Խոսքեր չեմ կարող գտնել, ասելու, թե նավի տախտակամածի վրա կանգնածը ինչպես էր բղավում ծովափ եկածին։

— Սառա՛, Սառա՛, եկա հիմա, ինչո՞ւ ես լալիս, եկա՛...

Ու նրանք այնպես իրար գիրկ ընկան, որ ես էլ արցունք թափեցի՝ նրանց համար... Է, ինչո՞ւ հապա նրանք գրկախառնվեցին, իսկ մենք՝ հայերս, նույնը չպիտի անենք։ Հոգիս ճմլվեց։ Վերադարձա տուն և ասացի հանգուցյալի՛ս.

— Ես Հայաստան պետք է գնամ։ Ջեմ ուզում, որ խոսք ասես։ Պիտի գնամ, խոսքս՝ խոսք է։ Ասի ու եկա։ Հիմա այս բոլորը, որ տեսնում եմ, ուրախությունից սիրտս ուռչում է։ Տուն շինեցինք երևանի՝ Նոր Ջեյթունում, քարե տուն, երեք հազարի չափ վարկ տվեց պետությունը անվերադարձ։ Ասեմ նաև, որ այստեղ աղջիկ էլ ունեցա։

Ճանապարհորդները իրար նայեցին...

Նվարդ Գրասերյանը հասկացավ և իսկույն շարունակեց.

— Ջարմացաք, գիտեմ, տարիքս մեծ է որովհետև, սակայն աղջիկը իմը չէ, նրան ես չեմ ծնել...

— Որդեգրել եք, ուրեմն,— այս ու այն կողմից ասացին ուղևորները։

— Այո՛, այդ փափագս էլ կատարվեց այստեղ. միտք էի արել աղջիկ որդեգրել Հայաստանում, ժառանգ ունենալու հույսով։ Երկու սիրասուն աղջիկ էլ որդեգրել եմ Եգիպտոսում՝ Ջարուհիս և Իմաստուհիս։ Երկուսին էլ կրթել եմ և ամուսնացրել։ Իմ ազգանունն են կրում՝ Գրասերյան։ Հիմա նրանք Ալեքսանդրիայում են։ Ջհաջողվեց մայր Հայաստան գալ, բայց կգան, նամակ եմ ստանում, գրում են, որ պիտի գան։ Է՛, թող գան, բոլորն էլ թող գան... Եվ ինչո՞ւ չպիտի գան... Ինձ նայեն, օրինակ առնեն։ Հանգիստ կապրեմ տանս մեջ, նեղություն տվող չկա ինձ, ամեն տարի հանգըստյան տուն, առողջարան եմ գնում, եղել եմ Արզնիում, Ծաղկաձորում, Կիրովականում Հիմա էլ Սևան եմ գնում հանգըստանալու։ Այս ամենը ես Եգիպտոսի մեջ չպիտի գտնեի, իհարկե։ Շնորհակալ եմ Սովետների երկրից։

Նվարդ Գրասերյանը լռեց։ Ընկավ հուշերի մեջ։ Ի՞նչ էր խորհում Նվարդ մայրիկը։ Մտքերի շարանը տարել էր նրան հեռո՞ւ... Դա փաստ էր։

— Ջէ՛, մայր հողի բույրը անուշ է,— շշնջաց նա ու նորից հիշեց աղջկան։ 14 տարեկան է Ջուլիետաս, սովորում է 7-րդ դասարանում, երեք տարի է, որդեգրել եմ։ Շատ լավ աղջիկ է, գեղեցիկ... Սիրտս կտխրի, որ մի օր չտեսնեմ... Ջնկատեցիք, եկել էր ինձ ճանապարհելու։ Ջինարի պես հասակ ունի, փիրուզի պես աչքեր... Ջանին մատաղ։

Ուղևորները իրար նայեցին. ինչպե՞ս չեն նկատել։ Բայց այդ կարևոր չէր, նրանց հետաքրքրում էր Ջուլիետայի մոր՝ Նվարդ Գրասերյանի ճակատագիրը։ Կյանքի ալիքը մի ափից մյուսն էր նետել նրան։ Ու իր վերջնական հանգիստը մայր հողի վրա էր գտել։ Ուրախ էր Նվարդ Գրասերյանը, երջանիկ այն երջանիկներից, որոնք երկար դեգերելով մի երկրից մյուսը, ի վերջո ապաստան են գտնում հենց այնտեղ, որտեղ պետք է գտնեն նրա նման բախտի քմահաճույքին արժանացած շատ նվարդներ։ Հոգեկան մեծ բախտավորություն էր զգում այդ պահին Նվարդ Գրասերյանը։ Եվ այդ նկատում էին մեքենայի մեջ նստած նրա նոր բարեկամները։ Պատահական չէր, որ Նվարդ մայրիկը իբրև իր մտքի արձագանք և իր բոլոր պատմածների եզրահանգում, ասաց.

— Քսանով ավելացավ ծանոթներիս թիվը։

Ուղևորները նրան հասկացան։ Նա բոլորին համարեց իր բարեկամները, սակայն մեկը, որ նստած էր վերջում, ավելացրեց.

— Ինչո՞ւ քսանով և ոչ քսանվեցով, Նվարդ մայրիկ, մեքենայում այդքան մարդ կա։

— Այո՛, տղաս, քսանվեցով, ճիշտ ես ասում, չէի հաշվել...

Մեքենան մտավ Սևան։ Երկնքի լազուրի պես երևում էր Սևանա լճի հայելին։ Արևի ճառագայթներից վեհվեհացող կոհակներից փայլ առած շղարը լուսարձակների պես տարածվել էին օդի մեջ։ Ուղևորները լռել էին։ Նրանց գերել էր Գեղամա լեռների չքնաղ փերին՝ Սևանը, մեր Սևանը... Իսկ Նվարդ Գրասերյանի աչքերի մեջ Սևանա լիճն էր փայլում իր զմայլելի և հիասքանչ տեսքով... Դա հայրենի հողի, հայրենի երկրի համայքն էր։

ՍԵԴԱ ՍԱՄՎԵԼՅԱՆ
ուսուցչուհի

Գրասերյանների տնամերձ պարտեզում։

Լուսանկարները՝ Զ. Բշտիկյանի



digitised by A.R.A.R.@









ՆՈՐ ՄԱԼԱԹԻԱՅՈՒՄ

Երեք տասնամյակ առաջ օտար երկրներից Սովետական Հայաստան մի խումբ մալաքիացիներ և Երևանից մոտ տասը կիլոմետր հեռավորության վրա հիմնադրեցին մի փոքրիկ ավան Նոր Մալաթիա անունով։ Հայրենի երկրում նրանք կառուցեցին առաջին տները և նրանց ազնիվ ու անձնվեր աշխատանքի շնորհիվ երբեմնի քարուտները դարձան ծաղկուն բանվան և այգեստան։ Կառավարությունը խոշոր միջոցներ ներդրեց ավանի արդյունաբերական զարգացման համար։

Կառուցվեցին խոշոր ֆաբրիկաներ ու գործարաններ։ Նորաստեղծ և զարգացող ավանի զարդը դարձավ Լենինի անվան մետաքսի խոշոր կոմբինատը, որտեղ թողարկվող մետաքսյա կտորեղենը լայն հռչակ գտավ ոչ միայն Սովետական Միությունում, այլև արտասահմանյան շատ երկրներում։ Մետաքսագործների թողարկած գործվածքեղենը ծիածանի բոլոր գույներով շողշողում է սովետական վաճառատների ցուցափեղկերում և զուգում մեր երկրի աշխատավորուհիներին։

Մետաքսագործների համեմատաբար ընտանիքում են աշխատում հին Մալաքիայի նախկին բնակիչ Արեգնազ Հակոբյանը, Հայկական ՍՍՌ Գերազույն սովետի դեպուտատ, հայրենադարձ Շաքե Քոլսուզյանը, անվանի մետաքսագործներ երեմ Ասլանյանը, Մելքոն Գալստյանը, Մինաս Մինասյանը և շատ ուրիշներ։

Նրանք սովորական շարքային բանվորներ են, նրանց մասին երգեր չկան, բայց Նրանց ամենօրյա աշխատանքը իսկական երգ ու պոեմ է, սխրանք ու խիզախում։

Չի կարելի չխոսել Շահումյանի անվան տրիկոտաժի և Մյասնիկյանի անվան գուլպայի ֆաբրիկաների մասին։ Այս ձեռնարկությունները վերջին տարիների ծնունդ են, բայց արդեն երկրին տալիս են մեծ քանակությամբ տրիկոտաժի գործվածքներ և գուլպաներ։

Շահումյանի անվան տրիկոտաժի ֆաբրիկայում են աշխատում նախկին Մալաքիայի բնակիչներ՝ հայրենադարձներ Հովսեփ Պապուջյանը, Մաղիա Մաղիայանը և շատ ուրիշներ։ Այս ու շատ ուրիշ բանվորներ և բանվորուհիներ իրենց օգտակար առաջարկներով անընդհատ բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը և գերակատարում առաջադրանքները։

Մալաքիայում գործում են հացի և լիմոնադի գործարաններ, բազմաթիվ արհեստանոցներ, կենցաղ-սպասարկման արտելներ։

Բոլոր ֆաբրիկաները և գործարանները ունեն նորակառույց ակումբներ, ուր ձեռնարկությունների աշխատողները անց են կացնում իրենց կուլտուրական հանգիստն ու ժամանցը։

Մալաքիայի հարյուրավոր բնակիչներ ընդգրկված են ՍՄԿՊ XXII համագումարի անվան կոլտնտեսություններում։ Այդ կոլտնտեսությունները, որը հիմնականում զբաղվում է այգեգործությամբ, դաշտավարությամբ և անասնապահությամբ, իր հաջողություններով ճանաչված է ամբողջ Հայաստանում։

Այդ տնտեսությունը ղեկավարում է սոցիալիստական աշխատանքի հերոս Արտաշես Մեժլումյանը։ Այս կոլտնտեսությունում է աշխատում նաև Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի դեպուտատ, սոցիալիստական աշխատանքի հերոս Աշխեն Ավետիսյանը։ Նա իր խնամած յուրաքանչյուր կովից ստանում է մոտ 5500—6000 կիլոգրամ կաթ։

Ավետիսյանը իր անձնվեր աշխատանքով հռչակվել է ոչ միայն Հայաստանում, այլև ողջ երկրում։

Մալաքիայի կոլտնտեսության երկու տասնյակ աշխատողներ իրենց լավագույն աշխատանքի շնորհիվ արժանացել են կառավարական շարք պարգևների՝ շքանշանների և մեդալների։

Հին մալաքիացիները շատ լավ են հիշում իրենց համագյուղացի Սեդրակ Թաշչյանին։ Բուրք բարբարոսները հին Մալաքիայում ոչնչացրին նրա ծնողներին և հարազատներին։



Փախչելով Թուրքիայից նա երկար տարիներ թափառեց օտար երկրներում, հազիվ վաստակելով օրվա ապրուստը։

Շատ-շատերի հետ Հայաստան՝ իր մայր հայրենիքը վերադարձավ նաև Սեդրակը, ուր նա գտավ աշխատանք և տուն։

Լինելով Մալաքիայի հիմնադիրներից մեկը, նա մտավ կոլտնտեսություն, կազմեց ընտանիք։ Իր վաստակով և պետության օգնությամբ նա կառուցեց հիանալի տուն՝ շրջապատված մրգատու պարտեզով։ Սակայն 1941 թվականի հունիսին գերմանական ֆաշիստների ոհմտագրուժ հարձակումը մեր երկրի վրա խանգարեց ինչպես Սեդրակի, այնպես էլ միլիոնավոր սովետական մարդկանց խաղաղ ստեղծագործ աշխատանքը։ Հայրենական պատերազմի ավարտումից հետո Սեդրակ Թաշչյանը վերադարձավ իր հարազատ կոլտնտեսությունը։



Նա այժմ կոլտնտեսության անվանի բրիգադավարներից է, որը չի խնայում իր ուժն ու եռանդը երկրին ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ տալու համար։

Հակոբ Յաղուբյանը ինը տարեկան էր, երբ Թուրք բարբարոսները սպանեցին նրա ծնողներին։ Նա փախավ Թուրքիայից և երկար տարիներ թափառելով օտար երկրներում չգտավ իր հանգիստը։ 1930 թվականին նա եկավ Սովետական Հայաստան։ Սկզբում աշխատելով որպես սեզոնյոր բանվոր, նա ձեռք բերեց միջնակարգ կրթություն և ընդունվեց Երևանի գյուղատնտեսական ինստիտուտ։ Հաջողությամբ ավարտելով այն, նա սկսեց աշխատել Մալաքիայի կոլտնտեսությունում։ 16 տարի է, ինչ նա աշխատում է այդ կոլտնտեսությունում և որպես գլխավոր գյուղատնտես իր համեստ լուման է ներդրել հարազատ կոլտնտեսության տնտեսական ամրապնդման և կոլտնտեսականների համար ուսևոր կյանք ստեղծելու գործում։

Հայրենի երկրում Հակոբը գտավ իր երջանկությունը, կառուցեց նոր առանձնատուն, կազմեց ընտանիք և դարձավ

Հակոբ Յաղուբյանը Նոր Մալաքիայի կոլտնտեսության գլխավոր գյուղատնտեսն է։ Նրա ընտանիքը ապրում է բաղկավ կյանքով, սեփական առանձնատան։ Նրեխաները երաժշտական կրթություն ունեն և ամեն օր երաժշտությամբ են զբաղեցնում իրենց ծնողներին։ Նկարում՝ Հակոբ Յաղուբյանի ընտանիքում։

Նոր Մալաքիայում։ Նկարներում՝ 1. Մի տեսարան Լենինի անվան փոդոցից։ 2. Ա. Մյասնիկյանի անվան գուլպաեղիկտաժի ֆաբրիկայի գործող բաժանմունքում։ Առաջավոր բանվուհիներ Ինմա Ոսկանյանը (ձախում) և Զեմֆիրա Դալտյանը աշխատանքի ժամին։ 3. Լենինի անվան մետաքսի կոմբինատի գործվածքային բաժանմունքը։

երեք տղայի և մեկ աղջկա հայր։

Հակոբի հրավերով մենք այցելում ենք նրա օջախը։

Ահա երկհարկանի տուփաշեն տուն։ Մուտքի մոտ՝ սիրալիր մեզ է դիմավորում նրա կինը՝ Մաքրուհին՝ կոլտնտեսության հաշվապահը։ Նա հայրենիք է եկել հեռավոր Ֆրանսիայից։

Տան տերը սիրով մեզ ցույց է տալիս իր առանձնատունը՝ շրջապատված խաղողի և մրգի պարտեզով։ Նորակառույց տան առաջին հարկում նկուղներն են, գինու մառանը։ Երկրորդ հարկն ունի չորս ընդարձակ սենյակներ՝ երեխաների ու ծնողների ննջարանները, հյուրասենյակը, ընդունարանը, ապա խոհանոցը և մեծ պատշգամբը։ Ահա հյուրասենյակը. պատի անկյունում դաշնամուրն է, մի այլ կողմում դրված են հեռուստացույցը և ռադիո-ընդունիչը։ Պատերից կախված են գորգեր, գեղարվեստական նկարներ։ Հյուրասենյակի կենտրոնում դրված են ճաշասեղան, գեղեցիկ աթոռներ և բազմոց, գրապահարաններում բազմաթիվ գրքեր։ Ճաշակով են կահավորված նաև ննջարանները։

digitised by A.R.A.R.@



րը։ Մաքուր է խոհանոցը, ուր օգտագործվում է գազ և էլեկտրականություն։ Խոհանոցում դրված է սառնարան։ Ամբողջ շենքը տաքացվում է սեփական ջեռուցման միջոցով։ Բակում՝ գարաժն է, սեփական մեքենան վարում է ավագ որդին։

Մինչ մենք ծանոթանում էինք Հակոբի բնակարանի հետ, տիկին Մաքրուհին հայկական սովորության համաձայն բացում է ճոխ սեղան։

Սկսվում է ջերմ, անկաշկանդ զրույցը։

— Ուրախ և երջանիկ եմ ապրում,— ասում է Հակոբը։ Մեծ որդիս՝ Էդուարդը սովորում է գյուղմեխանիզացիայի տեխնիկումում, նա թավջութակահար է, մյուս որդիս՝ Խոսրովը հաճախում է երաժշտական դպրոց, աղջիկս՝ Իզաբելլան միջնակարգ դպրոցի աշակերտուհի է և նվագում է դաշնամուր, իսկ կրտսեր որդիս՝ Հարությունը, այս տարի սկսեց հաճախել դպրոց։

— Երաժշտական ընտանիք է,— ասում ենք մենք։

— Այո, երաժշտական, գոհ ժպիտով պատասխանում է տանտերը։ Ապագա դաշնակահարուհի աղջիկս, թավջութակահար և ջութակահար որդիներս կազմում են մի եռյակ, որի քաղցրահնչուն նվագը մեզ ոգևորում և ուրախացնում է։ Երբ նրանք նվագում են «Կռունկ»-ը ես մի պահ վերհիշում եմ իմ տխուր անցյալը, ուր դառը կյանք էի վարում, իսկ այժմ մայր հայրենիքում գտա իմ երջանկությունը։

Ջերմ շնորհակալություն հայտնելով հյուրասիրության համար, մենք թողնում ենք Հակոբ Յաղուբյանի հյուրասեր օջախը և շրջում Մալաթիայի փողոցներով։ Տուֆաշեն բազմահարկ շենքերի հետ ամենուրեք տարածվել են երկհարկանի քարաշեն առանձնատները՝ շրջապատված պտղատու պարտեզներով։ Բանավանը ունի հինգ միջնակարգ և բանվորական դպրոց, մեկ երաժշտական դպրոց, չորս մանկապարտեզ և մանկամսուր, հիվանդանոց, բաղնիք, փոստհեռագրատուն, շատ ճաշարաններ, մթերային և արդյունաբերական ապրանքների խանութներ։ Իր գեղեցկությամբ աչքի է ընկնում ճարտարապետորեն ձևավորված կոլտնտեսային շուկան, ուր տարվա բոլոր եղանակներին վաճառքի են հանվում բազմապիսի թարմ և չոր մրգեր, բանջարեղեն, միս, կաթնամթերքներ և այլն։

Նոր Մալաթիայի բնակիչների համար ստեղծված են կուլտուրական հանգստի և ժամանցի հիանալի պայմաններ։ Այդ նպատակին են ծառայում կառուցված չորս ակումբը, կուլտուրայի տունը, կինոթատրոնը, սպորտային հրապարակը, հանգստի զբոսայգին և այլն։ Առանձին գեղեցկություն է ներկայացնում Նելսոն Ստեփանյանի անվան պուրակը, ուր տնկված է ավելի քան 30 հազար ծառ։

Աճել է Մալաթիան, աճել են նաև նրա բնակիչները։ Նրանցից շատերը ստացել են ոչ միայն միջնակարգ, այլև բարձրագույն կրթություն։ Մալաթիայում չեք գտնի մի ընտանիք, որ չունենա ինժեներ կամ գյուղատնտես, ուսուցիչ կամ բժիշկ, էլեկտրիկ կամ տեխնիկ, մեխանիզատոր կամ անասնաբույժ։

Այո՛, բոլորովին փոխվել ու անճանաչելի է դարձել Մալաթիան։ Այսօր նա այլևս ավան չէ, այլ մայրաքաղաքի Շահումյանի շրջանի բարեկարգ ու ծաղկուն թաղամասերից մեկը։

ՖՐ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Նոր Մալաթիայում։ ՍՄԿԿ XXII համագումարի անվան կոլտնտեսության կաթնա-անասնապահական ֆերմայում։

Լուսանկարները՝ Բ. Գազազյանի

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

ՀՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ժամանակակից սփյուռքահայ գրականության առաջին դեմքերից է Կոստան Զարյանը։ Ապրողների մեջ ամենաավագը և՛ տարիքով, և՛ իր գրական վաստակով։ Իր աշխարհըմբռնմամբ ու աշխարհայացքով, ինչպես և ստեղծագործական ողջ կենսագրությամբ շատ հակասական մի արվեստագետ, որը դեռ իր կենդանության օրոք թեպետ հռչակվել է որպես դասական գրող, բայց մինչև այժմ ամենից քիչ ուսումնասիրված հեղինակներից է։

Լինելով արևելահայ իրականության ծնունդ, դառել է սփյուռքահայ գրող, սակայն իր գործածած գրական լեզվի մեջ փորձել է միավորել մեր երկու գրական լեզուների հարստությունը։ Խորհրդապաշտ և ոգեպաշտ ուղղության ամենաջերմեռանդ հետևողներից՝ իր ստեղծագործության մեջ, սակայն, հասել է ամենախոր իրապաշտության։

Մի հետաքրքիր մանրամասն ևս, Զարյանը կարող էր դառնալ օտարագիր հեղինակ, փառք ու հռչակ որոնել օտար հորիզոնների տակ։ Բայց հայրենասերի իր հոգին չհաշտվեց այդ մտքի հետ։ Ինչպես ինքն է ասում՝ իր խոր համոզումն էր, որ «հայ հոգին միայն հայերենով կարելի է տալ»։ Եվ հայերեն սկսեց սովորել առաջին անգամ, երբ քսանհինգ տարեկան էր և արդեն տիրապետում էր ռուսերեն, անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն և իտալերեն լեզուներին։

Ստեղծագործական առաջին քայլերը կատարել է Բելգիայում 1908 թվականին, աշխատակցելով մի շարք բելգիական հանդեսների, ուր տպագրել է ֆրանսերեն լեզվով բանաստեղծություններ։

1910—1913 թվականներին ապրել է Վենետիկում, ուր առաջին անգամ հայերեն է սովորում Մխիթարյան

digitised by A.R.A.R.@



ԿՈՍՏԱՆ ՉԱՐՅԱՆ։
Լուսանկար՝ Ա. Քոչարի

մխարանների մոտ։ Այստեղ էլ 1914 թվականին հրատարակվել է իտալերեն լեզվով իր «Երեք երգ» պոեմների անդրանիկ գիրքը։ (Նույն գիրքը հայերեն լեզվով լույս է տեսել 1931 թվականին)։ Այդ պոեմների տեքստով իտալացի հռչակավոր կոմպոզիտոր Օտտորինո Ռիսբնկին գրել է մի սիմֆոնիա, որը հրատարակվել է Լայպցիգում «Ունիվերսալ էդիտիոն» հրատարակչության կողմից։

1913 թվականին փոխադրվում է Պոլիս, ուր հայ իրականության մեջ իր առաջին գրական քայլերն է սկսում՝ ձեռնարկելով նշանավոր «Մեհյան» հանդեսի հրատարակությունը, որը Եվրոպայում արդեն շատ մոդայական դարձած արվեստի խորհրդապաշտական ուղղությանը ամրողջովին հետևող առաջին հայ պարբերականը եղավ։

Պատահականորեն փրկվելով հայկական ջարդերից 1915 թվականին՝ նա անցնում է Բուլղարիա, ապա Հռոմ։ 1916—1920 թվականներին, լինելով ճնշված ժողովուրդների ազատագրության ընկերության անդամ, ակտիվ մասնակցություն է բերում հայկական դատի պաշտպանությանը։ 1919 թվականին, որպես իտալական քերթերի հատուկ թղթակից, գործուղվում է Մերձավոր Արևելք և առիթ է ունենում լինել Վրաստանում և Հայաստանում, ուր մնում է մոտ մեկ ամիս, անձամբ ականատես լինելով հայ իրականության այն տարիների ծանր մղձավանջին։ Հետագայում նա վարպետորեն պատկերել է այդ իրականությունը իր «Նավը լերան վրա» վեպում։

1920—1921 թվականներին Չարյանը դարձյալ Պոլսում է, ուր սկսում է հրատարակել «Բարձրավանք» հանդեսը, այդտեղ էլ լույս է ընծայում հայերեն լեզվով իր անդրանիկ գիրքը՝ «Օրերի պսակը» բանաստեղծությունների ժողովածուն։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո՝ 1922 թվականի սկզբներին, իր ընտանիքով Կոստան Չարյանը փոխադրվում է Երևան, ուր պետական համալսարանում դասավանդում է եվրոպական գրականությունների ընդհանուր բազդատական պատմությունը։

1923 թվականին նա դարձյալ փոխադրվում է Եվրոպա, ուր վարում է քաղաքական ու ստեղծագործական կյանք՝ Իտալիա, Ֆրանսիա, Միացյալ Նահանգներ, Մերձավոր Արևելք։ Դարձյալ Միացյալ Նահանգներ, նորից Իտալիա։

Իր ստեղծագործության հիմնական մասը՝ բանաստեղծություններն ու պոեմները, պատմվածքներն ու ճանապարհորդական նոթերը ցրված են ափյուռքի տարբեր հանդեսներում և պարբերականներում։

Առանձին գրքերով հրատարակվել են արդեն հիշատակված «Երեք երգերից» և «Օրերի պսակից» բացի, նաև «Տատրագոմի հարսը» պոեմը—1930 թվականին, և «Նավը լերան վրա» վեպը 1943 թվականին։

Տարագրության մեջ եղած տարիներին Կոստան Չարյանը, տատապելով մի տեսակ սոցիալական անբարբոնողականությամբ, չէր տեսնում իր հայրենիքում կատարված հոյակապ վերափոխումները։ Ավելին. ենթարկվելով քշնամական շրջանների քարոզչությանն ու ազդեցությանը՝ հաճախ ինքն էլ քյուր կարծիքներ է արտահայտել սովետական երկրի ու կարգերի մասին. ինչպես ինքն է ասում՝ «ախալ պատկերացման պատճառով ես քննադատել եմ առաձին երևույթներ ու մարդկանց մեր հայրենիքում»։

1961 թվականին նա չորս ամիս հյուր եղավ Սովետական Հայաստանում. այստեղ վայր ընկավ տեսակետրեն նրա տեսողությունը մշուշող քողը. սեփական աչքերով նա տեսավ իր հայրենիքի հրաշք վերածնունդը և մեծ խանդավառությամբ գրեց այդ մասին։

Որպես անկեղծ ու իսկական հայրենասեր, երբ իր աչքերը բացվեցին, նա այլևս չէր կարող հեռու մնալ իր հայրենիքի շինարար նոր կյանքից։ Ինչպես գրում է իր ինքնակենսագրականում՝ «լինելով հիացած իմ հայրենիքում կատարված հրաշք վերափոխումներով, հենց այն ժամանակ էլ հաստատ որոշում ընդունեցի փոխադրվել մշտական բնակության Հայաստան, որպեսզի հայրենիքիս ծառայելուն նվիրել քնկուզ իմ կյանքի վերջին տարիները»։

*
* *

Երբ Կոստան Չարյանը առաջին քայլերն էր անում գրականության մեջ, միջազգային դրամատիրությունը իր զարգացման վերջին՝ իմպերիալիզմի փուլն էր ապրում։ Տնտեսական ու քաղաքական հակասությունները երկրների միջև հասել էին ծայրահեղ լարվածության։ Դրամատիրական աշխարհը ելք էր որոնում պատերազմների մեջ։ Ծայրահեղ սրվածության էին հասել նաև սոցիալական ներհակություններն ու դասակարգային մարտերը։ Բանվորական շարժումների աճող ալիքը արդեն քանդում էր լիբերալիզմի և ռեֆորմիզմի խարխլված հիմքերը, սոցիալիզմի գաղափարները սկսում էին տիրապետել արդեն ոչ միայն բանվոր դասակարգի, այլև մտավորականության առաջավոր ներկայացուցիչների մտքերին։

Հուրջ եգնաժամ էին ապրում նաև գրականությունն ու արվեստը։ Բուրժուական գաղափարական ամրողջ վերնաշենքի հետ անկման և քայքայման ուղին էր բռնել նաև նրա գեղարվեստական մտածողությունն ու ստեղծագործությունը։ Սոցիալիզմի գաղափարները կյանքի էին կոչել արդեն բանվոր դասակարգի նոր գեղագիտություն։ Գրականության մեջ իր առաջին ծիլերն էր արձակել ստեղծվող նոր, սոցիալիստական արվեստը։ Կոստան Չարյանը քեպետ և ուներ որոշ չափով սոցիալիզմի գաղափարները տարածող մտավորականության առաձին ներկայացուցիչների հետ, 1905 թվականի նախօրյակին ականատես էր եղել Անդրկովկասում բարձրացող հեղափոխական ալիքին, սակայն իր դաստիարակությամբ և կրքոտությամբ շատ հեռու էր կանգնած ինչպես հեղափոխական շարժումներից, այնպես և սոցիալիստական գաղափարախոսություններից։

Բրյուսելի «Ունիվերսիտե Նուվելում» փիլիսոփայության դոկտորի կոչում ստանալու հետ նա միաժամանակ առատորեն կլանել էր նաև իդեալիստական փիլիսոփայության հիմունքները՝ Կանտին և Հեգելին, այն տարիների կուռք հանդիսացող Շոպենհաուերին և Նիցշեին։ Նրա աշխարհայացքն ու գեղագիտական ըմբռնումները սնվել էին իդեալիստական այդ հետադեմ ակունքներից, ձևավորվել Ֆրեյդի ուսմունքի և ֆրանսիական, իր ժամանակներում մոդեռն համարվող, անկումային գրականության ազդեցության ներքո։

Բնական է, իր առաջին գործերի՝ «Երեք երգերի» և «Օրերի պսակի» մեջ շատ ցայտուն կերպով պիտի արտահայտվեին այդ ազդեցություններն ու իդեալիստական մտածողությունը։

20-ական թվականներին Հայաստանում եղած տարիները շրջադարձային նշանակություն ունեցան նրա հետագա ամրողջ ստեղծագործության համար։

Հայրենիքը, որ մինչ այդ գրողի համար միայն երազ էր ու կարոտ, հայրենասիրությունը՝ ավելի գրքային, քան իրական զգացում, այստեղ ստանում է միս ու արյուն, դառնում կոնկրետ ու շոշափելի։

Առաջին անգամ նա դադարում է իրեն օտար ու որբ զգալուց։ Հարազատ միջավայրում նա նոր միայն զգում, հասկանում է, թե իրականում ինչ բան է հայրենիքը, ուր «ամեն ինչ պեղված է մտքով ու կառուցված է սրտի գաղտնիքով»։ Հայրենիքը ոչ

digitised by A.R.A.R.@

միայն խինդ ու ուրախություն է բերում նրան, այլև մի տեսակ քնավորում, հպարտության բարձր զգացում հաղորդում։

Կանցնեն տարիներ աշխարհի ամուրնակարգ մայրաքաղաքներում ապրելուց, լավագույն օթևաններում, ռեստորաններում, կաֆեներում լինելուց հետո նա նորից խորը սիրով կվերհիշի Արարատյան դաշտը ու նրա բարիքները։

Ով Արարատյան դաշտի գինով
Երբեք չի օծել
Բաժակը սուտի —
Ինչ գիտե կյանքից։ Ով Հրազդանի
ափին չի նստել,
Սայար-Նավայից չի լսել գովքը
գյոզալ իր յարի
Եվ չերմոտ ձեռքով չի բաղել միրգը
սիրածի կրծքից՝
Ինչ գիտե կյանքից։
Ով Արարատյան դաշտի գինով
Երբեք չի հյուրասիրել
Աշխարհի ամենագեղեցիկ կնոջը
Եվ աշխարհի ամենաերջանիկ մարդը
Ինչ գիտե կյանքից։

Ամրողջ Եվրոպան ու Ամերիկան շրջելուց հետո նա խորը սիրով պիտի գրի.

«Արարատյան դաշտի նման լուսավոր գաշտ ես չեմ տեսել»։

Հայրենի մի քաղաքն է տալիս նրա հետագա ամբողջ ստեղծագործությանը այն, ինչ մինչ այդ բացակայում էր նրա մոտ՝ հայկական երանգավորում, հայկականություն։

Կոստան Զարյանի երևանում գրաված ժամանակամիջոցը հեղափոխության առաջին տարիներն էին։ Շրջապատում տիրում էր աղքատություն և կարիք, սակայն մշնորտում իշխողը հեղափոխական ոմանց էր, գալիքի նկատմամբ մեծ հավատը, պայծառ լավատեսությունը։ Այդ առողջ, կենսահաստատ մշնորտում Կոստան Զարյանը խոշոր չափով պիտի կորցներ և իր հոռետեսությունը, մութ տրամադրությունները, որոնք նրա ստեղծագործության մեջ բնդմիշտ պիտի երկրորդական տեղ գրավեին։

Վերջապես այդ տարիները ստեղծվող նոր, սոցիալիստական գրականության համար մղվող ամենամյունդ պայքարի տարիներն էին։ Զարենցի գլխավորությամբ հայ արվեստագետների նոր սերունդը գրոհում էր հին գրականության հիմքերը՝ վերացնելով անկումայնության ամեն մի արտահայտություն արվեստի մեջ, մասնավորապես բուրժուական արևմուտքի մոդեռն ուղղությունները՝ խորհրդապաշտությունն ու ձևապաշտությունը։ Նոր, սոցիալիստական արվեստի և իրապաշտության հաղթանակի համար մղվող պայքարի շիկացած մթնոլորտը չէր կարող իր բարերար ազդեցությունը չթողնել նաև Կոստան Զարյանի ստեղծագործական մտածողության վրա։ Այստեղ է, որ նա աստիճանաբար հեռանում է իր համար այնքան նվիրական խորհրդապաշտությունից և վճռական շրջադարձ կատարում դեպի իրապաշտական արվեստը։

Այդ տարիներին Հայաստանում տիրող հեղափոխական ոմանտիկայի մթնոլորտը ամրողջովին համակում է Կոստան Զարյանին։ Նա տարված է հին աշխարհը քանդելու, նոր հասարակարգ կառուցելու գեղեցիկ գաղափարներով։ Իր ստեղծագործությամբ նա ընդհուպ մտնելում է սոցիալիստական ռեալիզմի նոր գաղափարայնությամբ հագեցած արվեստին։ Տեսնում ու զգևորվում է «նոր Հայով»՝ կոմունիզմ կառուցող շինարար մարդու կերպարով։ Նա փառաբանում է այդ «նոր Հային», հավատում նրա երջանիկ ապագային, որն ստեղծվում է եղբայրացած ժողովուրդների համատեղ ջանքերով, միատեղ համախմբված մեծ ընտանիքում։ Նա փառաբանում է մեծ Լենինին և նրա հոյակապ գաղափարները։ Այդ տարիներին նա գրեց իր բանաստեղծությունների «Սրտի ճանապարհով» գեղեցիկ շարքը, որ սակայն տպագրության հանձնեց միայն 1948 թվականին։

* * *

Նույնով նա նորից մեկնում է Հայաստանից և տարիներ շարունակ քափառում տարագրության ու պանդխտության անորոշ ուղիներում, օտար ու թշնամական շրջապատում։ Հայրենի հողից ու ժողովրդից կտրված նա նորից ենթարկվեց չարակամ ազդեցություններին։ Շատ բարենպաստ հող էր այդ տեսակետից և իր իդեալիստական մտածողության։

Այդ տարիներին, ենթակա քրշնամական քարոզչության ազդեցությանը, երբեմն նա գրեց գործեր, անարժան իր գրչին ու տաղանդին։ Արտահայտեց մտքեր, որ չէին տարբերվում քաղաքական վտարանդիների արտահայտած գրպարտիչ, վատողի ու չարաննեց մտքերից, սակայն միշտ մնալով հակասական և իրարամերժ իր արտահայտած մըտքերի ու կարծիքների մեջ։ Մի կողմից նա վատաբանում էր իր հայրենիքում գոյություն ունեցող կարգերը, մյուս կողմից նրանց մեջ տեսնում էր ժողովրդի միակ փրկությունը. «Անցյալում խառնված, ցրված էինք քրշնամիների մեջ, իսկ այսօր մի կատր հողի վրա կենտրոնացած, միատարր մի ազգ ենք, նոր աշխարհի հետ միացած նոր աշխարհ ստեղծող, նոր համամարդկային կյանք ստեղծող մի կարևոր զորություն» (ընդգծումը մերն է — ՀՐ. ԳՐ.)։

Նա երբեք չտարվեց հայրենի հողից հեռու «հոգևկան հայրենիք» բանեղծելու ցնորամիտ ու վերացական գաղափարներով։ Ավելին. նա եղավ հայրենի հողից կտրված և օտար աշխարհներում ափված հայության ճակատագրի մասին շատ ունալ մտածող. «Հայը իր հայրենիքից դուրս դադարում է հայ լինելուց...»—գրում էր նա։

Այդ տարիներին նա հրատարակել է մեծ թվով ճանապարհորդական հուշագրություններ («Երկրներ և աստվածներ» շարքը)։ Սրանք սովորական առումով վերցրած անցորդիկ տպավորություններ փոխանցող զրոսաշրջիկի նոթեր չեն, այլ բարձրարժեք գեղարվեստական գործեր, Եվրոպայում շատ տարածված էսսե կոչվող գրական ժանրով գրված արձակ քերթվածներ։ Բանաստեղծական պատկերավոր հույզերը այստեղ միախառնված են փիլիսոփայական դատողությունների ու բաղդատական եզրակացությունների հետ, բնության ու տեսարանների նկարագրությունները կենդանի մարդկանց, իրական բնավորությունների ստեղծման հետ։ Հանճարեղ նկարագրական ոճին փոխարինում են զուտ վիպական պատումները կամ գեղարվեստական արձակով գրված կենդանի դիալոգը։ Այստեղ փայլուն կերպով հրապարակ է եկել արվեստագետի իր սուր դիտողությունը, գիտնականի էրուդիցիան։

Կամովին ինքն իրեն արտաբսելով հայրենի երկրից, տարագրության բոլոր տարիներին նա խորապես տանջվեց հայրենիքի կարոտով։ Քափառելով աշխարհով մեկ, նա ամենուրեք տարավ իր հետ իր խորը քախիծը, հայրենիքի անհուն կարոտի զգացումը։ Այդ արտահայտված է նրա համարյա բոլոր արձակ քե չափածո գործերի մեջ։

Աճա նորից մի կայարան։ Ոչ ոք չկա։
Ոչ ոք չկա։ Միայն իմ, արդյոք ես
պիտի գա՞,
Ով ճայրենի մեր երկրի դուռն առչև
Մենկը կանգնած պիտի ասե «Ենկար
բարև»։
Ես վախենում եմ ճարցնել ինձնից
ո՞ւր եմ գնում,
Եվ չառաչող այս գնացքը ո՞ւր է
տանում...

Նա հաճախ պոեմներում և բանաստեղծություններում պիտի անդրադառնա այն «անցած գնացած» երջանիկ ժամանակներին, երբ առաջին անգամ վերադարձավ Հայաստան, ինչպես ամենամոտ ու հարազատ մարդու հետ, մտերիմ զրույց պիտի վարի, հայրենակարոտ իր սիրտը բանա իր ծնողին՝ Մայր Հայաստանին։

* * *

Պանդխտության տարիներին Կոստան Զարյանի գրած հիմնական, արդեն դասական դառած գործերն են «Տատրագոմի հարսը» պոեմը և «Նավը լերան վրա» վեպը։

«Տատրագոմի հարսը» պոեմը Զարյանի չափածոյի թագն ու պսակն է կազմում, նրա արդեն միանգամայն ռեալիստական արվեստի բարձրագույն արտահայտությունը։ Միաժամանակ եզակի մի երևույթ մեր բանաստեղծության մեջ։

Մեր պոեզիայում քերևս ոչ մի գործ այնպիսի ուժով, այնպիսի ճըշմարտացիությամբ չի արտահայտել 19-րդ դարի վերջին քաոտրդի և 20-րդ դարի առաջին տասնամյակի արևմըտահայ գավառի հայ իրականության բնորոշ ու վավերական պատկերը, նրա ողբերգական հակասությունները, ինչպես այդ արված է «Տատրագոմի հարսը» պոեմում։ Միաժամանակ այստեղ զարմանալի հըստակությամբ հրապարակ է եկել նաև իր՝ հեղինակի հակասականությունը՝ տաղանդավոր, իրապաշտ արվեստագետը և սահմանափակ մտածողը։

«Տատրագոմի հարսի» մեջ արտահայտված Զարյանի հայացքների հակասությունը տիպիկ արտահայտությունն են այն հակասական պայմանների, որոնց մեջ դրված էր արևմըտահայ գավառը պոեմում նկարագրված դեպքերի ժամանակաշրջանում։ Արտահայտությունն են այն գաղափարների ու տրամադրությունների, որոնք բնութագրում են այդ շրջանի արևմտահայ ազատագրական շարժումը ու նրա մասնակիցների պատմական գործունեությունը իր բոլոր ՔուլություններովՔերություններով, իր բոլոր խոցելի ու քննադատելի կողմերով։

Անզուգական պատկերներով հեղինակը կարողացել է իր պոեմում վերստեղծել ավատական, նահապետական կենցաղով ապրող անցյալի հայ գյուղի՝ Տատրագոմի կենդանի պատկերը, նրա մարդկանց բնավորությունները, նիստ ու կացը, բարքերը։

Էպիքական շնչով, վարպետ ներկարչի կարող վրձինով է նա պատկերել հայրենական լեռնաշխարհի՝ Մասունի բնությունը, նրա տարվա չորս եղանակները։

Նույնպիսի ուժով են պատկերված նաև գյուղական կենցաղն ու բարքերը, նահապետական սովորույթներն ու ազգաթները, հաճախ հետաքրքիր ու դատապարտելի։

Հայ գյուղացու ամբողջ անցյալ կյանքը սովորեցրել է նրան ատել իր հարստահարողներին՝ փաշաներին, բեգերին ու շեյխերին, օտարներկրյա դավիչներին ու հայրենական շահագործողներին, սակայն չէր սովորեցրել ու չէր կարող սովորեցնել, թե ինչպես պետք է պայքարի այդ ամենի դեմ։ Այդ հարցի ճիշտ պատասխանն էր, որ չէին կարող տալ և չըտվեցին նաև արևմտահայ ազգայինազատագրական շարժման այն ժամանակվա պարագլուխները։ Փոխանակ նախապատրաստելու համաժողովըրդական, դանգվածային ապստամբական շարժում, փոխանակ ամբողջ գյուղեր ու գավառներ ոտքի հանելու, նրանք կուչ էին անում կազմել «Ֆիդայիների» կամ «հայդուկների» փոքրիկ խմբեր, այսինքն յուրաքանչյուր գյուղից մեկ-երկու խիզախ, խենթ

digitised by A.R.A.R.@

մարդկանցից կազմված խմբեր, անզոր քիչ թե շատ զգալի դիմադրական ուժ հանդիսանալու թուրքական կանոնավոր բանակի դեմ։

Այդ անարգյունք ուղին է ընտրում և պոեմի հերոսը՝ Հովանը։

Պոեմի «Ֆիդայիները» գլխում ուժեղ կերպով արտահայտված է և՛ հեղինակի հակասականությունը, և՛ այդ շարժման դատապարտվածությունը։

Պոեմում արտացոլված է հայ ժողովրդի պատմական ճակատագրի ծանր ողբերգության ընդհանրացված մի դրվագը՝ կարող վրձինով պատկերված, որ դառնում է միաժամանակ դատավճիռ և գյուղի նահապետական ավանդների ու նախապաշարումների, և ոչնչով չարդարացված հայդուկային շարժման նկատմամբ։

Ռեալիստական արվեստը, իսկական արվեստը վեր հանելով կյանքի ճշմարտությունը, դրանով արդեն դատապարտում է այն ամենը, ինչ հետադեմ է ու անիմաստ։

Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպը կոչված է պատկերել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մի այլ դրվագը՝ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու նախօրյակը։ Վեպում նկարագրված է Հայաստանը դաշնակցական տիրապետության ծանր տարիներին՝ 1918—1920 թվականներին։

Ժողովուրդը հանձնված այդ արկածախնդիրների կամայականությանը ու կործանարար քաղաքականությանը՝ դատապարտված էր աստիճանական ֆիզիկական բնաջնջման՝ եղբայրասպան ու ազգակործան պատերազմների, քաղցի, հիվանդությունների ու սովամահության հետևանքով։

«Նավը լեռան վրա»-ն չպետք է դիտել որպես վավերական իրադրությունների վրա կառուցված սովորական պատմավեպ։ Ավելի շուտ այն կարելի է համարել ժողովրդական ճակատագրի մասին ընդհանրացված դատողություն՝ փիլիսոփայական վեպ։ Հեղինակը իր առաջաբանում գրում է. «Այս վեպը սովորական առումով պատմական վեպ չէ, այլ պատմությունը մի քանի հայ հոգիների, որոնց վիճակվեց ապրել մեր ազգային կյանքի ամենաբախտորոշ ժամանակներից մեկում»։

Հեղինակի համակրանքը վայելող, բայց տարբեր խառնվածքի մի քանի հերոսների հոգեկան աշխարհի, նրանց դատողությունների հակադրման ըսկզբունքով, հեղինակը կարողացել է վարպետորեն վերստեղծել դարաշրջանի պատկերը։ Իշխողը վեպում խոհական-դատողական տարրն է, սակայն վարպետորեն այն ներհյուսված է վեպի գեղարվեստական-հուզական կտավի մեջ։

Վեպի հիմնական սյուժետային գիծը կենտրոնական հերոսի՝ նավապետ Հերյանի գերմարդկային ջանքերն են, որպեսզի նավը Սև ծովի ափերից մինչև Սևանա լիճը հասցնի։ Սակայն նավը այստեղ ստացել է փոխաբերական՝ սիմվոլիկ նշանակություն։ Այն խորհրդանշում է հայ ինքնուրույն պետականություն ստեղծելու դժվարին ուղին։ Դաշնակցական ապիկար ձեռքերում նավը չի հասնում Սևանի ջրերին, ուր կարող էր ազատ նավարկել և մնում է Քանաքեռի բարձունքներում մեխված. այսինքն դաշնակցականները անկարող եղան վերստեղծել հայ պետականությունը, այն կարող էին կատարել միայն հայ կոմունիստները ռուս ժողովրդի եղբայրական օգնությամբ։ Նրանց ջանքերով է նավը հասնում իր նպատակակետին՝ Սևան, այսինքն դարերով կորցրած հայ պետականությունը վերստեղծվում է հայ կոմունիստների ձեռքերով։ Նրանք են բերում հայ ժողովրդի փրկությունը։

Վեպը Կոստան Զարյանը գրել է տարագրության մեջ, ուր հնարավորություն չուներ ինարկե, ստուգել և ճշտել պատմական իրադարձությունները բնութագրող փաստերը, ուստի և վեպում տեղ էին գտել մի շարք պատմական անճշտություններ։ Հայաստան գալուց հետո հեղինակը հնարավորություն ստացավ վերախմբագրել իր վեպը։ Իր վեպի երկրորդ հրատարակության առաջաբանում նա գրում է. «Արտասահմանյան պայմաններում հեռու երկրից և ականատեսների վկայություններից, դժվար էր հարազատ պատկերը տալ բոլոր անցուդարձերի, և ակամա վեպում տեղ էին գտել որոշ անճշտություններ, որոնք և աշխատել եմ ուղղել երկրորդ հրատարակության առիթով։

Հայաստանում պահպանված մի շարք փաստաթղթերի լույսի ներքո, ես հանգեցի այն եզրակացության, որ Սարդարապատի ճակատամարտը հանդիսացել է ճշմարիտ համաժողովրդական պայքար բռնակալների դեմ, կազմակերպվել և առաջնորդվել է ոչ թե մի կուսակցության խմբապետներով, այլ հայ ժողովրդի միահամուռ և հերոսական ջանքերով։ Տեսա նաև, որ սխալ մեկնաբանած եմ Մայիսյան բանվորա-գյուղացիական ապստամբության նշանակությունը և ուրիշ մի շարք դեպքեր, որոնք ունեցած են ճակատագրական նշանակություն։

...Հայրենական Հրազդանի ափերում, որտեղ ամեն ինչ հրաշալիորեն վերածնվում է, որտեղ հայ երգը հնչում է զորեղ և հմայիչ, և հայ ժողովուրդը իր ճիգը խառնելով եղբայրական մյուս ժողովուրդների ճիգերին, ստեղծում է պատմության մեջ չտեսնված մի նոր կյանք, ես ևս մաքրաջրեցի իմ վեպի որոշ տեղերը»։

Վեպի հեղինակը հիանալի կերպով կարողացել է ցույց տալ, որ դաշնակցության տխրահռչակ տիրապետության տարիները փորձանք ու դժբախտություն եղան հայ ժողովրդի համար։

Դեռ վեպի առաջին տարբերակում հեղինակը որոշակի դրսևորել էր իր բացասական վերաբերմունքը դեպի դաշնակցությունը և նրա արկածախնդրական տակտիկան։ Նա ճշմարտացիորեն ցույց էր տվել այսպես կոչված դաշնակիցների՝ Ամերիկայի, Անգլիայի և այլ եվրոպական պետությունների սին խոստումներով դեպի կործանում գնացող հայ ժողովրդի դառը ճակատագիրը։ Սուր իրոնիայով նա մերկացրել էր դաշնակցական զինվորականության ու մաուզերիստների ավազակային բարքերը։

Վեպի թերություններից պետք համարել այն, որ թույլ են պատկերված վեպում ժողովրդի անմիջական ներկայացուցիչները՝ աշխատավորները։ Ճիշտ է, տարբեր առիթներով, երբեմն նույնիսկ մեծ պատկերավորությամբ նա կարողացել է արտահայտել հայ գյուղացիության դժգոհությունը դաշնակցական կարգերից։ Շատ ուժեղ պատկեր է այդ տեսակետից, օրինակ, ամուսինը կորցրած հայ գեղջկուհու դաշնակցական կառավարության դեմ զայրույթի տեսարանը, բայց ընդհանուր առմամբ դա վեպի թույլ գիծն է։ Եվ դա միանգամայն հասկանալի է, տասնյակ տարիներ հայրենիքից հեռու, կտրված հայ գեղջուկից ու բանվորից՝ նա չէր էլ կարող կերտել աշխատավորության ներկայացուցիչների կենդանի, հյութեղ կերպարներ։ Սակայն նա կարողացել է հաջող պատկերել աշխատավորության հոգեբանության ընդհանուր մթնոլորտը, նրանց որոշակի դժգոհությունը դաշնակցական տիրապետությունից և նրանց հստակ արտահայտված համակրանքը դեպի կոմունիստները և նրանց գաղափարները։

Կոստան Զարյանը շատ կարող վարպետ է դեպքերի ու բնության նկարագրությունների, մարդկանց բնավորության ու խառնվածքի պատկերման։ Նա կարողանում է շատ ժլատ ու սեղմ միջոցներով ստեղծել այն պայմանների լայն պատկերը, որը ծնունդ էր տալիս մանր-բուրժուական մտավորականությանը, ձևավորում նրա հոգեբանությունը։ Հյութեղ, պատկերավոր գույներով է ներկայացված վեպում քաղքենիական գծուծ իրականությունն ու միջավայրը։

Ամբողջապես վերցրած «Նավը լեռան վրա» վեպը խոշոր սոցիալական կտավ է, հասարակական բարձր արժեք ունեցող նշանակալից գեղարվեստական գործ։ Վեպի հրապարակ գալն արդեն վկայում էր հեղինակի հոգեբանության, նրա սոցիալական մտածողության, ստեղծագործության մեջ սկսվող լուրջ շրջադարձի մասին։

*
* *

Այդ շրջադարձի ավելի ցայտուն մի արտահայտությունը հանդիսացավ 1948 թվականին նրա հրապարակած «Սրտի ճանապարհով» բանաստեղծությունների շարքը, որը նա գրել էր դեռ 1925 թվականին։

Ի՞նչ շարժառիթներ դրդեցին [illegible] գրության հանձնել [illegible] առաջ գրված գործերը։ Բնական են այն հրաշք փոփոխությունները, որ կատարվեցին այդ տարիների ընթացքում իր հայրենիքում, և որոնց նա, թեկուզ և հեռվից, պետք է հետևեր։ Իրական փաստերով նա պիտի համոզվեր, որ կոմունիզմի մասին եղած խոսքերը պարապ երազանք չեն, այլ շքեղ իրականություն, որ արդեն բացվել են «դռները փղոսկրե գալիք օրերի», որ «Նոր հայ է եկել», «Եվ նա ասում է».

Մենք էլ չենք ուզում՝ դժբախտ պատ-
մության արձագանքներով
Սուտ և կեղծավոր, չինծու երգերով
Ապրել:
Մենք ուրանում ենք՝ հանուն նոր
կերտվող այս Հայաստանի
Հին երգերը՝ պառաված կնոջ
ձայնով հեկեկող մոտիկ անցյալի:

Այն, ինչ կատարվել է այդ տարիների ընթացքում իր հայրենիքում, լրիվ իրավունք է տալիս իրեն հպարտորեն ասելու.

Հայոց երկիրը ոտքի է կանգնել
Ինչպես մի հսկա՝ վիթխարի, ջահել՝
Եվ իր լեռների մենությամբ պայծառ
Նայում է վստահ աշխարհին արար:
Նոր հայ է եկել:

Նոր կյանքի կառուցման ծրագիրը տվել էր «Վլադիմիր Իլյիչ Լենինը», որն ասում էր. «Պետք է որ քանդվի, անարգար ու սին աշխարհը այս հին» «բախտավոր մի կյանք շինելու համար»։ Գալով այս նոր համոզման՝ Կոստան Զարյանը վերջնականապես երես պիտի դարձներ քաղաքական վտարանդիների այն նեղ խմբից, որոնց մամուլում դեռ երեկ տպագրում էր իր գործերը։

Այսուհետև իր հայացքը ուղղված է միայն դեպի Սովետական Հայաստան, ուր շոշափելի իրականություն էր դառնում հայ ժողովրդի երջանկության մասին իր վաղեմի երազը։ Նա պատեհ առիթ պիտի որոնի նորից վերադառնալու իր ժողովրդի գիրկը։

Այսօր Կոստան Զարյանը նորից իր հայրենիքումն է, իր հարազատ ժողովրդի գրկում։ Նա, որ անցավ երկար ու դժվարին ճանապարհ, ունեցավ հակասություններ ու մոլորություններ, հաճախ տեսողությունը կորցրած մարդու նման խարխափեց անորոշ ուղիներում, տեսավ բազում երկրներ ու ժողովուրդներ, երկար տարիներ ապրեց «Ազատ աշխարհ» կոչվող դրամատիրական «դրախտում», այսօր ասում է ամբողջ աշխարհին, որ ինչպես իր ժողովրդի, նույնպես և ամբողջ մարդկության միակ փրկությունը կոմունիստական գաղափարների հաղթանակի մեջ է։

Տաղանդավոր գրողը թեկուզ ուշ, բայց ի վերջո գտավ ճշմարտության ուղին։ Իր արդեն առաջացած տարիքում այդ ևս ստեղծագործական գովելի սխրանք է։

8012-63
Գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм.ССР
им. А. Мясникяна
Մյասնիկյանի անվան
digitised by A.R.A.R.@

Անկեղծ սերը աշխարհի

ՇԱՀԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մեր քաղաքում շատերն են միմյանց ճանաչում: Ճանաչում են հենց այնպես, առանց ծանոթ լինելու, առանց անունը կամ զբաղմունքը իմանալու...

Կենտրոնական փողոցներում, հատկապես Նկարչի տան մերձակայքում, հաճախ կարելի է հանդիպել բարձրահասակ, արտահայտիչ դիմագծերով, թուխ մի աղջկա: Համարյա իրար միացած սև հոնքերը ավելի են սրում աչքերի կրակոտ արտահայտությունը: Ընկերոջ կամ ծանոթի հետ անցնելիս նա սովորաբար տաք-տաք վիճում է: Վիճում է և սակայն՝ իրեն յուրահատուկ ժպիտը միշտ դեմքին: Նա թողնում է լեռնային, արևային աղջկա տպավորություն:

Երևանում այդպես շատերն են ճանաչում գեղանկարչուհի Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանին:

* *

Արվեստի երկի գնահատությունը, սիրելը կամ չսիրելը կախված է նրանում տրոփող հույզերի մաքրությունից, անկեղծությունից: Տաղանդն ու անկեղծությունը անբաժան արժանիքներ են: Անկեղծությունը ավելացնում, ներգործող է դարձնում ստեղծագործողի կգացմունքներն ու մտքերը, լուսավորում է արվեստագետի հոգին տանող ճանապարհը:

Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանը պատկանում է այն արվեստագետների թվին, որոնք թեմատիկ-կոմպոզիցիոն կտավներ չեն ստեղծում, փիլիսոփայական լայն ընդհանրացումներ չեն կատարում: Դա չի նշանակում, իհարկե, որ նկարչուհու գործերը կապված չեն ժամանակի հետ, կուրկ են հույզող մտքերից: Լավինիան պատկեր չի հորինում, այլ պարզապես նկարում է այն, ինչ տեսնում է շուրջը, ինչ իրեն գրավում է, ինչ սիրում է: Նա նկարում է բանվորների, գյուղացիների, արվեստագետ ընկերների դիմանկարներ, գյուղական, դաշտային բնանկարներ և նատյուրմորտներ: Նկարելիս նկարչուհին կապված է բնորդի հետ և նրանում չի ջանում տեսնել ավելին, քան բնորդն ինքն է: Նա տալիս է տեսածի ճշմարտացի պատկերը, սակայն ոչ երբեք բնապաշտական արտահայտությունը: Նրա ստեղծագործությունը դառնում է տեսածի ներքին ընկալման անմիջական թարգմանը: Հետևաբար, նրա գործերում կարևորը ոչ թե այն է, թե նա ինչ է սիրում, այլ այն, թե իր տեսածը ինչպես է սիրում: Հենց այդ ինչպես սիրելն էլ նրա արվեստի նպատակն է, խնդիրը: Իրենց արվեստով այդպիսին են եղել բազմաթիվ նկարիչներ, օրինակ՝ Կ. Կորոն, Կ. Կորովինը, մեր Աճաքեյանը: Չնայած խնդրի նույնությանը, նրանք լիովին տարբեր են իրարից: Յուրաքանչյուրն ստեղծել է ինքնատիպ մի աշխարհ, համապատասխան իր մարդկային անհատականությանը, խառնվածքին:

Կարծում ենք, այսպիսի արվեստագետների համար արտաքին աշխարհի սեփական ընկալումը դիտողի սրտին հասցնելու խնդրում բացառիկ նշանակություն ունի անկեղծությունը: Դա Լավինիայի ստեղծագործության կարևոր արժանիքն է: Լավինիան ունի պարզ, անմիջական բնավորություն: Այդ անմիջականությունը խանդավառող է, կրակոտ և իր մեջ ամփոփում է ինչ-որ մաքուր բան: Բնավորության այս գիծը որպես շրջապատի հանդեպ ցուցաբերվող վերաբերմունք, հանդես է գալիս ստեղծագործության մեջ նույն ուժով, նույն գրավչությամբ:



Լ. Բաժբեուկ-Մելիքյան. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՓՈՐՏՐԵ (1961 թ.):



Լ. Բաժբեուկ-Մելիքյան. ՀԱՅՐ, ՆԿԱՐԻՉ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԺԲԵՈՒԿ-ՄԵԼԻՔՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ (1961 թ.):

...Արվեստանոցում, սեղանի վրա կճուճներ են դրված: «Իմ սիրելի, անփոխարինելի բնորդներն են սրանք»,— ասում է նկարչուհին: Եվ իրոք, հնօրյա այդ կճուճները նրա կտավներում մերթ երևում են ասես շուրջպար բռնած, մերթ անվրդով նստոտած, մերթ վրձիններով լեցված ֆոն են դարձել ինքնանկարներում:

Վերջին տարիներին են ստեղծվել «Կճուճներ» և «Կակտուսներ» նատյուրմորտները: Այստեղ նկարչուհին պատկերել է իր շատ սիրած առարկաները՝ ազգային ոճի կարպետ՝ վրան կճուճներ, թաղարներ դասավորված: Այդ աշխատանքներն ունեն գեղանկարչական յուրօրինակ լուծում: Օրինակ, «Կակտուսները» ամբողջացած են մուգ կարմիր, սև գույներով, կանաչի տարբեր երանգներով, որոնք կապմել են սքանչելի ներդաշնակություն: Ազգային շնչով տոգորված, մտերմիկ մի անկյուն է ստեղծել նկարչուհին, որն ամենից առաջ իր պատանեկան խանդավառ սիրո աշխարհն է: Այդ աշխարհով անհնար է չհիանալ, չոգևորվել: Նկարչուհու աշխարհը գրավում է դիտողին, դառնում նաև նրա աշխարհը:

Նշված նատյուրմորտները և ընդհանրապես Բաժբեուկ-Մելիքյանի հաջողված գործերը կրում են գեղանկարչական վարպետության կնիք: Նկարչուհին հավատարիմ է մնում առարկայի, բնության տեսարանի, կերպարվող անձնավորության արտաքին, իրական ձևին և ձգտում է, ինչպես ասում են՝ «նման նկարել»: «Եթե նման չլինի, ուրեմն ես չեմ սիրել բնորդը»,— խոստովանում է նա: Նրա եռանդուն, առարկան խորը ընդգրկող գծանկարը մանրամասներից չի կառչում: Այն ընդգծում է գլխավորը, ստեղծում ներքին լարում ու համարժեք դառնում գունանկարին: Այսպիսով, նկարչուհու կտավներում բնորդը և՛ նման է ստացվում, և՛ նյութական, և՛ գեղանկարչորեն արտահայտիչ: Նրան խորթ են վառ, ճչացող գույները: Նա սիրում է կարմրի, կանաչի, դեղինի և այլ գույների կուսպը, խտացրածը: Հողեղեն ինչ-որ բան կա նրա կոլորիտում:

Լավինիայի ստեղծագործական կարգացումը ընթացել է և ընթանում է թե՛ թեմաների հարստացման և թե՛, մանավանդ, գեղանկարչական որակի բարձրացման ուղիով:

Նկարչուհու անցած ստեղծագործական ճանապարհի հանրագումարը հանդիսացավ 1962 թվականին Նկարչի տանը բացված ցուցահանդեսը, որի հինգ մասնակիցներից մեկը Լավինիան էր: Նրա արվեստը գնահատողների մեջ հատկապես ամուր տպավորվեց ցուցադրված բնանկարներից «Զովունին»:

Բնանկարը գրված է լայն վրձնահարվածներով, բանաստեղծական շնչով: Տաք, ինտենսիվ դեղիններով և դարչնագույնով լուծված կոլորիտը պերճախոս վկայում է բնության տեսարանի թողած առաջին, ոգևորիչ տպավորության մասին: Նրանում լիովին բացված է բնավայրի խստաշունչ պոեզիան, որը դիտողին կրկին անգամ հիշեցնել է տալիս նկարչուհու վարակող սերը:

Հայրենի բնությունը պատկերող կտավների մեջ «Զովունին» լավագույններից մեկն է: Նկարչուհու այս տարի կատարած բնանկարներն իրենց տրամադրությամբ ավելի հուզախառն են, ալեկոծ: Դրանք նրա ստեղծագործության մեջ կարծես կանխորոշում են մի նոր, ավելի խորը բովանդակություն:

Արվեստագետի դիմանկարների գլխավոր արժանիքներից մեկը մարդուն ճշմարտացի, պարզ, անպաճույճ ներկայացնելն է: Աչքի են ընկնում Նիկոնովի, Ռ. Զարյանի, Նիսսկու, Է. Պետրոսյանի դիմանկարները: Մասնավորապես պետք է նշել նկարչուհու հոր՝ թբիլիսաբնակ հանրահայտ նկարիչ Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի դիմանկարը: Նկարիչը պատկերված է արվեստանոցում, իր ստեղծած մի շարք կտավների առջև: Նա նստած է ձեռքերը ծնկներին, ուշադիր հայացքը դիտողին հառած: Թվում է, թե նա հազիվ է նստել, ընդամենը մի քանի վայրկյանի համար: Լավինիան կարողացել է որսալ էականը, պատմել դիտողին կերպարի անհանգիստ, որոնող ներաշխարհի մասին: Այս դիմանկարը ձեռք է բերել Լենինգրադի Ռուսական թանգարանը, իսկ վերջերս ցուցադրվել է Ստոկհոլմում և Բեռլինում:

Առանձնակի գրավչություն ունեն խմբանկարները՝ «Քուչակի տարեց կանայք», «Հնաբերդ գյուղի սովխոզի բանվորները» և այլն: Դրանցում ֆիգուրների կանխամտածված դասավորություն չկա: Մարդիկ պարզապես նստել են, ինչպես կնստեին, ասենք, լուսանկարվելիս: Նրանց բնավորությունները մինչև վերջ բացահայտված չեն, ոչ էլ դեմքերը՝ մինչև վերջ նկարված: Սակայն պարմանալի խոսուն են, կենդանի: Թվում է, թե մեր ժամանակակիցների կերպարների բնավորության մեջ Լավինիան տեսել ու շեշտել է այն գծերը, որոնք նաև իրենն են: Պատկերված մարդիկ անմիջական են, պարզ: Նրանց բնավորության այդ համակրելի հատկանիշներն է նկարչուհին խտացնում, ընդհանուր հայտարարի բերում: Թերևս սա խմբային դիմանկարի ճիշտ լուծման ճանապարհներից մեկն է:

«Քուչակի տարեց կանայք» խմբանկարը դիտելիս ակամա հիշում ես Տերյանին՝ «Սիրտդ թող միշտ խնդա կամ լա, մահ է մթին, երբ լուռ է նա»: Լավինիայի սիրած հերոսները իսկապես կամ ուրախ են, կամ տխուր, բայց բնավ երբեք քարացած, անարյուն: Նրանք աշխույժ են, շարժուն, գործունյա, հենց դրանով էլ՝ ժամանակակից:



Լ. Բաժբեուկ-Մելիքյան. ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ (1963 թ.):

* *

Այս հոդվածում խոսեցինք Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանի միայն մի քանի լավագույն նկարների մասին: Հարկ չհամարեցինք անդրադառնալ նրա միջակ, կամ անհաջող կտավներին, որպիսիք անշուշտ կան նկարչուհու արվեստանոցում: Փոխարենը կցանկանայինք հիշել, որ Լավինիան մեր երիտասարդ այն արվեստագետներից է, որը շատ է սիրում աշխատել: Աշխատասիրությունը նրա երկրորդ բնավորությունն է: Նրա անկուսպ ցանկությունն է՝ հաճախ դուրս գալ քաղաքից, լինել հայրենի դաշտերում, դաշտի աշխատավորների մեջ: Նրանց հետ է Լավինիայի սիրտը, հարազատ հողին են կապված նրա անդադրում ու ավյուն որոնումները, նրա հաջողությունն ու անհաջողությունը...

...Հայաստանի Պետական պատկերասրահում ցուցադրված է Բաժբեուկ-Մելիքյանի «Քանդակագործուհու արվեստանոցում» կտավը: Գեղանկարչորեն լավ կատարված այդ գործում աշխատանքով հափշտակված քանդակագործուհու կերպարը մեկ հիշեցնում է աշխատանքով նույնքան ոգևորվող Լավինիային: Աշխատանքի այդպիսի սեր ունեցող նկարչուհին առաջիկայում չի կարող մեզ չուրախացնել նորանոր, առավել հաջող գործերով:





Լ. Բաժբեուկ-Մելիքյան. 1. ՄԱՐԻԿ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ (1962 թ.): 2. ՍԱՌԻՐ (1963 թ.):

digitised by A.R.A.R.@



Լ. Բաժբեուկ-Մելիքյաե. ԻՆՔՆԱՆԿԱՐ: 1963 թ.

Լ. Բաժբեուկ-Մելիքյաե. ՁՈՎՈՒՆԻ: 1961 թ.

digitised by A.R.A.R.@



Լ. Բաժբեուկ-Մելիքյան
Առավոտը Ադրաչում: 1961 թ.



Լ. Բաժբեուկ-Մելիքյան.
ՆԱՏՅԱԽՄՈՐՏ.
ԿԱԿՏՈՒՍՆԵՐ:
1957 թ.

digitised by A.R.A.R.@

ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ են կապերը

ԲԱԶՄԱԿԻ ԿԱՊԵՐ

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի Հայկական ՍՍՌ տաղավարի բազմաթնակ ցուցանմուշներից մեկը պատմում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան երկրների հետ ունեցած կապերի մասին: Ստենդի վրա բաց կապույտով պատկերված է աշխարհի քարտեզը: Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանից դեպի տարբեր երկրներ են ձգվում տասնյակ ճառագայթներ: Դրանցից յուրաքանչյուրի ծայրին փակցված է տվյալ երկրի փոքրիկ դրոշը: Կողքին գրված թիվը ցույց է տալիս, թե Հայկական ակադեմիան այդ երկրի քանի գրադարանի հետ է գիտական կապեր հաստատել:

Ցուցահանդեսի այցելուն քարտեզից իմանում է, որ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիան կապված է Ամերիկայի Միացյալ Նահանգների տարբեր քաղաքների 94 գրադարանի հետ, որ Անգլիայի 42 գրադարաններ գիտական աշխատություններ, հոդվածներ, գիտական ինֆորմացիա են փոխանակում Երևանի հետ: Քարտեզի վրա փակցված 45 դրոշները և դրանց մոտի թվերը պատմում են աշխարհի 474 քաղաքների գրադարանների հետ ակադեմիայի գիտական կապերի մասին:

ՀՅՈՒՐԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Մի քանի օր Հայաստանում էր գտնվում «Շվեդիա—ՍՍՌՄ» ընկերության պատվիրակությունը՝ Բիրգեր Պերսոնի գլխավորությամբ:

Շվեդացի հյուրերը այցելեցին արդյունաբերական ձեռնարկություններ, մշակութային օջախներ:

Արտահայտելով պատվիրակության տպավորությունները, Բիրգեր Պերսոնը հայտարարեց.

— Այն ամենը, ինչ կենսագործել է հայ ժողովուրդը, ինչ մենք այստեղ տեսանք, ստիպում է մեզ դառնալ նրա քարոզիչները Շվեդիայում և ամենայն ճշտությամբ պատմել այն հսկա քայլերի մասին, որոնցով հայ ժողովուրդը ընթանում է դեպի իր լուսավոր ապագան:

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔԵՐ

Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստուհի Զարուհի Դոլուխանյանը վերջերս համերգներով հանդես եկավ Ռումինիայում: Նրա ելույթները լայն արձագանք գտան տեղի մամուլում: Թերթերը գնահատանքի հիացական խոսքեր էին նվիրում մեծատաղանդ երգչուհուն:

Կենտրոնական «Սքինթեա» թերթը լույս էր ընծայել Ադա Բրումարուի հոդվածը, որտեղ կարդում ենք. «Զարուհի Դոլուխանյանը ունի բոլոր յուրահատկությունները, որոնք դրսևորում են գեղարվեստական բացառիկ անհատականություն, եզակի ժանր ժամանակակից մեծ երգիչների մեջ, դրամատիկական բուռն խառնվածքի բանաստեղծական կատարյալ զգացողություն, վերլուծական իմաստություն և թռիչք ունեցող երևակայություն, անսպառ մի ձայն՝ մեծ գեղեցկությամբ օժտված յուրահատուկ հնչողականությամբ, որ արժեքավորված է երգի կատարյալ տեխնիկայով և բազմակողմանի երաժշտական մշակույթով:

Ռումինական օպերայի և բալետի թատրոնի մեներգչուհի Ելենա Չերնեյը արտահայտելով արվեստակցի իր տպավորությունները՝ «Վեաք Նոուա» շաբաթաթերթում գրում է. «Մեծ հրճվանք է ներկա լինել Դոլուխանյանի համերգներին, լսել նրա ոսկեհընչյուն ձայնը և միաժամանակ հետևել նրա մեծ արվեստով տառացիորեն կախարդված ունկնդիրների արտահայտությանը...

Զարուհին մեկն է այն մեներգչուհիներից, որ իրենց ընդարձակ երգացանկի բոլոր կտորները մեկնաբանում են նրանց հորինման ուրույն լեզվով: Եվ այս այն պատճառով, որ բացի երաժշտական ֆրազի հնչյունային և բնական ճշգրտությունից, նա բացառիկ ուշադրություն է դարձնում այն սերտ կապին, որ կա երաժշտության և խոսքի միջև»:

Երաժշտագետ Ալֆրեդ Հոֆմանը «Մագազին» շաբաթաթերթում գրում է. «Բեմական կեցվածքի ազնվականությունը, զգացողության թափանցող ուժգնությունը, այրող բոցը, նրա միշտ անխոնջ երևույթը, որ ոգևորում է արվեստագիտուհու էությունը, հարավի արևի տակ հասունացած հրաշալի պտուղի երանգը, որ նա դրոշմում է իր ձայնի հնչյուններին, այս բոլորը հանդիսանում են հատկությունները մի ամբողջության, որ Դոլուխանյանին շնորհում է իր ունկնդիրներին գերելու բացառիկ ուժ»:

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՑՑ

Մի քանի օր մեր հանրապետությունում հյուր էր ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցությանականավոր գործիչ Հենրի Ուինստոնը՝ իր որդու հետ:

Ամերիկացի հյուրը հետաքրքրությամբ ծանոթացավ հայ աշխատավորների առօրյային, լավագույն կյանք ստեղծելու նրանց անձնվեր ջանքերին:

Բարեկամական անկեղծ մթնոլորտում անցան նրա հանդիպումները Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի բանվորների, Արտաշատի արտադրական վարչության Մրգավան գյուղի «Նոր կյանք» գյուղատնտեսական արտելի անդամների, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դասախոսների և ուսանողների հետ:

Ուինստոնը այցելեց նաև Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմին առընթեր պարտիայի պատմության ինստիտուտը, լուսավորության մինիստրությունը, Հայաստանի պատմության թանգարանը, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, Երևանի գինու կոմբինատը, այցելեց այլ տեսարժան վայրեր, ներկա եղավ արվեստի հայ վարպետների համերգներին:

Ամերիկացի հյուրին ամենուր սրտագին ընդունելություն ցույց տրվեց:

ՆՈՐ ՄԱՐԴԻԿ, ՆՈՐ ԳՈՐԾԵՐ

Հին է Զամզլու գյուղը, ներկայիս Քասաղը: Ահա այդ առաջավոր գյուղի մարդկանց հիանալի աշխատանքի ու գործերի մասին կցանկանայինք մենք այստեղ պատմել:

Քասաղցիներն ունևոր են, կոլտնտեսությունը հարուստ՝ այդ երևում է ոչ միայն հաշվապահական գրքերից, այլ գյուղի բերքառատ դաշտերից, փարթամ արոտավայրերից, նորակառույց բնակարաններից, կոլտնտեսականների ապրելակերպից:

Կոլտնտեսության հացահատիկային մշակույթների ցանքերը զբաղեցնում են 700 հեկտար տարածություն: Դա երկու անգամ ավելի է, քան կոլտնտեսության հիմնադրման առաջին տարիներին զբաղեցրած ցանքատարածությունները: Իսկ ինչ վերաբերում է մեկ հեկտարի բերքատվությանը, այն 5,5 ցենտներից աճել, հասել է 18 ցենտների: Անցյալ տարի կոլտնտեսությունը հավաքեց 10 հազար ցենտներ հացահատիկ, իսկ այս տարի ավելին կլինի: Սա իսկական հարստություն է, որ ձեռք է բերվել Քասաղի հմուտ հողագործների աշխատանքով:

Ապարանի շրջանում ոչ մի կոլտնտեսություն եգիպտացորենի այնքան մեծ ցանքատարածություն չունի, որքան Քասաղի կոլտնտեսությունը: Իսկ այդ մշակույթի բերքատվությունը, անցյալի հետ համեմատած, ավելացել է կրկնակի չափով: Տարեցտարի ընդարձակվում են նաև ցանովի խոտաբույսերի բանջարանոցային մշակույթների ցանքատարածությունները: Փարթամորեն աճում ու բերքառատ է դառնում պտղատու այգին: Ծովի մակերևույթից մոտ 1.400 մետր բարձրության վրա գտնվող այդ լեռնաշխարհում այգեգործներն աճեցրել են միչուրինյան սորտի խնձոր, բալ, սալոր:

Կոլտնտեսությունը մեր հանրապետությունում հայտնի է նաև հացահատիկային մշակույթների սերմնաբուծությամբ: «Կարմիր սլֆահատ» ցորենի հայրենիքը Քասաղն է: Միության փորձակայաններում ստացած ցորենի այդ նմուշը մեկ մոտ առաջին անգամ մշակվեց Քասաղի կոլտնտեսության դաշտերում, ապա տարածվեց ոչ միայն Ապարանի, այլև հանրապետության մյուս շրջաններում: Հացահատիկի առատ բերք աճեցնելու գործում իրենց համեստ լուման ունեն կոլտնտեսության մեխանիզատորները, որոնց թիվը հասնում է քառասունի:

Կոլտնտեսության անասնապահական ֆերմաներում հաշվվում են 700 գլուխ խոշոր և 4.000 գլուխ մանր եղջերավոր անասուններ, մեծ թվով խոզեր, թռչուններ: Արագածի լանջերի ալպիա-

digitised by A.R.A.R.@

Կանանց համաշխարհային կոնգրեսի մի շարք պատվիրակություններ այցելեցին Սովետական Հայաստան, ծանոթացան հայ ժողովրդի տնտեսական ու մշակութային նվաճումներին: Հյուրերի մի խմբում էին Քենիայի, Տանգանիկայի, Անգոլայի և աֆրիկյան այլ երկրների կանանց պատվիրակությունները:

Նկարում՝ աֆրիկուհի հյուրերը Երևանի ծաղկած շուկայում:



ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐ

Սովետական երիտասարդ գրոսաշրջիկների մի խումբ վերջերս այցելեց Մեծ Բրիտանիա: Նրանք եղան տարբեր քաղաքներում, տեսարժան վայրերում, դիտեցին ճարտարապետական հին ու նոր կառույցները: Բայց ամենից հետաքրքիրը այն հանդիպումներն էին, որ տեղի էին ունենում սովետական ու անգլիացի երիտասարդների միջև: Նրանց արագորեն մտերմացնում, կապում էին բարեկամության, խաղաղության մասին ունեցած սրտագին գրույցները:

Զբոսաշրջիկների խմբում էր նաև Երևանցի երիտասարդ հայ նկարիչ Սպարտակ Սաֆյանը: Տուրիստական ամբողջ երթուղում նա թղթին էր հանձնում իր անմիջական ընկալումները, շրջապատից ստացած բարմ տպավորությունները, և այսպես մեկը մյուսի հետևից ծնվում էին նրա ճամփորդական ճեպանկարները: Դրանցում պատկերված են մշտահնք Լոնդոնի տեսարանները, Շոտլանդիայի ճարտարապետական հնամենի հուշարձաններով հարուստ Էդինբուրգը և այլ վայրեր:

Մինչ ընկերները գրուցում էին անգլիացի ուսանողների հետ, նկարիչը մի կողմ քաշված՝ ճեպանկարում էր նրանց դեմքերը, որտում բնորոշ կեցվածքները, արտահայտությունները:

Երիտասարդ նկարչի ճամփորդական նկարները բարեկամության լեզվով պատմում են հեռավոր Անգլիայի, նրա մարդկանց մասին:

ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ

Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի պատմական գիտությունների և բանասիրական ընկերության արևելագիտական բաժանմունքը հրատարակում է «Studia et Acta Orientalia» պարբերականը, որի էջերում տեղ են գտնում Ռումինիայի և այլ երկրների գիտնականների բանասիրական հոդվածները:

Պարբերականի չորրորդ համարը բացվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Ղարիբյանի «Բայի ձևաբանությունը հայ բարբառներում» խորագիրը կրող հոդվածով:

Պարբերականում կետեղված է նաև սովետահայ երիտասարդ բանասեր Սուրեն Ռոլանճյանի «Սովետական Հայաստանի հայ ձեռագրերի գանձը» վերնագրով հոդվածը, որտեղ հեղինակը տեղեկություններ է հաղորդում Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, նրա ձեռագրային հարստությունների, Մատենադարանի գիտական աշխատողների գործունեության, ինչպես նաև հայտնաբերված հայկական նոր ձեռագրերի մասին:

Բուխարեստում լույս տեսնող «Նոր կյանք» թերթը տպագրել է Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի ժողովրդական արվեստի թանգարանի տնօրեն Տանկրեդ Բրնըցյանուի գրախոսությունը «Studia et Acta Orientalia» պարբերականի չորրորդ համարի մասին: Գրախոսը ի թիվս այլ նյութերի արժեքավորում է նաև երկու հայագետների հիշյալ հոդվածները:

կան արոտավայրերն ու մարգագետինները կազմում են 2.500 հեկտար տարածություն, որոնք լիուլի բավարարում են անասնապահության խոտի պահանջը:

Անցյալ տարի կաթի համախառն արտադրանքը գյուղում հասավ 346 հազար կիլոգրամի, կամ ամեն մի կովից ստացվեց 1.560 կիլոգրամ կաթ: Ամեն մի ոչխարից կոլտնտեսությունն ստացավ 4,2 կիլոգրամ նուրբ բուրդ: Միայն ոչխարաբուծությունից կոլտնտեսությունը անցած տարի ստացել է 560 հազար ռուբլու եկամուտ, որը տնտեսության 1957 թվականի եկամուտից կրկնակի անգամ ավելի է:

Կոլտնտեսության անասնապահները պայքարի են ելել նաև այս տարի: Նրանք խոստացել են ամեն մի կովից ավելի շատ կաթ ստանալ, ամեն մեկ ոչխարից՝ ավելի շատ բուրդ:

Կովերի կաթնատվության բարձրացմանը նպաստում է հարուստ արոտավայրերի արդյունավետ օգտագործումը: Կոլտնտեսության «Միսխանա» կոչվող յայլաղը, որը մեր հանրապետության գեղատեսիլ վայրերից մեկն է, հայտնի է բարձունքներից գահավիժող սառնորակ ջրերով, փարթամ արոտավայրերով, որտեղ երեք ամիս արածում է հանրային հոտը և սնվում ամենակենսահյութ կանաչներով:

Աշխատասեր մարդկանցով հարուստ է Քասաղի կոլտնտեսությունը: Այստեղ 260 մարդ առանց բացառության աշխատում են հարավատ կոլտնտեսությունում և այդ պատճառով էլ կոլտնտեսային կյանքը բոլորին էլ երջանկություն է բերում: Գյուղում ակնածանքով են խոսում անվանի հովիվների, նախրապահների ու կթվորների մասին, ըստ արժանվույն գնահատում նրանց աշխատանքը: Քասաղ տարի է, ինչ Վլադիմիր Թովմասյանը կոլտնտեսությունում աշխատում է որպես հովիվ: Նա ամբողջ տարին՝ ամռան կիզիչ արևի տակ, թե ձմռան ցրտաշունչ օրերին, սիրով է խնամում իրեն հանձնված 400 ոչխարները: Այս տարի անվանի հովիվը 100 մաքուց ստացել է 119 գառ, չտալով և ոչ մի կորուստ:

Քասաղի կոլտնտեսությունը հարուստ է գյուղատնտեսական մեքենաներով ու գործիքներով, որոնք մեծապես թեթևացնում են կոլտնտեսականների աշխատանքը: Կոլտնտեսության եկամուտների աճը նրան հնարավորություն տվեց ձեռք բերել 4 տրակտոր, 3 կոմբայն, 6 շարքացան, կուլտիվատորներ, գութաններ և այլ մեքենաներ ու գործիքներ:

Գյուղը հիմնովին փոխել է իր դեմքը: Վերջին հինգ տարում 250 կոլտնտեսականներ կառուցել են նոր բնակարաններ: Կոլտնտեսությունը կարճ ժամանակամիջոցում կառուցել և շահագործման է հանձնել հացահատիկի պահեստ՝ 10 հազար ցենտներ տարողությամբ, երկու գոմ, տուֆակերտ ակումբ (ունի 11 սենյակ և 400 տեղանոց դահլիճ), որտեղ աշխուժորեն աշխատում են ինքնագործ խմբակները: Այժ գյուղում գործում է 8-ամյա դպրոց, ուր դասավանդում են տեղացի 14 ուսուցիչներ՝ բոլորն էլ բարձրագույն ու թերի բարձրագույն կրթությամբ:

Վերջին տասը տարվա ընթացքում գյուղի 300 երիտասարդներ ստացել են միջնակարգ և բարձրագույն կրթություն:

Գեղեցիկ են Քասաղի մարդկանց գործերը, նրանց լուսավոր առօրյան: Այստեղ ամեն ինչ ստեղծված է կոմունիզմ կառուցող մարդկանց ձեռքով:

Շատ շուտով ավելի գրավիչ տեսք կունենա Քասաղը. նրա մոտակայքում կծփան ապարանյան լճի ալիքները, որ ստեղծվում է Քասաղ գետի ջրերից:

Ա. ԱՖԱՆԴՅԱՆ

digitised by A.R.A.R.@



Մի տեսարան «Օթելլո» բալետից: Օթելլո՝ ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Վախթանգ Ճաբուկիանի:

Յայտուն է, հոյակապ, տաղանդավոր

ԳՐԻԳՈՐ ԶԻԳԻՆՅԱՆ

Անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների մշակութային կոլեկտիվների փոխայցելությունները արդեն գեղեցիկ սովորություն են դարձել: Հայ երաժշտասեր հասարակայնությունը միշտ էլ սիրով է դիմավորել եղբայրական Վրաստանի և Ադրբեջանի արվեստի վարպետներին, մշակութային կոլեկտիվներին, նրանց ելույթները դիտելով առանձին հետաքրքրությամբ:

Եվ դա հասկանալի է: Ստեղծագործական այդ կոլեկտիվների փոխայցելությունները սովորական հյուրախաղեր չեն: Այսպիսի հանդիպումները քաղաքական և գեղարվեստական մեծ նշանակություն ունեցող միջոցառումներ են, որովհետև դրանց շնորհիվ է՛լ ավե՛լի է ամրապնդվում Անդրկովկասյան եղբայրական երեք ժողովուրդների դարավոր փոխադարձ բարեկամությունը, նոր կարկ է տրվում նրանց մշակույթների զարգացմանն ու ստեղծագործական փորձի փոխանակմանը:

Անչափ ջերմ ու բերկրալի անցան Թբիլիսիի Զ. Փալիաշվիլու անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի հունիսին Երևանում առաջին անգամ տեղի ունեցած հյուրախաղերը: Այդ նույն միջոցին Թբիլիսիում հաջողությամբ իր ներկայացումները տվեց Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի ստեղծագործական կոլեկտիվը: Մեծ գոհունակությամբ ենք նշում, որ այդ թատրոնների հյուրախաղերը երկու հարևան ժողովուրդների համար դարձան անմոռանալի տոն, վերածվեցին սիրո, բարեկամության վառ ցույցի:

Ստեղծագործական մեծ բարեկամությամբ են կոդված երկու թատրոնների կոլեկտիվները: 1932 թվականի մայիսի 21-ին Թբիլիսիի օպերային թատրոնի բեմում տեղի ունեցավ Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի

ՄԵՐ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄԵԾ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՃԱՌԵՑ ՄԵԶ

Երևանը անվիճելիորեն գեղեցիկ է: Բայց ավելի գեղեցիկ են նրա մարդիկ: Նրանց սիրալիրությունը և անկեղծությունը նվաճեցին մեր սրտերը: Ես, շատ բեմահարթակներում հանդես եկողս, հազվադեպ եմ առիթ ունեցել շփվել այնպիսի հանդիսատեսի հետ, որպիսին Երևանյան հանդիսատեսն է: Նա ջերմ է, զգայուն, խանդավառ և միաժամանակ շատ խելոք ու խստապահանջ: Արտահայտվելով Վլադիմիր Մայակովսկու խոսքերով, նա հիանալի կերպով հասկանում է «ինչն է լավ և ինչն է վատ»: Իհարկե, այդպիսի հանդիսատեսի ոչ մի կերպ չես խաբի: Մենք այդ մասին գիտենք, և դա մեզ շատ բանով էր պարտավորեցնում: Հանդիպումը նրա հետ՝ մեծ ուրախություն է ամեն մի արվեստագետի համար:

ՎԱԽԹԱՆԳ ՃԱԲՈՒԿԻԱՆԻ

ՍՍՌՄ ժողովրդական արտիստ, Լենինյան և Պետական մրցանակների լաուրեատ

ՍՔԱՆՉԵԼԻ ԱՐՎԵՍՏ

Վերացական օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի ներկայացումները Երևանում դարձան մեծ ու նշանակալից երևույթ: Եղբայրական Վրաստանի արվեստի հաջողությունները ուրախացնում են մեզ: Այդ ներկայացումները վառվռուն ցայտունությամբ արտացոլում են վրաց տաղանդավոր ժողովրդի սմանչելի արվեստի նոր ու մեծ նվաճումները: Ուստի ներկայացումից ներկայացում մեծանում է նրանց արվեստի վարպետների մագնիսական ուժն ու հմայքը: Երևանցիները Փալիաշվիլու անվան թատրոնի ներկայացումներին են խառնում իրենց հիացմունքը, ջերմ սիրո և համակրանքի զգացմունքները, և Սպենդիարյանի անվան թատրոնի դահլիճը դառնում է տոնական, ոգևորվում մարդկային ամենաազնիվ մղումներով:

Մեր վրացի եղբայրների արվեստը՝ դարերի պատմությամբ, հարազատ և սիրելի է յուրաքանչյուր հայի: Ուրեմն նման փոխայցելությունները բոլոր դառնան գեղեցիկ սովորություն: Չէ՞ որ այդ մեր ժողովուրդների պահանջն է, մեր արվեստների հետագա ծաղկման երաշխիքը:

ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆ

Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ, Գ. Սունդուկյանի անվան թատրոնի գլխավոր ռեժիսյոր

digitised by A.R.A.R.@

ՄԵԾ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՋԵՐՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ես ամենևին էլ չարագործ չեմ, ինչպիսին ես ներկայանում եմ բեմում: Հոգով ես ռոմանտիկ եմ և ինձ համար խորթ չէ գեղեցկով ճիաճալը: Իսկ գեղեցիկ որքա՜ն շատ բան կա: Մով ժպիտներ, բարեկամական ձեռսեղմումներ, ծաղիկներ: Ամենուրեք ջերմ, մտերմական զույցներ, ուշադրություն, զգայնություն... Այդ ամենը խոսապես ճուզեց մեզ: Իսկ ինչպիսի՜ վիրխարի շինարարություն: Ես տեսա «Երևանյան Ջերյոմուշկիները»: Դա իրոք մի հաղար է հաղարի ներսում: Ես ճիացած եմ գեղատեսիլ ծառուղիներով՝ իրենց կենարար զովությամբ: Իսկ ջո՜ւրը: Գաղտնարար ասեմ. մեզ՝ պարողներիս համար, ճեղուկով տարվելը՝ շարիք է: Բայց Երևանում առհամարհեցի այդ: Ես այն խմում էի չտեսնված ագահությամբ և չկարողացա հագենալ: Եվ ինչ եր կարծում՝ ավելի դյուրին էի պարում: Մեծ շնորհակալություն ամենի համար, բանկագին եղրայրներ: Եկեք մեզ մոտ՝ Թրիլիսի և մենք ձեզ նույնպիսի սիրով և հոգատարությամբ կշրջապատենք:

ՋՈՒՐԱԲ ԿԻԿԱԼԵՅՇՎԻԼԻ
Վրացական ՍՍՌ ժողովրդական արտիստ, Պետական մրցանակի լաուրեատ



Անդրկովկասում առաջին կատարումը: Այն հսկայական հաջողություն ունեցավ: Տաս տարի հետո Երևանում բեմադրվեց Զաքարիա Փալիաշվիլու «Դաիսի» օպերան: Հայ ունկնդրին սիրելի դարձավ նաև Վիկտոր Դոլիձեի «Ռեթո և Կոտե» կոմիկական օպերան, որ հորդում է ուրախությամբ և անբռնապոս հումորով:

Թբիլիսիի օպերայի և բալետի թատրոնը կյանքի կոչեց չափազանց հարուստ կատարողական ուժեր: Այդտեղ իրենց ստեղծագործական կյանքը սկսեցին Ֆյոդոր Շալյապինը, Հալկանուշ Դանիելյանը, Սերգեյ Լեմեշևը: Այդտեղ փթթեց Սանդրո Ինաշվիլու և Դավիթ Գամրեկելու, Նադեժդա Խարաձեի և Մերի Նակաշիձեի անթառամ տաղանդը: Այդտեղ է ստեղծագործում արդիականության ականավոր խորեոգրաֆ Վախթանգ Ճաբուկիանին: Եվ, իհարկե, այստեղ չի կարելի չհիշատակել բեմի այնպիսի հիանալի վարպետների, ինչպես Պետրե Ամիրանաշվիլին, Բաբու Կրավեյշվիլին, Վերա Միգնաձեն, Ջուրաբ Կիկալեյշվիլին և շատ ուրիշներ, որոնք թատրոնին են տալիս իրենց բոլոր ուժերը, եռանդը, իրենց ամբողջ տաղանդը:

Եվ ահա վրաց բարեկամները մեկ մոտ են՝ Հայաստանում: Հիանալի ու կարմանալի ինքնատիպ արվեստ ցուցադրեցին թանկագին հյուրերը: Եվ երևանցիները նրանց սրտանց ասացին «մադլոբթ»— շնորհակալություն:

«Դաիսի», «Վարպետաց վարպետի աջը», «Մինդիա», «Օթելլո», «Գորդա», «Դև»: Ահա այն ներկայացումները, որոնք սիրով դիտեցին հալ հանդիսատեսները:

Կանգ առնենք նրանցից միայն մի քանիսի վրա:

...Դաիլիճը ներծծված է հրաշագեղ մեղեդիների անկրկնելի բույրով: Նրանք գերում են իրենց հմայքով ու գեղեցկությամբ: Երևանցիները լսում են Զաքարիա Փալիաշվիլու հանճարեղ ստեղծագործությունը՝ «Դաիսի» օպերան:

Նրա սյուժետային գիծը շատ բանով է համահնչուն մեր «Անուշ»-ին: Հերոսների միևնույն վշտալի ճակատագիրը, միևնույն բախումները: Ինչո՞վ մեկ ուրախացրեց ներկայացումը: Ամենից առաջ կատարողական բարձր կուլտուրայով:

Վաստակավոր արտիստուհի Մեդեա Ամիրանաշվիլու ստեղծած կերպարը աչքի է ընկնում իր բանաստեղծական հագեցվածությամբ: Նրա Մարոն խիստ տպավորիչ է: Արտիստուհին իր հերոսուհուն օժտում է բնավորության անսովոր գեղեցկությամբ: Մ. Ամիրանաշվիլու ձայնի ներապդման ուժը հուպականությունն է: Երգչուհու դրամատիկսը կուգակցվում է ձայներանգի մեղմության, բայց ամենից շատ նա կաշառում է իր դինամիկ գույների, ներբագույն արտահայտիչ նրբերանգների անսպառ հարստությամբ: Արտիստուհին խոր հուպականությամբ է անցկացնում իր սիրեցյալին ողբալու տեսարանը:

Վաստակավոր արտիստ Նոդար Անդղուլաձեն վերջերս է վերադարձել քարիա Փալիաշվիլու հանճարեղ ստեղծագործությունը՝ «Դաիսի» օպերան:

Նրա սյուժետային գիծը շատ բանով է համահնչուն մեր «Անուշ»-ին: Հերոսների միևնույն վշտալի ճակատագիրը, միևնույն բախումները: Ինչո՞վ մեկ ուրախացրեց ներկայացումը: Ամենից առաջ կատարողական բարձր կուլտուրայով:

Վաստակավոր արտիստուհի Մեդեա Ամիրանաշվիլու ստեղծած կերպարը աչքի է ընկնում իր բանաստեղծական հագեցվածությամբ: Նրա Մարոն խիստ տպավորիչ է: Արտիստուհին իր հերոսուհուն օժտում է բնավորության անսովոր գեղեցկությամբ: Մ. Ամիրանաշվիլու ձայնի ներապդման ուժը հուպականությունն է: Երգչուհու դրամատիկսը կուգակցվում է ձայներանգի մեղմության, բայց ամենից շատ նա կաշառում է իր դինամիկ գույների, ներբագույն արտահայտիչ նրբերանգների անսպառ հարստությամբ: Արտիստուհին խոր հուպականությամբ է անցկացնում իր սիրեցյալին ողբալու տեսարանը:

Նկարներում՝ 1. Մի տեսարան «Դև» բալետից: Դև՝ ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Վ. Ձաբուկիանի, Թամար՝ Վրացական ՍՍՌ ժողովրդական արտիստուհի Վ. Միգնաձե: 2. Մի տեսարան «Դաիսի» օպերայից: Մարո՝ Վրացական ՍՍՌ վաստակավոր արտիստուհի Մ. Ամիրանաշվիլի, Մալխազ՝ Վրացական ՍՍՌ վաստակավոր արտիստ Ն. Անդղուլաձե: 3. Մի տեսարան «Գորդա» բալետից: Գորդա՝ Վրացական ՍՍՌ ժողովրդական արտիստ Ջ. Կիկալեյշվիլի, իշխան Մամիա՝ Վրացական ՍՍՌ վաստակավոր արտիստ Ռ. Մաղալաշվիլի:

Լուսանկարները՝ Բ. Գազազյանի





digitised by A.R.A.R.©



Մի տեսարան «Գորդա» բալետի առաջին գործողությունից: Իշխանուհի Ջավարա՝ Վրացական ՍՍՌ վաստակավոր արտիստուհի Լ. Միտայշվիլի:

Լուսանկարները՝ Հ. Բաղդասարյանի (ՀԶԳ-ի ֆոտոխրոնիկա)

Իտալիայից, ուր կատարելագործում էր իր վարպետությունը և այդ չէր կարող նրա կատարման վրա չանդրադառնալ: Մալխազ-Անդղուլաձեն հենց սկզբից ցուցադրեց վոկալ մեծ արվեստ ու արտիստական նուրբ ճաշակ: Երգչի ձայնը անչափ գեղեցիկ է ու յուրատեսակ: Նույնիսկ առավել լարված պահերին Ն. Անդղուլաձեի երգը իր երաժշտական ձևը երբեք չի կորցնում: Մալխազի կենսականորեն ճշմարտացի, գեղարվեստորեն ավարտուն կերպարը աչքի է ընկնում իր անկրկնելի ինքնատիպությամբ: Մեր առջև հանդես եկավ դյութրավառ, առնական մի պատանի՝ մեղմ, կզայուն հոգով:

Ուրախալի էր հանդիպումը հայկական օպերայի հին բարեկամ, ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Պետրե Ամիրանաշվիլու հետ, որը Երևանի օպերային թատրոնի կազմակերպման առաջին իսկ օրերից ներկայացումներում ունեցած իր մասնակցությամբ նպաստում էր նրա զարգացմանը:

Արտիստը կերտում է կրքոտ, ըր ցանկություններում անսանձ վորապետի՝ Կիպալի համոզիչ կերպարը:

Ջվարճասեր Ցանգալայի դերում բնահատուկ սուր գույներ է գտնում արտիստ Ի. Շուշանիան:

Զորս տասնամյակ հնչում է վրացական օպերային արվեստի գոհարը: Հնչում է ու չի հնանում ունկնդիրներին ավելի ու ավելի համակելով երաժշտության թարմությամբ ու կերպարների բանաստեղծականությամբ:

Օթար Թաքթաքիշվիլու «Մինդիա» օպերան (ըստ Վաժա Փշավելայի պոեմի) ունկնդրին փոխադրում է մի բարձրլեռնային գյուղ, որտեղ իշխում է արյան վրեժի բարբարոս սովորույթը: Օպերայի կենտրոնում է քաջարի կորապետ Մինդիան, որ օժտված է թռչունների ու կենդանիների, խոտի ու ծառերի ձայնը հասկանալու արտասովոր ձիրքով: Մերձավորների դրդմամբ Մինդիան ծանր հանցագործություն է կատարում: Նրա ձեռքերը արյունով են շաղախված: Նա... մարդասպան է:

Բնությունը իր դեմքն է շուռ տալիս նրանից, նա դադարում է հասկանալ նրա ձայնը: Մինդիան տառապում է, նրան տանջում է խղճի խայթը: Եվ նա դաշունահարում է իրեն: Մեռնողի ջուրջը հավաքված համագյուղացիները երդում են տալիս մոռացության տալ սոսկալի սովորությունը, որ այնքան արցունք ու վիշտ է բերել իրենց:

Մինդիայի՝ խռովարար ու ակնիվ մարդու ուժեղ, գրավիչ կերպարը ստեղծել է երիտասարդ արտիստ Վ. Գլունչաձեն: Արտիստը հետևողականորեն ցույց է տալիս կերպարի դրամատիկական զարգացումը, նրա հակադիր վերամարմնավորումը:

Օպերայի երաժշտության արժանիքների մասին քիչ չի գրվել: Նրան յուրահատուկ են խոր ապգայնությունը, մեղեդայնության շնչի բուն լայնությունը: Հուլական-աշխույժ երաժշտությամբ, որ ներծծված է մարդկային տառապանքների պաթոսով, Օթար Թաքթաքիշվիլին հաստատում է հումանիստական բարձր իդեալներ:

Դավիթ Թորաձեի «Գորդա» բալետի հիմքում ընկած է Սուրամի բերդի կառուցման լեգենդը: Բալետը բեմադրող ՍՍՌՄ ժողովրդական արտիստ, Լենինյան մրցանակի լաուրեատ Վախթանգ Ճաբուկիանին, պահպանելով պարի էպիքական հմայքն ու դասական գեղեցկությունը, ներշնչել է նրան ժողովրդական վիպերգությունից քաղված առնականություն և ուժ: Հասարակականի ու անձնականի, հերոսականի ու քնարականի հմուտ զուգակցման շնորհիվ ստեղծվել են խորեոգրաֆիկ խիստ հակադիր տեսարաններ ու կոնֆլիկտային կացություններ, որոնք հանդիսատեսին գրավում են գործողության դրամատիկականությամբ և հուզական լարվածությամբ:

Բ. Մոնավարդիսաշվիլու Գորդան տիպական ռոմանտիկ հերոս է, որն իր ճակատագիրը սերտորեն կապել է ժողովրդի ճակատագրի հետ և նպատակ ունի ծառայել նրա շահերին:

Զարմանալիորեն քնարական է թագուհի Իրենան արտիստուհի Լ. Նադարեյշվիլու կատարմամբ: Նա վարպետորեն է հաղորդում հերոսուհու հոգեվիճակը:

Հպարտ ու վրիժառու Ջավարա իշ-

ՎՐԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՐԾԱՆՔԸ

Հարուստ է և բազմազան վրաց ժողովրդի երաժշտական մշակույթը: Մելիտոն Բալանչիվաձե, Դիմիտրի Արակիշվիլի, Զախարիա Փալիաշվիլի:

...Նրանց անունների հետ անխզելիորեն կապված է վրաց ազգային արվեստի զարգացումը: Այդ ականավոր կոմպոզիտորների բողած ստեղծագործական ժառանգությունը կազմում է վրաց ժողովրդի պարծանքը:

Օպերային թատրոնների փոխանակությունը եղբայրական վրաց և հայ ժողովուրդների միջև դարավոր բարեկամության ևս մի վառ վկայությունն է: Ես գրեթե ոչ մի ներկայացում բաց չթողեցի: Ամենից շատ ինչը՞ դուր եկավ: Ինչ խոսք, Ալեքսեյ Մաճավարիանու «Օթելլո»-ն: Ե՛վ երաժշտական, և՛ բեմական տեսակետից բեմադրությունն արժանի է ամենաբարձր գնահատանքի: Ալեքսեյ Մաճավարիանու, Վախթանգ Ճաբուկիանու և նկարիչ Սոլիկո Վիրսալաձեի վարպետությունը՝ իրոք հրաշալի է:

Ցանկանում եմ խոսքս ավարտել հանրահայտ երգի հետևյալ խոսքերով. «Պետք է բարեկամությունն ամրացնել»:

ԷԴՈՒԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր

Մի տեսարան «Մինդիա» օպերայի երկրորդ գործողությունից:



digitised by A.R.A.R.@

խանումիու հետաքրքիր, հիշողության մեջ մնացող կերպար է ստեղծում վաստակավոր արտիստուհի Լ. Միտայշվիլին:

Եվ, վերջապես, պարող Օթելլոյի մասին: Պարի լեզվով մավրին ստիպել ցնծալ ու տառապել, սիրել ու ատել... Դա իսկապես հուզական է, և պարզապես դժվար է այն պատկերել: Այն պետք է տեսնել:

Այո՛, Ալեքսեյ Մաճավարիանու բալետը դիտող ամեն ոք անտարբեր մնալ չի կարող, այն հուզում է նույնիսկ վճռատ կասկածամիտներին:

Ներկայացման հեղինակ Վախթանգ Ճաբուկիանին նոր ձևով է կարդացել մեծ անգլիացու անմահ ստեղծագործությունը, ըստ էության, գեղարվեստական նոր երկ է ստեղծել:

Բեմադրությունն իրականացված է դասական և սովետական խորեոգրաֆիկ արվեստի լավագույն ավանդներով: Ներկայացման հիմքն է հանդիսանում արտահայտիչ, գործուն պարը, որ բացահայտում է հերոսների զգացմունքներն ու մտահղացումները:

Նա, ում գոնե մի անգամ հաջողվել է տեսնել Օթելլոն Վ. Ճաբուկիանու կատարմամբ, չի կարող հուզմունքով չհիշել այն երջանիկ րոպեները, որ արտիստը պարգևում է նրան:

Դեռ չփթթած քնքուշ, ճերմակ վարդի նման մեր առջև հանդես է գալիս հմայիչ Վերա Ծիգնածեն Դեզդեմոնայի դերում:

Երևանցիներին իր խաղով ցնցեց հանրապետության ժողովրդական արտիստ Ջուրաբ Կիկալեյշվիլին: Նրա Յագոն չարի ու ստորության մարմնացումն է: Նրա գիշատիչ էությունը հատկապես վառ կերպով դրսևորվեց երրորդ գործողության վերջում, երբ նա օձի նման գալարվելով սողում է դեպի վըշտահար Օթելլոն և ուրուրի նման թևերը տարածելով կախվում է մավրի վրա:

Պարզ ու անպաճույճ է բալետի բեմական ձևավորումը. ուշադրությունը շեղող ավելորդ ոչ մի բան, ամեն ինչ կենտրոնացված է հոգեբանական դրաման ցայտուն դարձնելու համար:

Ներկայացումը իր հաջողությամբ շատ բանով է պարտական ՍՍՌՄ ժողովրդական արտիստ, դիրիժոր Օդիսեյ Դիմիտրիադու հիանալի արվեստին: Նա նրբորեն է կգում բալետի երաժշտությունը, բնավորությունների նրա գունեղությունն ու գեղակերպությունը: Դիրիժորին հաջողվել է բացահայտել պարտիտուրայի ամբողջ յուրակերպությունը: Նա հնչում էր ամբողջական, դինամիկ:

«Օթելլո» բալետը,— գրում է սովետական ականավոր կոմպոզիտոր Դ. Կաբալևսկին,— ես առանց տատանվելու պատրաստ եմ դասել վերջին տարիների մեր երաժշտական-թատերական արվեստի գագաթային նվաճումների շարքը»:

Մեկ ավելացնելու ոչինչ չմնաց:

...Հնչեցին վերջին ակորդները: Մարեց բեմահարթակը: Հյուրախաղերը ավարտված են: Իսկ մենք դեռևս գտնվում ենք այն խոհերի ու զգացմունքների ազդեցության ներքո, որ առաջացրին մեր թանկագին բարեկամների օպերային ներկայացումները:

ՋՄԱՅԼԻՋ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ՄԵԾԱՐՎԵՍ ԿԱՏԱՐՈՒՄ

Բ. ՍԵՅՐԱՆՅԱՆ

«Դժվար է շիրակցուն կարմացնել վարդափնջով»— ասել է արևելյան մի հին իմաստասեր:

Ճիշտ այդպես դժվար է թբիլիսցուն կարմացնել երգով, երաժշտությամբ:

Այս հինավուրց, բայց միշտ երիտասարդ քաղաքը ունկնդրել է մեծագույն երգիչների ու երաժիշտների: Նրա արքայական պալատների կամարների տակ գեղգեղացել է գուսանների մի քանի սերունդ՝ երգերի արքա, անմահ Սայաթ-Նովայի գլխավորությամբ: Բեմերից, էստրադաներից հնչել է համաշխարհային հռչակ վայելող օպերային վարպետ երգիչների ձայնը:

Մեծամեծ երաժշտագետներն անգամ ակնածանքով են այցի եկել թբիլիսցիներին, ընդունել այդ երաժշտասեր, ավելին՝ երաժշտապաշտ հասարակության ճաշակն ու հմտությունը:

Եվ սակայն, անուրանալի է այն հսկայական, կմայլեցուցիչ հաջողությունը, որ ունեցան Երևանի օպերայի և բալետի վարպետները Թբիլիսիում:

— Հարապատի, բարեկամի ձայնը լսելը քաղցր է, հոգեթով,— ասում է Վրացական ՍՍՌ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի լաուրեատ, ՍՍՌՄ կոմպոզիտորների միության քարտուղար Օթար Թաքթաքիշվիլին:— Մեր համերգային դահլիճների, թատրոնների բեմերից հաճախ են հնչել մեր մեծ երկրի եղբայրական ժողովուրդների լավագույն երգչախմբերի, առաջնակարգ մեներգիչների մեղեդիները: Բայց այն, ինչ ցուցադրեցին մեր հայ եղբայրները, անկեղծ ասած, վեր էր ամեն սպասածից:

Ի դեպ սա միայն կոմպոզիտոր Օթար Թաքթաքիշվիլու կարծիքը չէ:

Բայց ավելի լավ է սկսենք սկզբից: Իսկ այդ սկիզբը մայիսի 31-ին էր, այն արժանահիշատակ օրը, երբ Թբիլիսիի Զ. Փալիաշվիլու անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի թատրոնի շենքը բառիս բուն իմաստով նմանվեց պաշարված բերդի:

Հասկանալի է, որ տոմսատերերը թատրոնի շենքը պաշարելու հարկ չունեին: Դրանք մեծ մասամբ մուտքի տոմսի ակնկալությամբ, կամ հենց այնպես՝ երջանիկ պատահականությամբ, մի կերպ «ներս ընկնելու» հույսով եկած մարդիկ էին:

Մինչդեռ ներսում, ներկայացումն սկսելուց դեռ շատ առաջ, ասեղ գցելու տեղ չկար: Դահլիճը և ճեմասրահները լի էին վրացական արվեստի, գրականության, գիտության ակնառու գործիչներով, ֆաբրիկաների, գործարանների անվանի մարդկանցով, պարտիական, սովետական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունների ներկայացուցիչներով:

Կառավարական օթյակումն էին ՍՄԿՊ Կենտկոմի Անդրկովկասյան բյուրոյի նախագահ ընկ. Գ. Ն. Բոչկարլովը, Վրաստանի ԿՊ Կենտկոմի քարտուղարներ ընկ. ընկ. Գ. Ա. Գեգեշիձեն, Մ. Ի. Կուճավան, Դ. Գ. Ստուրուան, Շ. Ի. Ճանուղվածեն, Վրացական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընկ. Գ. Ս. Ձոծենիձեն:

Պալծառորեն լուսավորված բեմի աջ և ձախ կողմերից հայ և վրաց կուլտուրայի ներկայացուցիչների միաժամանակ հայտնվելը դահլիճում առաջ է բերում փոթորկալի ծափահարություններ:

Ներկաների անունից, ամբողջ վրաց ժողովրդի անունից, Վրաստանի ԿՊ Կենտկոմի, կառավարության, Վրացական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության հանձնարարությամբ թանկագին հյուրերին ողջունում ու հաջողություն է բարեմաղթում Վրացական ՍՍՌ կուլտուրայի մինիստր ընկ. Ծ. Բուաչիձեն:

Պատասխան խոսքով հանդես է գալիս Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստր ընկ. Հ. Մարգարյանը:

Թբիլիսի: Զ. Փալիաշվիլու անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի մուտքի մոտ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի ճերեքական ներկայացումից հետո:



digitised by A.R.A.R.@





Վերջապես բացվում է վարագույրը և կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայով սկսվում են Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի գաստրոլային ներկայացումները Թբիլիսիում:

...Սյունյաց վեհաշուք լեռներ: Աղջամուղջ: Աղջամուղջ, որ լցրել է ոչ միայն բնությունը, այլև պարսից բռնապետության տակ հեծող հայ ռանչպարի հոգին:

Ապստամբ լեռնականները պատվիրակ են ուղարկում հարևան վրաց աշխարհը, օգնություն խնդրում Վախթանգ VI թագավորից, և սա իր լավագույն կորապետներից մեկին՝ Դավիթ Բեկին ուղարկում է գլխավորելու ապստամբական շարժումը:

Պատմական այս ֆոնի վրա էլ ծավալվում են Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայի գործողությունները, մի օպերա, որի բեմադրությունը խորապես հուզեց և հմայեց Թբիլիսիի հանդիսատեսին:

Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Նար Հովհաննիսյանը, ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյանը ձայնային բարձր մշակույթով, արտիստական մեծատաղանդ խաղով ոչ միայն տեսանելի, շոշափելի դարձրին իրենց կերտած կերպարները, այլև հանդիսատեսին փոխադրեցին դարերի խորքը, նրանց դարձնելով դեպքերի, իրադարձությունների մասնակից:

Երկրորդ գործողության ընդմիջման ժամանակ երիտասարդ մի կին՝ կոշկի ֆաբրիկայի կոմունիստական աշխատանքի բրիգադի անդամ Նաթելա Գուլիաշվիլին, անկարող լինելով թաքցնել հիացմունքը, ասաց.

— Ես գիտեի, որ կոմպոզիտոր Տիգրանյանը երկար տարիներ ապրել, ստեղծագործել է Թբիլիսիում: Նա բաջ գիտե մեր երգը, երաժշտությունը: Բայց որ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի կոլեկտիվը այսքան խոր, այսքան լավ է պատկերել մեր կյանքն ու կենցաղը, երգն ու պարը.— այդ մեկը հաճելի նորություն էր ինձ համար:

«Դավիթ Բեկ» օպերայի հարուստ և ռեալիստական բեմադրության մեջ կգացվեց հայկական թատերական արվեստի խոշոր ներկայացուցիչներից մեկի՝ ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Վ. Աճեմյանի ռեժիսյորական բարձր մշակույթը, բեմադրության նըկարչական ձևավորման հեղինակ՝ ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի վրձնի կախարդանքը, նկարիչներ Խ. Եսայանի, Ա. Միրզոյանի, խորմեյստեր Կ. Կարապետյանի, ամբողջ անսամբլի մեծ վարպետությունը:

Երբ ավարտվեց ներկայացումը, Վրաստանի ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Դավիթ Թորաձեն ասաց.

— Հիանալի սկիզբ էր, այո՛, նախանձելի...

Ապա հանդես գալով հանրապետական «Զարյա Վոստոկա» թերթում, նա գրեց.

«Ամեն ոք, ով իսկապես սիրում ու գնահատում է երաժշտությունը, չի կարող չգերվել հայ ժողովրդի խորապես ինքնատիպ, պայծառ տաղանդով բնութագրվող երաժշտական մշակույթով: Հարազատ եղբոր պես Թբիլիսի ժամանած՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի գաստրոլային առաջին ներկայացումը վերածվեց երկու ժողովուրդների մեծ տոնի»:

Հաջորդ ներկայացումները ոչ միայն չթուլացրին, այլ ավելի ամրապնդեցին առաջինի փայլուն տպավորությունը: Հայ օպերայի և բալետի վարպետները հաճելի անակնկալներ էին պատրաստել Թբիլիսիի հանդիսատեսների համար:

Դրանցից առաջինը Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետն էր, որի ներկայացումը համընկավ հեղինակի ծննդյան 60-ամյակի օրվան և նշվեց վրաց երաժշտագիտության ականավոր դեմքերից մեկի՝ պրոֆեսոր Պավել Խուճուայի ջերմ, սրտագին ներածականով:

Արամ Խաչատրյանի աշխարհահռչակ «Սպարտակ» բալետի առաջին ներկայացման հաջողությունն այնքան հսկայական էր, որ երկրորդի ժամանակ դահլիճի բոլոր միջանցքները, անգամ աստիճանները, բոլոր օթյակները հեղեղված էին ոտքի վրա կանգնած մարդկանցով:

Բեմադրող-բալետմեյստեր, Լատվիական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Ե. Չանգան, դիրիժոր Ա. Քաթանյանը, արտիստներ Վ. Խանամիրյանը, Վ. Գալստյանը, Զ. Քալանթարյանը, Վ. Բորիսովը, Ֆ. Ելյանյանը, Ս. Մինասյանը, Լ. Սեմանովան ստեղծել են ռոմանտիկ բալետի լավ տրադիցիաներով համակված լայնարձակ ու դինամիկ ներկայացում:

Երկրորդ հաճելի անակնկալը Սովետական Միությունում առաջին անգամ բեմադրվող Ի. Ստրավինսկու «Էդիպ արքայի» փայլուն հաջողությունն էր: Ներկայացման նախօրեին Վրաստանի հեռագրական գործակալության թըղթակցի հետ ունեցած զրույցում թատրոնի գլխավոր ռեժիսյոր, Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Հր. Ղափլանյանն ասել էր.

«Այդ ընտրությունը պատահական չէր: Ստրավինսկու օպերայի բարդ, ինքնատիպ և չափազանց յուրահատուկ երաժշտությունն ու խմբերգը հնարավորություն էին ընձեռում փորձելու մեր թատրոնի արտիստների պրոֆեսիոնալ հասունությունը»:

Սպենդիարյանցիները հաջող բռնեցին բնությունը: Բախի, Հենդելի ավանդներով ստեղծված այդ բարդ ու դժվարին օպերա-օրատորիան հնչեց Սոֆոկլեսի ողբերգության անտիկ ոճին համապատասխանող երաժշտական խիստ, լակոնիկ ոճով:

ՆԵՐԴԱՇՆԱԿ ԱՄԲՈՂՋՈՒԹՅՈՒՆ

«Սպարտակ»-ը, իրօք որ, Արամ Խաչատրյանին նաև մեծ ստեղծագործություն է: Կոմպոզիտորի նորդառատ, կենսուրախ մուսայի կնիքով է դրոշմված բալետի երաժշտության տառացիորեն յուրաքանչյուր ռիթմը: Երաժշտությունն ունկնդրին հափշտակում է իր կրքոտությամբ, ռոմանտիկ ջերմությամբ, գրավում մեղեդիների պլաստիկությամբ և արտահայտչականությամբ, նվագախմբի գույների փայլով և բազմերանգությամբ:

«Սպարտակ»-ի յուրաքանչյուր տեսարանը յուրօրինակ երաժշտական որմնանկար է: Ամբողջ երաժշտությունը թափանցված է պարի տարրերով, բալետային վառ թատերականությամբ:

Առավել ևս հաճելի է նշել «Սպարտակ»-ի բեմադրող-բալետմեյստեր, Լատվիական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Ե. Չանգայի և բալետային ամբողջ կոլեկտիվի մեծ հաջողությունը՝ հիանալի պարող, Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստ Վ. Խանամիրյանի գլխավորությամբ:

Սքանչելի է «Սպարտակ»-ի հավատարիմ կնոջ՝ Ֆրիգիայի ողբերգական կերպարը Զ. Քալանթարյանի կատարմամբ: Եվ առհասարակ պարողների ու պարուհիների խումբը այդ ներկայացման մեջ հանդես է գալիս հասուն դերակատարմամբ:

Ինձ շատ դուր եկավ նաև ներկայացման գեղարվեստական ձևավորումը, որ պատկանում է Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Ա. Միրզոյանին:

Ա. ՄԱՃԱՎԱՐԻԱՆԻ
Կոմպոզիտոր, ՍՍՌՄ ժողովրդական արտիստ

digitised by A.R.A.R.@



Նկարներում՝ Թբիլիսի: Զ. Փալիաշվիլու անվան օպերային թատրոնի դահլիճում: «Դավիթ բեկ» ներկայացումից հետո հանդիսականները ջերմագին ծափահարում են ներկայացմանը մասնակցած արտիստներին, հաղորդելով իրենց հիացմունքը, մատուցելով նրանց ծաղկեփնջեր: Հայ արտիստները երախտագիտությամբ են ընդունում վրաց հանդիսականների ջերմ վերաբերմունքը և իրենց հերթին ծափահարում են նրանց:

— Հարկ է նշել, որ գլխավոր դերերգերը կատարողները (ռեսպուբլիկայի վաստակավոր արտիստ Ս. Դանիելյանը՝ Էդիպ արքա և ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյանը՝ Իոկաստա) գերազանցորեն լուծեցին իրենց առջև դրված խնդիրները,— ներկայացումը դիտելուց հետո ասաց Վրացական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Ռեվազ Գաբիչվաձեն:

Թբիլիսիի երաժշտասեր հասարակայնության անկեղծ հիացմունքին արժանացավ Տիգրան Չուխաջյանի «Արշակ Երկրորդ» օպերայի՝ հայկական այդ անկրկնելի(?) «Աիդա»-ի, բեմադրությունը: Մեր երաժշտական մշակույթի դասական բարձունքների այդ փայլուն վկայախոսությունը ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Միհրան Երկաթի կատարմամբ անջնջելի տպավորություն թողեց, հնչելով որպես հայրենասիրական կրքոտ մի հիմն:

Բեմադրող ռեժիսոր, ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Վ. Վարդանյանը, դիրիժոր, ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Ս. Չարեքյանը, դերակատարներ Տ. Սազանդարյանը, Ա. Հարությունյանը, Գ. Գալաջյանը, Դ. Պողոսյանը, Վ. Շորոխովը և մյուսները ստեղծեցին օպերային կուռ, միաձույլ ներկայացում:

Վրացական մամուլը խիստ բարձր կարծիք հայտնեց այդ բեմադրության առթիվ: Հանդես գալով ռեսպուբլիկական թերթերից մեկի էջերում, ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Դավիթ Անդղուլաձեն «Արշակ Երկրորդ»-ի բեմադրությունը համարեց հայ օպերային արվեստի մեծագույն նվաճումը:

Երևանցիների խաղացանկի մեջ պատվավոր տեղ էին գրավում Վերդիի մի քանի օպերաները, որոնցից «Պարահանդես-դիմակահանդես»-ը և «Օթելլո»-ն թբիլիսցիները դիտում էին տասնամյակների ընդմիջումից հետո:

Այդ օպերաների հաջողությունը շատ բանով պայմանավորվեց ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանի անկրկնելի խաղով: Արտիստուհին իր երեք օկտավանոց վիթխարի դիապազոնով, վիրտուոզ, մանրանուրբ կոլորատուրային տեխնիկայով, հազվագյուտ երաժշտականությամբ և բազմակողմանի մշակույթով հմայեց վրաց հանդիսատեսին:

«Նրա կատարման գեղարվեստական տպավորությունը վիթխարի է և ջերմ արձագանք է գտնում երախտապարտ ունկնդիրների մոտ»,—ասաց վրաց երաժշտագետ Գուլբաթ Թորաձեն:

Մի բան, սակայն, անտարակույս է: Շուրջ մեկ ամիս տևած գաստրոլային ներկայացումներն ընթացան անփոփոխ հաջողությամբ, վերածվեցին հայ և վրաց ժողովուրդների սիրո, բարեկամության ցույցի և հավաստի վկայություն հանդիսացան հայկական օպերային արվեստի հասունության, վերելքի ու պայծառ հեռանկարների մասին:

Թբիլիսի



Ներկայացումներից ազատ ժամերին հայկական օպերային թատրոնի արտիստները հաճույքով դիտում են Վրաստանի մայրաքաղաքի տեսարժան վայրերը: Ահա դուք տեսնում եք թատրոնի բալետի մի խումբ արտիստների, որոնք մոտորանավակով բռնում(?) են Թբիլիսիի ծովի վրա:

Լուսանկարները՝
Ա. Կլեկչյանի

«ՍՊԱՐՏԱԿ» ՀԵՐՈՍԱԿԱՆ ԲԱԼԵՏԻ ՀԱՄԱՐ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՄԵԾ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Նախքան «Սպարտակ»-ի վերաբերյալ իմ հիացմունքը հայտնելը, ես կամենում եմ անկեղծորեն ողջունել Հայաստանի արվեստի մեր քանկագին վարպետներին և նրանց ցանկանալ օպերային ու սիմֆոնիկ ստեղծագործությունները այնպես գեղեցիկ գրել, ինչպես դրանք ներկայացվեցին այսօր արևային Վրաստանում:

Ես ուզում եմ արտահայտվել սովետական փառաբանված կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետի մասին:

Այո՛, «Սպարտակ» բալետից ես մեծ հաճույք ստացա, այն աչքի է ընկնում երաժշտական հնչյունների դինամիկայով և գործող անձերի հարմոնիայի գեղեցկությամբ: Այդ իրոք հերոսական բալետ է: Իսկ երաժշտության հնչեղությունը բնորոշ է հեղափոխական ռոմանտիկայի համար: Իր հոյակապությամբ ու առնականությամբ առանձնապես հետաքրքիր է «Սպարտակ»-ի եզրափակիչ մասը:

Սրտանց շնորհավորում եմ Արամ Խաչատրյանին այդքան հաջող ներկայացման համար, որն ինձ և ընտանիքիս անդամներին պատճառեց հոգեկան մեծագույն հաճույք:

ՈՒ. ՋԱՓԱՐԻՁԵ

ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ, ՍՍՌՄ Գեղարվեստական ակադեմիայի իսկական անդամ, պրոֆեսոր

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Բարեկամներին հանդիպելը միշտ ուրախացնում է մարդուն: Առանձնապես, երբ այդ հանդիպումն այնպես պայծառ ու հետաքրքիր է, ինչպես Երևանի օպերայի և բալետի թատրոնի բեմադրած «Էդիպ արքա» ներկայացումը: Ցանկանում եմ սրտագին ու բարի խոսքեր ասել բեմադրության հեղինակներին՝ Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստ, ռեժիսոր Հր. Ղափլանյանին, Հայկական ՍՍՌ վաստակավոր դիրիժոր Ա. Քաթանյանին, և, իհարկե, դերակատարներին: Անմոռանալի է Ս. Դանիելյանը էդիպ արքայի դերում: Շատ ուժեղ տպավորություն է գործում Իոկաստայի դերում ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյանը:

Այս ներկայացման մեջ ամեն բան ուրախալի է՝ և՛ բեմադրությունը, և՛ ձևավորումը, և՛ գլխավոր դերերի վարպետ կատարումը: Ըստ իս՝ դա մեր հայաստանցի բարեկամների մեծ հաջողությունն է:

Զ. ՕՏԻԱՇՎԻԼԻ

Թբիլիսիի կերամիկական կոմբինատի բանվորուհի

digitised by A.R.A.R.@



Լուսավանի ձուլարանի մոդելների բաժանմունքի մետաղագործներ Իրանից հայրենադարձված Համազասպ Քալենքարյանը (աջում) և վարպետ Հաչիկ Սոխիկյանը ճամատեղ մշակում են մեքենայի նոր մոդելի նախագիծը: *Լուսանկարը՝ Ռ. Գևորգյանի*

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՔԻՄԻԿԱՏ

Երևանի «Խրոմպիկ» գործարանում սարքավորումների վերափոխման և տեխնոլոգիայի կատարելագործման շնորհիվ վերջերս առաջին անգամ ստացվեց բարձրորակ նատրիումի բիքրոմատ: Այդ արժեքավոր նյութը լայն կիրառում կգտնի լաքերի ու ներկերի, ինչպես նաև կաուչուկի արտադրության մեջ. այն ամրացնող նյութ կհանդիսանա բարձրորակ հավածուլվածքներ ստանալու համար: Նոր քիմիկատի արտադրության ժամանակ անջատվում է նաև հակալական քանակությամբ սուլֆատ, որը հումք է ծառայելու ապակու արդյունաբերության համար:

ՆՈՐ ԿԱՅԱՆ ԲՅՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Հայաստանի աստրոֆիզիկական նշանավոր աստղադիտարանի՝ Բյուրականի մոտերքում, Արագածի գեղեցկատես լանջերին կառուցվում է Լենինգրադի պետական համալսարանի հարավի աստղագիտական կայանը: Լենինգրադցի գիտնականները այս նոր կայանում հայ մասնագետների հետ կատարելու են էլեկտրալուսաչափական և աստղագիտական ուսումնասիրություններ:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է ԳՈՐԾԱՐԱՆԸ

Վերակառուցվում և ընդարձակվում է Աենինականի էլեկտրատեխնիկական գործարանը: Այստեղ՝ մոտ չորս հեկտար տարածության վրա, բացվել է շինարարական հրապարակ, ուր այժմ կառուցվում է արտադրական նոր մասնաշենք: Այդ շինարարության վրա ծախսվելու է ավելի քան 7 միլիոն ռուբլի:

Գործարանի վերակառուցումը կատարվում է այն հաշվով, որ այն մասնագիտացվի բարձր լարման էլեկտրացանցերի սարքեր արտադրելու համար: Վերակառուցումից հետո ձեռնարկության կարողությունը ավելանալու է մոտ 10 անգամ:



ԷԼԵԿՏՐԱՖԻԿԱՑՎԱԾ ՀԱՄԱԿ ՍԵՎԱՆ

Հայաստանի աշխատավորները վերջերս լսեցին ևս մի նոր փայլուն հաղթանակի մասին: Հանրապետության էներգետիկները ժամկետից երկու ամիս չուտ ավարտեցին Հրազդան—Սևան գծամասի էլեկտրիֆիկացման աշխատանքները և էլեկտրագնացքը սկսեց երթևեկել այդ նոր էլեկտրիֆիկացված հատվածով: Էներգետիկ շինարարները համախմբարար կարճ ժամկետում մեծածավալ աշխատանքներ կատարեցին. կոնտակտային ցանցի համար հրամայական չափով 600 էներգիանեն ու մետալ հենասյուներ և դրանք դասավորեցին 24 կիլոմետր գծամասում: Շինարարները միաժամանակ մոնտաժեցին էլեկտրատեխնիկական բարդ սարքավորումներ: Եվ ահա առնահանդեսի օրն է: Հրազդան են ժամանում Հայաստանի կոմպարտիայի և կառավարության դեկավարները, շինարարներ, մոնտաժողներ, էլեկտրագործներ, կայքի աշխատողներ:

Ժամը 4-ն անց է 45 րոպե: Գնացքը դուրս է գալիս Հրազդան կայարանից և ուղղություն վերցնում դեպի Սևան: Գնացքը վարում են մեքենավար Մկրտիչ Հովհաննիսյանը և հրահանգիչ Ռաֆայել Աբաջյանը: Նրանք երկուսն էլ ուրախ են, բայց, չէ՞ որ իրենց է վիճակվել առաջիքը էլեկտրագնացքը հասցնել Սևան:

Գնացքը սլանում է ծովի մակերևույթից 1900 մետր բարձրության վրա, գեղահմայիկ լեռների լանջերով, հազանանափի կանաչ ու փարթամ գաշտերով: Մի քանի րոպե և արդեն հետևում են մնում Դիմաշեն ու Գագարին կայարանները: Գնացքը կանգ է առնում Սևանում: Այստեղ կառամատույցում հավաքվել են շրջանի բազմաթիվ հերհայացուցիչներ, երեսեմ չերմ ծափահարություններով են դիմավորում ժամանողներին, որոնց մեջ են նաև Հայաստանի կոմպարտիայի ու կառավարության դեկավարներ. քններներ Ե. Ազատայանը, Հով. Բադդասարյանը, Յա. Ջարոբյանը, Ա. Քոչինյանը, Բ. Մաւրակյանը, Անդրկովկասյան երկաթուղու պետի առաջին տեղակալ Ի. Քարամիձեն և ուրիշներ:

Հայաստանի կոմպարտիայի ու կառավարության դեկավարները հավաքվածներին՝ շինարարներին ու էներգետիկներին չերմորեն շնորհավորում են Երևան—Սևան էներգետիկ էլեկտրիֆիկացումն ավարտելու առթիվ և մաղթում նոր հաջողություններ:

ՔԱՄՈՒՀՈՎ ԳԼԱՆՆԵԿՆԵՐ

Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունից վերջերս Երևանի ծխախոտի ֆաբրիկային ստացվեցին նորագույն ավտոմատ ագրեգատներ, որոնց շնորհիվ արտադրվելու են քամիով գլանակներ:

Այժմ ֆաբրիկայում ավարտվում են ստացված ագրեգատների մոնտաժման աշխատանքները և շուտով կրկսվի նոր արտադրանքի թողարկումը: Ագրեգատների համալիրը բաղկացած է քամիչ պատրաստող մեքենաներից և լցնող ու հավաքող մարքավորումներից:

Նախատեսվում է 1964 թվականին արտադրել մոտ 230 միլիոն հատ քամիով գլանակ:



Բլեան: Բարեկամության ծառուղին: (*Հ.Հ-ի ֆոտոխրոնիկա*)

digitised by A.R.A.R.@

ՆՈՐԱՏԻՊ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Էլեկտրամեխանիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական բաժանմունքի աշխատողները վերջերս նախագծեցին և պանգվածային արտադրության ներկայացրին նոր տիպի մի հզոր շարժիչ, որը կոչվում է «ԱՍԴ—20 Ռ»: Նախկինի համեմատությամբ, այս նոր շարժիչը ավելի արդյունավետ է և մոտ մեկ տոննայով թեթև:

Այժմ Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի № 15 բաժանմունքում սկսվել է այդ նոր շարժիչի արտադրությունը և առաջին նմուշները տվել են ցանկալի արդյունքներ:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՅԱՆՆԵՐ

Երևանի էլեկտրալամպերի գործարանում վերջերս շարք մտավ մի նոր արտադրական տեղամաս՝ ջրածնային կայանը: Մինչև այդ կայանի կառուցումը այստեղ ջրածինը սինթեզվում էր Կիրովականից ստացվող ամոնյակից, որի ինքնարժեքը բարձր էր: Այժմ նոր կայանի շնորհիվ ջրածինը ստացվում է ջրից հիդրոլիզի միջոցով, որը շատ էժան է ու արդյունավետ:

Գործարանում շուտով շահագործման կհանձնվի ևս մեկ այլ տեղամաս՝ ազոտային կայանը, որտեղ արտադրության կարիքների համար կբռղարկվի թթվածին:

ԼԻՏՎԱՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ

Կիրովականի արհեստական մետաքսի գործարանում երեք ամսով իրենց արտադրական ուսուցումն են անցկացնում Լիտվական Սովետական Հանրապետության Կաունաս քաղաքի մի խումբ ուսանողներ: Նրանք այստեղ՝ գործարանի առաջավոր մասնագետների օգնությամբ ծանոթանում և տիրապետում են արհեստական մետաքսի արտադրության տեխնոլոգիային:

Լիտվացի ուսանողների ուսումնառությունը Կիրովականի մետաքսի գործարանում եզակի չէ: Չնայած նոր է գործարանը, բայց այն արդեն դարձել է մետաքսի արտադրության կադրերի վերապատրաստման հիանալի դպրոց: Միայն այս տարի Լենինգրադից, Երևանից և այլ քաղաքներից այստեղ իրենց արտադրական ուսուցումն են անցկացրել ավելի քան 200 մարդ:



Մի տեսարան Ինգուրի ջրէկ կայանի շինարարությունից:
Լուսանկարը՝ Բ. Գազազյանի

ԿԱԹՆԱՄԱՆՆԵՐ ԹՂԹԻՑ

Երևանի կաթի կոմբինատում տեղադրվել են նոր ավտոմատ սարքավորումներ, որոնք հատուկ թղթից արտադրելու են ամաններ: Դրանք փոխարինելու են մինչև այժմ օգտագործվող կեսկիլոգրամանոց սովորական ապակետարաներին, որոնց մեջ վաճառվում է թարմ կաթը: Նոր կաթնամանները նախ տնտեսուհիներին կազատեն շշերը լվանալու և նրանց հետ պզուկ վարվելու ավելորդությունից, և հետո կտրվի ապակու հսկայական խնայողություն:

Արդեն այս տարի Երևանի առևտրական ձեռնարկությունները կոմբինատից կաթը կստանան և կվաճառեն թղթե այս հաճելի կաթնամաններով:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

ՎԱՐԴԵՆԻԿՈՒՄ

Օր-օրի գեղեցկանում, անճանաչելի է դառնում Մարտունու արտադրական վարչության Վարդենիկ գյուղը՝ նախկին Գյոզալդարան: Երբ մտնես գյուղը ամեն քայլափոխի կտեսնես տափակերտ կառույցներ, բարեկարգ, ծառապատ փողոցներ: Միայն վերջին տարիներին իրենց սեփական միջոցներով կոլտնտեսականները այստեղ կառուցել են ավելի քան 230 նոր ու լուսավոր առանձնատներ: Տնամերձ հողամասերում և փողոցների եզրերին միայն այս գարնանը գյուղի աշխատավորները տնկել են 24 հազար պտղատու և դեկորատիվ ծառեր:

Գյուղում գործում են մշակույթի և կուլտուր-կենցաղային շատ հաստատություններ՝ երկհարկանի կինոթատրոն, ակումբ, գրադարան, հիվանդանոց, դեղատուն, երկու միջնակարգ և մեկ ութնամյա դպրոցներ, մսուր-մանկապարտեզ, փոստհեռագրատուն և այլն:

Գյուղի մշակութային հետաքրքիր կյանքի մասին է խոսում նաև հետևյալ փաստը. գյուղում աշխատում են մեծ թվով բժիշկներ, ինժեներներ, գյուղատնտեսներ, մանկավարժներ, որոնց նեշող մեծամասնությունը տեղացիներ են:

Այո՛, ծաղկուն ու բարեկարգ գյուղ է դարձել Վարդենիկը, բայց նա ավելի գեղեցիկ կլինի մոտ ապագայում: Այժմ գյուղի զարգացումը իրականացվում է նոր նախագծով, որին համապատասխան շատ ու շատ բան է արվում այստեղ: Այսպես, կառուցվում են և շուտով շահագործման են հանձնվելու նոր հաշարանը, կենտրոնական խանութը և հյուրանոցը:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի էներգետիկայի ինստիտուտում ստեղծվել է էլեկտրոնային, թվային փորձնական հաշվիչ մեքենա, որ նախատեսված է Անդրկովկասի էներգասիստեմի աշխատանքի ամենանպաստավոր ռեժիմների որոշման հաշվարկումների համար: Դա հնարավորություն կտա էլեկտրակայաններում խնայել վառելանյութը, զուգորդել հիդրոռեսուրսների օգտագործումը ռոզման և էներգետիկ նպատակներով, նվազեցնել էլեկտրաէներգիային կորուստները — էներգասիստեմի ցանցում: Նկարում՝ լաբորատորիայի Ս. Դադյանցը և առաջատար ինժեներ Լ. Ժամհարյանը կատարում են թվային-հաշվիչ մեքենայի թվարանական հարմարանքի պրոֆիլակտիկ զննում:

Լուսանկարը՝ Ս. Բաղալյանի



digitised by A.R.A.R.@

ՊԱՐԳԵՎ ՀԱՅ ԵՐԳՉԱԽՄԲԻՆ

Բուլղարիայում տոնակատարեն նշվել է սլավոնական գրի և դպրության 1100-ամյակը: Մշակութային այդ տոնին նվիրված տասնօրյա հանդիսություններին մասնակցել է նաև Պլովդիվի «Ա. Խաչատրյան» շքանշանակիր երգչախումբը՝ ղեկավարությամբ Մ. Ժամագործյանի:

Քաղաքային ժողովրդական խորհրդի կազմակերպիչ հանձնախումբը գնահատելով հայկական երգչախմբի կատարողական վարպետությունը և տարվա ընթացքում նրա ծավալած հանրօգուտ գործունեությունը, առաջնությունը շնորհել է նրան:

Եզրափակիչ հանդեսում խմբին հանձնվել է փոխանցիկ դրոշը և դրամական պարգև: Այս մասին լուր է տպագրել Սոֆիայի «Երևան» թերթը:

ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Սոֆիայի «Երևան» թերթը իր վերջին համարներից մեկում գրախոսություն է զետեղել «Հայպետհրատի» կողմից լույս ընծայված «Հայրենաբաղձ հնչյուններ» ժողովածուի մասին, որ ընդգրկում է սփյուռքահայ 19 երգահանների շուրս տասնյակ մեներգեր ու խմբերգեր:

Գրախոսությունը ստորագրել է բուլղարահայ երաժշտական գործիչ Կ. Բալքայանը: Հոդվածագիրը գնահատանքի ջերմ խոսքի է արժանացնում ժողովածուն կազմողի՝ սովետահայ երաժշտագետ Ց. Բրուտյանի աշխատանքը:

«Ժողովածուի հրատարակությունը,— գրում է հոդվածագիրը,— ըսփյուռքահայ երգահաններուն որպես քաջալերանք ծառայելով, անոնց նոր ուժ ու եռանդ պիտի ներշնչե, հայրենասիրական ոգին պիտի բարձրացնե ու զանոնք մղե նոր ու արդյունավոր աշխատանքներու»:

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎՈՎ

Ամերիկահայ ջութակահարուհի Անահիտ Աճեմյանի անունը երաժշտական աշխարհին ծանոթ է 1946 թվականի առաջին ելույթից, երբ նա շահեց Նաումբերգի մրցանակը: Այդ ժամանակից ի վեր նրա Ամաթի ջութակը (շինված 1633 թվականին) հնչում է տարբեր քաղաքների համերգային բեմերից, և ամենուր նրա երևույթը արժանանում է երաժշտասերների և մամուլի գնահատանքին:

Անահիտի երաժշտական-կատարողական գործունեությունը սերտորեն կապված է իր քրոջ՝ դաշնակահարուհի Մարո Աճեմյանի հետ: Երկու քույրերը միասին թե առանձին կատարում են հայ երգահանների գործերը՝ դառնալով դրանց պրոպագանդիստը Միացյալ Նահանգներում: Նրանց երգացանկում առանձնապես մեծ տեղ են գրավում ամերիկահայ երգահան Ալան Հովհաննեսի ստեղծագործությունները: Հաճախ քույր երաժիշտները համարձակորեն ձեռք են զարկում ամերիկյան արդի գրեթե անծանոթ երգահանների երկերին՝ ուղի հարթելով նրանց համար:

Ինչպես տեղեկացնում է «Արև» թերթը, վերջերս Կանադայում և Ուեստ Քոստի համերգային ու համալսարանական սրահներում Աճեմյան քույրերի ունեցած ելույթները տարեշրջանի աչքի ընկնող իրադարձությունն են եղել:

Հայ ջութակահարուհու ելույթը Նյու-Յորքում, Թաուն Հոլ սրահում, արժանացել է երաժշտասեր հասարակության և մամուլի գնահատանքին: «Նյու-Յորք Թայմս» թերթը իր կիրակնօրյա համարի երաժշտական բաժնում մի ամբողջ սյունակ է նվիրել նրան: Նույն թերթը դեռ տարիներ առաջ գրել էր, թե «Աճեմյան ունի բացարձակ հակակշիռը մատներու և աղեղի շարժումներուն, և շնորհալի ականջ մը հնչունության և գունազարդման հանդեպ»:

«Թայմը» նրան համարել է «տաղանդավոր և ջերմ համակրելիություն մը», իսկ «Նյուզ Ուիքը» դրվատանքով է արտահայտվել, ասելով, թե նա ունի «հաչակ, հարտարություն և բարձրարվեստ երաժշտականություն»:

Անահիտ Աճեմյանը կապված է հայ համայնքի կյանքին, մասնակցում է նրա մշակութային ձեռնարկումներին:

ԱՍՄՈՒՆՔՈՒՄ Է ՀԱԿՈԲ ԿՅՈՒԼՈՅԱՆԸ

«Մեր նշանաբանն է Հառաջ» թերթը «Մշակութային արձագանք» վերտառության տակ թղթակցություն է տպագրել ասմունքող Հակոբ Կյուլոյանի Բեյրութում ունեցած նոր ելույթի մասին: «Վերջին տարիներու,— գրում է թերթը,— ասմունքի արվեստը երբ Մայր Հայրենիքի մեջ ծաղկեցավ աննախընթացորեն՝ վարպետին՝ Սուրեն Քոչարյանի առաջնորդությամբ, պետք է ըսել, թե ան ծիլեր արձակեց նաև Սփյուռքի մեջ, ուր այսօր քիչ չէ թիվը անոնց, որոնք նվիրված են արվեստի անմիջական ու ներգործուն այս ճյուղին: Ասմունքի երեկոներով պարբերաբար հանդես եկող այդ ուժերուն մեջ յուրահատուկ տեղ մը ունի անկասկած լիբանանահայ արվեստագետ Հակոբ Կյուլոյանը, որուն համար ասմունքը հրա՛յրք է ամեն բանե առաջ, իր ժողովրդին ծառայելու ու հայ մշակույթը վառ պահելու արգասաբեր միջոց մը մանավանդ»:

Վերջին երկու տարիների ընթացքում Հակոբ Կյուլոյանը բազմիցս կատարել է Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին»՝ ամեն անգամ բազմամարդ լսարանին հասցնելով մեծ լուսավորչի հրաբորբ խոսքը:

Եվ ահա վերջերս նա ներկայացել է մի նոր ստեղծագործությամբ՝ երկու ժամ տևած երեկոյի ընթացքում ասմունքելով Պարույր Սևակի «Անլռելի զանգակատունը»:

«Ներքին կրակով մը,— գրում է թերթը,— ասմունքողը ընդհանրապես կը հաջողեր «այրել» նաև ունկնդիրը և զայն հաղորդակից դարձնել պոեմի խորունկ բովանդակության ու բազում գեղեցկություններուն»:

ՀԱՄԵՐԳ ՄԻԼԱՆՈՒՄ

Փարիզահայ թերթերը տեղեկացնում են, որ Միլանում (Իտալիա) Հայկական տան վարչության նախաձեռնությամբ տեղի է ունեցել երգահանդես՝ ամբողջապես հայկական երգերից կազմված հայտագրով: Համերգել է ծանոթ երգչուհի Անայիս Գոզապալյանը: Կատարվել են Կոմիտասի, Բ. Կանաչյանի, Ալեմշահի, Սպենդիարյանի, Դ. Ղազարյանի, Ա. Սարյանի և ուրիշ հայ երգահանների գործեր: Հայտագրից դուրս, ունկնդիրների պահանջով, երգչուհին կատարել է Ալան Հովհաննեսի, Կանաչյանի, Մեներապի, եվրոպական դասականներ Մոցարտի, Պուչչինիի ստեղծագործություններից:



Մեր Ընկերությունը Ալեքսանդրիայի Պողոսյան ազգային երկսեռ վարժարանին նվեր էր ուղարկել լաբորատոր սարքավորումներ: Վարժարանում տեղի ունեցավ ստացված սարքավորումների ցուցադրություն և բացման հանդիսություն, որին ներկա էր նաև սովետական հյուպատոս Ազովցևը: Նկարում՝ վարժարանի ուսուցչական կազմը և հյուպատոսը գիտության սենյակում:

ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՐՁԱՆԸ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Նշանավոր երգիչ, երգահան Շառլ Ազնավուրը միջազգային համբավի է տիրացել նաև իբրև կինոդերասան՝ մի շարք ֆիլմերում հանդես գալով փայլուն դերակատարումներով: Ի գնահատումն հայազգի արվեստագետի վաստակի՝ վերջերս, ինչպես տեղեկացնում է «Արև» թերթը, նրա արձանը դրվել է Փարիզի հռչակավոր Գրեվեն թանգարանում՝ կինոդերասաններ Ժան Գաբենի և Բրիժիթ Բարդոյի արձանների կողքին:

digitised by A.R.A.R.@

ԲԵՄԻ ՎՐԱ ԵՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՂԱՆԴՆԵՐԸ



Շինմոնտաժային վարչության ինքնագործ խմբակի անդամ Գ. Մարկոսյանը երգելիս:

Չորս օր տևեց Հայաստանի արհմիությունների գեղարվեստական ինքնագործունեության հանրապետական ստուգատեսը: Չորս օր շարունակ Երևանի ալյումինագործների մշակույթի պալատի բեմից հնչում էր երգն ու երաժշտությունը, իրենց շնորհքն ու արվեստն էին ցուցադրում ժողովրդական տաղանդները: Ստուգատեսին մասնակցում էին հանրապետության տարբեր շրջաններից եկած ինքնագործ խմբեր, անհատ կատարողներ, ինքնուս ստեղծագործողներ: Գոհունակությամբ պետք է նշել, որ այս ստուգատեսին մասնակցում էին մեծ թվով կոլեկտիվներ: Հատկապես լավ էին ներկայացված ուսումնական հաստատությունները, որոնց առանձին խմբեր ու անսամբլներ մոտենում էին պրոֆեսիոնալ խմբերի մակարդակին:

Ստուգատեսում հաջողությամբ հանդես եկան Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի երգչախումբը, աղջիկների վոկալ անսամբլը, ճարտարապետների լարային կվարտետը, «Հայպետնախագիծ» ինստիտուտի տղամարդկանց էստրադային նվագախումբը և այլ խմբեր ու անհատ կատարողներ:



Ստուգատեսի չորրորդ օրը նորից իր կատարողական բարձր արվեստը ցուցադրեց պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության պետական կոմիտեի մշակույթի տան երգի-պարի անսամբլը: Պարող տղաներն ու աղջիկները լավ կատարեցին անսամբլի ղեկավար Ե. Սահառունու «Երջանիկ երիտասարդություն», ուկրաինական ժողովրդական «Հոպակ» պարերը, Ա. Խաչատրյանի հովվի պար-երգը:

Կատարողական շատ խմբեր իրենց հայտագրում սիրով տեղ էին տվել ինքնուս ստեղծագործողների երգերին: Այսպես, Հայկական ՍՍՌ շինարարության մինիստրության № 1 տրեստի ժողովրդական գործիքների անսամբլի հետ Ա. Մարկոսյանն ու Կ. Սալմանյանը հաջողությամբ կատարեցին Մ. Լևոնյանի կատակ պարը, որ պատկերում է շինարարների աշխատանքային առօրյան: Կաբելի գործարանի անսամբլը հանդես եկավ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված պարերգային հետաքրքիր համարով:

Ստուգատեսում աչքի ընկած լավագույն խմբերն ու անսամբլները, ինչպես և անհատ կատարողները կմասնակցեն արհմիությունների գեղարվեստական ինքնագործունեության համամիութենական ստուգատեսին, որ տեղի կունենա առաջիկա հոկտեմբերին Մոսկվայում:

Ելույթ է ունենում Երևանի ոսկերչական ֆաբրիկայի էստրադային երվագախումբը:

Լուսանկարները՝ Ռ. Գևորգյանի

Երևանի Ալյումինի գործարանի ակումբի երգի-պարի ինքնագործ խմբակի ելույթը:



անսամբլը, Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի ժողովրդական գործիքների անսամբլն ու տղամարդկանց երգչախումբը: Հանդիսականները ջերմորեն ծափահարեցին գործարանի հնժեներ Էդ. Ռոչարյանին, որը ներշնչանքով կատարեց «Հորովել» և «Լռեց... ամպերն եկան ծածկեցին» երգերը: Լավ ընդունվեցին նաև ոսկերչական ֆաբրիկայի էստրադային նվագախումբը, առևտրի ակումբի երգի-պարի, կաբելի գործարանի պարային անսամբլները, Կիրովի անվան գործարանի երգչախումբն ու ժողովրդական գործիքների

digitised by A.R.A.R.@



Վերևում՝ Բահրամի աղջկա պսակադրությունից հետո հարսը փեսայի ընկերների հետ։ Ձախից երկրորդ՝ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին։ Հա-մերգում իրենց հիանալի կատարումով հանդես եկան հայ և վրաց արվեստի վարպետները։ Նկարում՝ հայ և վրաց արվեստի մի խումբ վարպետներ համերգից հետո՝ ազարակի պալատում։

Հուսանկար՝ Ա. Կլեկչյանի

ԵՐԲ ԱՎԱՐՏՎՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔԸ

Արհեստավարժության հանգստի, ժամանցի հաճելի վայր է Երևանի ավտոդողերի գործարանի մշակույթի հորակառույց պալատը։ Վարդատուֆ չինիի առաջին հարկում տեղավորված են գրադարան-ընթերցարանը, խաղասենյակները, երկրորդ հարկում՝ հանդիսասրահը։ Մշակույթի պալատը աշխույժով է լցվում հատկապես այն պահին, երբ գործարանի սրահներում ավարտվում է եռ ու զեռով լի աշխատանքային օրը։

Այցելուն միշտ էլ խելացի զրուցակիցներ է գտնում այստեղ։ Կազմակերպվում են դիմակահանդեսներ ու համերգներ, հարց ու պատասխանի երեկոներ, տարբեր բնույթերով հարցախաղեր։ Հենց վերջերս էր, որ գործարանի բատերական խմբակի անդամները բեմադրեցին Գաբրիել Բեսի «Նշանդրեք» բատերգությունը։ Հանդիսականների վրա հատկապես լավ տպավորություն թողեց մոր դերակատար, գործարանի հաշվապահ Սուսաննա Խաչանյանի, հեռի Բաբեղի դերակատար, հավաքման բաժանմունքի կոմունիստական աշխատանքի ճարվածային Կ. Զաքարյանի, փեսացուի դերում հանդես եկող Կամո Մադոյանի խաղը։

Հանդիսականներին ոգևորում էր ոչ միայն դերակատարների մտածված ու խելացի խաղը, այլև այն զգացումը, որ բեմի վրա գտնվող այդ մարդիկ ինչ առաջ իրենց հետ կանգնած էին մեկենայի առյև՝ բանվորական արտահագուստով, և նրանց ճուժկու և կշռված շարժումների մեջ բնմական ոչինչ չկար։

Տարբեր նախասիրություններ ունեն ավտոդողագործները։ Ոմանք սիրում են շախմատ խաղալ և իրենց ազատ ժամանակը անց են կացնում վանդակավոր տախտակների առյև, մյուսները իրենց ուժերը փորձում են ծանրամարտի սրահում, ֆուտբոլի դաշտում, շրավազանում։

Ավելի քան 40 մարդ է բնդգրկում շախմատի խմբակը։ Այստեղ ամեն օր, աշխատանքից հետո կարելի է հանդիպել տեխնիկական անվտանգության բաժնի պետ Ջարգանդ Մելիքյանին, կոնստրուկտոր Հենրիկ Գրիգորյանին, ավտոկամերայի բաժանմունքի բանվոր Մանուկ Մանուկյանին, տեղամասի պետ Վաղարշակ Առուստամյանին և շատ ուրիշների, որոնք այստեղ են սովորել շախմատ խաղալ ու այժմ դարձել են կարգայիններ։ Գործարանի տերիտորիայում են գտնվում ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի դաշտերը։ Այստեղ ամեն շարաթ կազմակերպվում են մրցումներ։

Անցյալ տարի գործարանի ֆուտբոլային թիմը, որի մարզիչն է հանրապետական կարգի դատավոր Մաքսոս Մկրտումյանը, հաղաթի գործարանային թիմերի մրցույթում գրավեց առաջին տեղը։ Գործարանում պահվող գա՛րքերը խոսում են դողագործ-սպու՛տնիկների տարած հաղթանակների մասին։

Գործարանի մարդիկ ոչ միայն իրենց ճարտար ձեռքերով ավտոդողեր են ստեղծում, որոնք պետք է երկար ճանապարհ անցնեն, այլև արձակ ու չափածո իրենց խոսքն են ասում արդար աշխատանքի, ազնիվ ընկերության մասին։

Ահա թե իր զգացածը ինչպես է արտահայտել նվիրված բաժանմունքի հերթափոխի պետ Հրաչիկ Մկրտումյանը։

Դու չես մնա կյանքում ետ,
Երբ հաչ ընկերդ է քեզ հետ,
Երջանկաչնն այս դարում
Արդեն գործն է երբ քեզ հետ։

Մկրտումյանը դեկավարում է գործարանի գրական խմբակը։

— Վերջին մի քանի ամսում,— ասում է նա,— խմբակի անդամները լսել են Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի կյանքին ու ստեղծագործություններին նվիրված մի շարք զեկուցումներ։ Գրական խմբակի պարապմունքներում հանախակի քննարկվում են նաև կոլեկտիվի անդամների ստեղծագործությունները։

Ավտոդողագործների երգի-պարի անսամբլի անունը վաղուց դուրս է եկել հանրապետության սահմաններից։ Նրա երգերը ճշել են Կրեմլի բատրոնի կամարների տակ, արձագանգել Յարոսլավլի ու Բաքվի ավտոդողերի գործարանների դահլիճներում և այլուր։

Երբ տեխնիկական վերահսկողության բաժնի տեխնիկ, հանրապետական ֆեստիվալի լաուրեատ Վալյա Սամվելյանը Յարոսլավլի իր գործընկերների առյև երգում էր Դուսան Աչոտի «Հով սարեր, մով սարեր» երգը, ոուս բարեկամների աչքերում ժպիտն էր շողում։ Եվ երբ երգը լրոնց, դահլիճում բնդաց ծափահարությունների ոռոտը։ Թե Վալյա Սամվելյանի մեղմանուչ երգերը, թե Ալբերտ Ազատյանի կրակոտ պարերը հիացրին դահլիճը։

Կատարողական բարձր արվեստի համար էր, որ դեռևս 1961 թվականին Համամիութենական արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդը 80 շնորհալի երիտասարդներից բաղկացած այդ կոլեկտիվին շնորհեց ժողովրդական անսամբլի կոչում։

Գործարանի դեկավարների ուշադրության կենտրոնից չի վրիպում նաև բանվոր-ծառայողների բնտանիքների անդամների, նրանց երեխաների հանգրստի կազմակերպման գործը։

— Մեզ մոտ լավ ավանդ է դարձել բնտանիքներով հանդիպելը,— ասում է գործարկոմի նախագահ Խուչդուդյանը։— Հանախ, կիրակի օրերին, բնտանիքներով այցելում ենք հանրապետության տեսարժան վայրերը, մեր հանգիստը անց ենք կացնում Սևանի ափին և Հրազդանի ձորում։

Ավտոդողագործները գիտեն արդյունավետ աշխատանքը զուգակցել խելացի հանգստի հետ։

Ն. ՄՈՎՍԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Սովետական Հայրենիքում

ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Սովետական հանրապետություննեբի համերաշխ ընտանիքում բարգավաճում է սոցիալիստական Ղազախստանը։ Սովետական իշխանության տարիներին 72 անգամ աճել է հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքը։ Մեր օրերի Ղազախստանը շինարարական վիթխարի մի հրապարակ է։ Նորակառույցների փայտամածները խոյանում են վեր ամենուրեք՝ նավթային Մերձկասպիայից մինչև մետաղահանքային Ալթայը, խոպանի դաշտերից մինչև Տյան-Շանի ալպիական արոտավայրերը։ Յոթնամյակի հինգերորդ տարում հանրապետության շինարարները պետք է իրացնեն գրեթե 2,3 միլիարդ ռուբլի կապիտալ ներդրումներ։ Իսկ այդ նշանակում է, որ միայն մեկ տարում պետք է կառուցել շատ ավելի, քան Ղազախստանում կառուցված է երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ հնգամյակներում՝ միասին վերցրած։

Ղազախստանում արագորեն աճում են սոցիալիստական ինդուստրիայի հսկաները։ Վերջերս շարք մտած խոշոր ձեռնարկությունների թվումն է նաև կարագանդայի մետալուրգիական գործարանը, որին ժողովուրդը «Ղազախական Մագնիտկա» է անվանում։ Հսկայական տարածության վրա փռվել է նորակառույցը։ Այստեղ արդեն քուչ և կոքս են տալիս դոմնային հզոր վառարաններն ու կոքսային մարակոցները, վեր են խոյացել քիմիական բաժանմունքները։ Սակայն դա սկիզբն է միայն։ «Ղազախական Մագնիտկան» դեռ շարունակում է կառուցվել։

ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆԸ ԱՃԱՐՀՈՒՄ

Արդեն անց է կացված Բուխարա-Ուրալ՝ աշխարհում խոշորագույն գազամուղի 1100 կիլոմետրը։ Երկնագույն կրակը մուտք է գործել Գազլի-Ուրգենչ գծի վրա գտնվող բազաքներն ու ավանները։

ԼԵՆԻՆՅԻ ԿԱՍԿԱԴԸ

Աշխարհի մեծագույն գետերից է Լենան։ Սկսելով Բայկալյան լեռնաշղթայի արևմտյան լանջերից, նա հարավից դեպի հյուսիս անցնելով ավելի քան 4 հազար կիլոմետր ճանապարհ, իր հսկայական ջրերը տանում է դեպի Լապտևի ծովը։ Լենան ամեն տարի ծովն է նետում մոտ 500 խորանարդ կիլոմետր ջուր, գրեթե տաս անգամ ավելի, քան Դնեպրը։ Եթե այդ գետի և նրա վտակների վրա կառուցվեն հիդրոէլեկտրակայաններ, ապա նրանք յուրաքանչյուր տարի կտան մոտ 300 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա։

Սովետական կառավարությունը արդեն ձեռնարկել է Լենայի կասկադի ստեղծման վիթխարի աշխատանքը։ Արդեն կազմվել է այդ մեծ գործի նախագիծը, որի գլխավոր ինժեներն է Գ. Վ. Դմիտրիևը, որը շատ տարիներ է աշխատել հիդրոտեխնիկայի բնագավառում։ Այդ նախագիծը հսկայական աշխատանքի, երկարուսումնասիրությունների արդյունք է։ Այդ նախագծով Լենայի վրա կառուցվելու է Յակուտսկի, Մուխտույայի, և Նիժնելենսկի հիդրոէլեկտրակայանները։

Ամենից առաջ կառուցվելու է Յակուտսկի հիդրոէլեկտրակայանը Յակուտսկից 130 կիլոմետր հեռու, արագորեն զարգացող արդյունաբերության շրջանում։ Այդ հիդրոէլեկտրակայանը լիովին կապահովի ռեսպուբլիկայի էլեկտրաէներգիայի պահանջը և մի մասն էլ կտրվի Անդրբայկալյան շրջանին։ Ճիշտ այդպիսի մի խոշոր հիդրոէլեկտրակայան է լինելու նաև Մուխտույայի էլեկտրակայանը, որ նախագծվում է կառուցել Լենայի միջին հոսանքում՝ Մուխտույա նավահանգստից վերև։ Նախատեսված է նաև Լենա գետի վերին հոսանքում, Երա մեջը թափվող Կիրենգա գետի վրա, Կիրենսկ քաղաքի մոտ կառուցել Շորոխովսկի հիդրոհանգույցը։

Սակայն ամենից վիթխարի կառուցվածքը, որ գերազանցելու է հաշխարհի մեծագույն հիդրոտեխնիկայի ժամանակակից բոլոր նվաճումները, հանդիսանալու է Նիժնելենսկի հիդրոէլեկտրակայանը՝ մոտ 20 միլիոն կիլովատ կարողությամբ։ 100 միլիարդ կիլովատ-ժամ։ այդքան էլեկտրաէներգիա է նա տալու երկրին մեկ տարում, որի համար Հյուսիսի ամենագժվարին պայմաններում կառուցվելու է էլեկտրահաղորդման գիծ՝ մոտ մեկ միլիոն վոլտ լարվածությամբ, 3—3,5 հազար կիլոմետր երկարությամբ։

100 միլիարդ կիլովատ-ժամ։ Այդ քվի նշանակությունը լավ հասկանալու համար կարելի է մի այսպիսի համեմատություն անել։ Քսանամյակի վերջում սովետական երկրի բոլոր հիդրոէլեկտրակայանները՝ այժմ գոյություն ունեցողները և այն 180 հիդրոէլեկտրակայանները, որ նախատեսված է կառուցել, մեկ տարում արտադրելու են շուրջ 600 միլիարդ կիլովատ-ժամ։ Նշանակում է միայն Նիժնելենսկի հիդրոէլեկտրակայանը ի վիճակի է տալ էլեկտրաէներգիայի այդ հսկայական քանակի մեկ վեցերորդ մասը։

Աշխարհում խոշորագույն հիդրոէլեկտրակայանների՝ Լենայի այդ կասկադը սովետական ժողովրդի կամքով կդառնա իրականություն և էլ ավելի կամրապնդվի կոմունիզմի նյութա-տեխնիկական հիմքը։

ՆՈՐ ՊՂՆՁԱՀԱՆՔԵՐ

Վերջին տարիներս սովետական երկրաբանները հետախուզական մեծ աշխատանքներ են կատարել պղինձ և այլ գունավոր մետաղներ հայտնաբերելու համար։ Այդ աշխատանքները հիանալի արդյունք են տվել. հայտաբերվել են խոշոր պղնձահանքեր Կրասնոյարսկի երկրամասում։ Այդ հանքավայրը տարբերվում է իր մեծաքանակ պղնձի պարունակությամբ։ Ընթացիկ տարում երկրաբանները կավարտեն այդ հանքավայրի ավելի հարուստ տեղամասերի հետախուզությունը և կհաշվեն պաշարները։ Միաժամանակ նախագծողներն ու շինարարները նախապատրաստական մեծ աշխատանքներ են ծավալել ամենամոտ շրջանում Սիբիրի այդ հարուստ հանքավայրից պղինձ արդյունահանելու համար։

Արդեն ներկայումս Սովետական Միությունը պղնձահանքերի արդյունահանման ասպարեզում հասել ու անցել է պղնձի համաշխարհային խոշորագույն այն արտադրողներից ու արտահանողներից, ինչպես Հյուսիսային Ռոդեզիան է, Չիլին և Կանադան։

Պղնձի նոր հանքավայրի արդյունաբերական արագ յուրացումը Սովետական Միությանը հնարավորություն կտա ոչ միայն լիովին ազատվել պղնձի ներմուծումից, այլ նաև կազմակերպել այդ մետաղի արտահանումը այլ երկրներ։

Ջապարոժյե (Ուկրաինական ՍՍՌ)։ «Ջապարոժստալ» գործարանի մետաղագործները նվաճում են նոր բնագծեր։ Մրցելով յոթնամյակի 5-րդ տարվա պլանը ժամկետից շուտ կատարելու համար, նրանք պարտավորվել են 1963 թվականին տարեկան պլանից ավելի արտադրել 18 հազար տոննա քուչ, 24 հազար տոննա պողպատ և 18 հազար տոննա գլանվածք։ Մետաղագործները հաջողությամբ կատարում են իրենց ստանձնած պարտավորությունները։ Նկարում՝ № 2 դոմնային վառարանի առաջավոր կոլեկտիվներից մեկը, որին գլխավորում է վարպետ Նիկոլայ Վոլոշչուկը (ձախում)։

ՏԱՍՍ-ի ֆոտոխրոնիկա

digitised by A.R.A.R.@

ԲԱԹՈՒՄԻ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ 75 ՏԱՐԻՆ



Բաթումիի Հայկական դրամատիկական Թատրոնի ստեղծագործական կոլեկտիվի մի խումբ դերասաններ Լ. Մանվելյանի «Մագդա» պիեսի ներկայացումից հետո կենտրոնում՝ Թատրոնի գլխավոր ռեժիսյոր, Աջարական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Համբարձում Ավետիսյանը։

Թատերասեր հասարակայնությունը վերջերս հանդիսավորապես նշեց Բաթումիի հայկական թատրոնի 75-ամյակը:

Բաթումիի հայ թատրոնը մեր մշակույթի հնագույն օջախներից մեկն է: Այն հիմնվել է 1886 թվականին մի խումբ թատերասերների ջանքերով: Տասնամյակներ շարունակ այն պրոպագանդել է ազգային հայ դրամատուրգիայի լավագույն գործերը: Միաժամանակ նրա խաղացանկում պատվավոր տեղ են գրավել ռուս, արևմտաևրոպական և մյուս ժողովուրդների դրամատուրգիայի բազմաթիվ նմուշներ: Թատրոնի առաջին գործիչներից հիշատակության արժանի են Գրիգոր Գրիգորյանը (Գապաշա), որ աներեմնէ խաղացել է 35 տարի, Սմբատ Կարինյանը, Աղասի Էլիզբարյանը, Արել Ազրեսյանը և ուրիշներ:

Սովետահայ բեմի խոշոր վարպետներից շատերը իրենց բեմական մկրտությունն ստացել են Բաթումիի հայ թատրոնում: Նրանցից են Գրիգոր Ավետյանը, Հասմիկը, Առուս Ոսկանյանը, Նվարդ Ալիխանյանը, Լևոն Զաճարյանը, Արմեն Արմենյանը և ուրիշներ:

1922 թվականին թատերախմբում հայտնվում է մի նոր սեռնվեր գործիչ՝ Աջարական հանրապետության վաստակավոր գործիչ Համբարձում Ավետիսյանը, որն այսօր էլ, չնայած իր պատկառելի տարիքին, շարունակում է ղեկավարել թատերախումբը:

Բաթումին իրեն ծովափնյա հաղորդ միշտ էլ դեպի իրեն է ձգել շրջագայության ելած հայ արտիստներին ու թատերախմբերին: Չկա մի հայ դերասան, որ գեթ մի անգամ հանդես եկած չլինի Բաթումիի հայ բեմում:

Թատրոնի ներկա կոլեկտիվը բաղկացած է 24 շնորհալի դերասաններից: Խմբում երկար տարիներ աշխատում են Աջարական հանրապետության վաստակավոր արտիստներ Լազար Պետրոսյանը, Ջարուհի Եգիկյանը, Նվարդ Բարությանը, Թաղևոս Բարսամյանը:

Թատերախումբը ներկայացումներով հանդես է եկել Սոչիում, Արմավիրում, Ստեփանավանում, Ալավերդում, Ղազախում, Ղարաքիլիսայում, Ղարսում, Կիրովականում, Երևանում, Թբիլիսիում, Բաքվում, Սուխումում, Սոչիում, Գագրայում, Սուխումում, Ռոստովում, Կրասնոդարում, Գրոզնիում, Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Ղրիմում, Ռիգայում, Վիլնյուսում, Տալլինում, Մինսկում, Բրեստում, Կալինինգրադում, Սմոլենսկում, Կալուգայում, Տուլայում, Ռյազանում, Վորոնեժում, Կուրսկում, Օրելում, Կալինինում, Կուիբիշևում, Ուլյանովսկում, Գորկիում, Կազանում, Սարատովում, Վոլգոգրադում, Ուֆայում, Չելյաբինսկում, Սվերդլովսկում, Տյումենում, Տոբոլսկում, Օմսկում, Նովոսիբիրսկում, Կեմերովոյում, Բարնաուլում, Ուլան-Ուդեում, Իրկուտսկում, Խաբարովսկում, Վլադիվոստոկում, Յուժնո-Սախալինսկում, Մագադանում, Ուլան-Բատորում, Ուլան-Խոտում, Չոյբալսանում, Ուլան-Բատորում, Դարխանում, Ալթայում, Ուլան-Ուդեում, Չիտայ

վիրում, Սուխումիում և այլ հայաշատ վայրերում:

Հոբելյանական հանդեսի օրը արտակարգ խանդավառություն էր տիրում թատրոնի սրահում: Այստեղ էին Բաթումիի հայ աշխատավորության ու մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ: Բեմում էին Աջարական հանրապետության կառավարության անդամները, արվեստի և գրականության գործիչներ, Վրաստանից և Հայաստանից եկած հյուրեր:

Բաթումիի հայ թատրոնի անցած ուղու մասին զեկուցումով հանդես եկավ Աջարիայի պետական թատրոնի գլխավոր ռեժիսոր, վաստակավոր արտիստ Շալվա Ինասարիձեն: Այնուհետև ողջույնի չերմ խոսքեր են ասում՝ Աջարիայի գրողների միության անունից գրող Մալազիոնիան, աջարական թատրոնի կոլեկտիվի անունից՝ Վրացական ՍՍՌ ժողովրդական արտիստ Յուսուֆ Կոբալաձեն, Սևաստոպոլի դրամատիկ թատրոնի անունից՝ ռեժիսոր Ղազախական ՍՍՌ վաստակավոր արտիստ Գուչկարյովը, Հայկական ՍՍՌ թատերական ընկերության անունից՝ Արտաշես Վռույրը և ուրիշներ:

Ընթերցվեց Աջարիայի կուլտուրայի մինիստրության հրամանագիրը Բաթումիի հայ թատերական կոլեկտիվը ժողովրդական թատրոն անվանելու մասին:

Հոբելյանական երեկոն վերածվեց ժողովուրդների բարեկամության վառ ցույցի:

Ա. ԽԱՉԻԿՅԱՆ

Խանջյանը ներկաներին պատմեց բաժանմունքի գործունեության և 1963 թվականին կատարվելիք աշխատանքի մասին: Բաժանմունքի պատասխանատու քարտուղար Հ. Մարությանը սեմինարի մասնակիցներին ծանոթացրեց կոլեկտիվ անդամների համար կազմված կանոնադրությանը: Ելույթ ունեցող ընկերները հավանություն տվեցին բաժանմունքի գործունեությանը և նշեցին նրա աշխատանքն ավելի հետաքրքիր դարձնելու մի շարք միջոցառումներ:

*

Մայիսի 29-ին ընկերության սրահ էին հավաքվել գրականության և արվեստի գործիչներ, ուսուցիչներ և գրասերներ: Այդ օրը ընկերությունը կազմակերպել էր սփյուռքահայ ականավոր գրող Վազգեն Շուշանյանի ծննդյան 60-ամյակին նվիրված գրական երեկո: Մեծարման ջերմ խոսքով երեկոն բացեց ընկերության գրական սեկցիայի քարտուղար Ստ. Կուրտիկյանը: Վ. Շուշանյանի կյանքի և ստեղծագործության մասին հետաքրքիր կեկուցմամբ հանդես եկավ գրող Գեղամ Սևանը:

Ապա գրողի մասին հետաքրքիր հուշեր պատմեցին Ընկերության նախագահի տեղակալ Շ. Տատուրյանը և վաստակավոր դերասան Ա. Կոթիկյանը, որոնք ժամանակին մի շարք առիթներ են ունեցել հանդիպելու Վ. Շուշանյանին:

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ԵՐԿԵՐԸ



Հրապարակի վրա է հայ դասական գրող Ղազարոս Աղայանի հատընտիր ժողովածուի 3-րդ հատորը (Հայպետհրատ, Երևան, 1963 թ., տպաքանակ 20.000):

Ներկա հատորում զետեղվել են հեղինակի հրապարակախոսական, գրական-քննադատական և լեզվաբանության հարցերին նվիրված հոդվածները, որոնք անցյալում տպագրվել են տարբեր պարբերականներում:

Հատորն ունի ծանոթագրությունների բնդհանուր բաժին, որը կազմել է գրականագետ Աս. Ասատրյանը:

ԳԻՐՔ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՄԱՍԻՆ



Հայկական ՍՍՌ բաղմակող և գիտական գիտելիքների տարածման բնկերությունը լույս է բնծայել գրականագետ Հրայր Մուրադյանի «Սայաթ-Նովա» ուսումնասիրությունը: Դա հանրամատչելի մի գրույկ է, որի մնջ ամփոփ տեղեկություններ են տրվում մեծ բանաստեղծի կյանքի և գործունեության մասին:

Գրույկը նվիրված է Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին. լույս է տեսել 3.000 օրինակ տպաքանակով:

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ



Հայպետհրատի հրատարակությամբ լույս է տեսել բազմավաստակ գիտնական Գարեգին Լևոնյանի երկերի ժողովածուն (Հայպետհրատ, 1963 թ., տպաքանակ 3.000):

Գրքում տեղ են գտել հեղինակի տարբեր տարիներին գրած աշխատություններ՝ նվիրված Սայաթ-Նովային, աչուղ Ջիվանուն, Շերամին և ընդհանրապես աչուղական արվեստին: Զետեղված է նաև Գ. Լևոնյանի հիշողությամբ, բանավոր և գրավոր տեղեկաքննություններից կազմված հայ գրական ծածկանունների բառարանը:

Գրքի առաջարանում, որը գրել է Շավիղ Գրիգորյանը, հարուստ տեղեկություններ են տրված գիտնականի կյանքի և գործունեության մասին:

Ն. ԶԱՐՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՌՈՒՍԵՐԵՆ

Մոսկվայի Գեղարվեստական գրականության հրատարակչությունը ռուսերեն լեզվով լույս է բնծայել սովետահայ անվանի բանաստեղծ Նաիրի Զարյանի բանաստեղծությունների ժողովածուն:

Ժողովածուում տեղ են գտել հեղինակի տարբեր ժամանակներում գրած չափածո գործերը, որոնք դասավորվել են ճետևյալ բաժիններով. «Ես տանե եմ», «Քեզ ճետ միասին», «Փոթորիկ և ծիածան», «Պանթեոն», «Երգիծանք»:

Թարգմանությունները կատարել են Վ. Զվյագինցևան, է. Լեոնտիևան, Պ. Անտոկոլսկին, Ս. Լիպկինան, Ա. Ադալիսը և ուրիշներ:

Գիրքը լույս է տեսել 7.000 օրինակ տպաքանակով. լավ ձևավորված:

ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



Լույս է տեսել իրանական առաջադեմ գրողների պատմվածքների ժողովածուն՝ «Իրանական պատմվածքներ» խորագրով (Հայպետհրատ, 1963 թ., Երևան, տպաքանակ՝ 7.000):

Ժողովածուում տեղ են գտել Սադեղ Հեդայաթի, Բոզորգ Ալավիի, Ռասուլ Փարվիզիի, Ահմեդ Սադեղի և Արդուլ Հասեին Նաւշինի վերջին տարիներին գրած պատմվածքները:

Թարգմանությունները բնագրից կատարել են Հրայր Մովսիսյանը և Հովհաննես Փաթևանյանը:

digitised by A.R.A.R.@

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱ

ՆՈՐ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ



Սովետական Միությունում երկաթուղագծերի էլեկտրիֆիկացման մեծ մասշտաբները անհրաժեշտություն առաջացրին ստեղծել մեքենաներ, որոնք հենասյուների տեղադրման ու կոնտակտային լարերի կախման ժամանակ չեն զբաղեցնում ուղիները և դրանով իսկ խանգարում գնացքների երթևեկությանը:

Նոր մեքենաների ծխնիներով սլաքը, որ պատրաստվել է Դոնի Ռոստովում, կարող է հենանը տեղադրողների հետ միասին ցանկացած ուղղությամբ առաջ տանել մինչև 15 մետր: Ինքնագնաց ագրեգատը ղեկավարում է 2 մարդ: Նկարում՝ նոր ագրեգատը:

ԱՄԵՆԱԱՐԱԳԸՆԹԱՑՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գորկու (ՌՍՖՍՀ) «Կրասնոյե Սորմովո» գործարանի նավաշինարարները «Չայկա» անվանեցին ստորջրյա թևերով գետային 35 տեղանոց ամենաարագընթաց նավը, որն իր առաջին ուղերթը կատարեց Մոսկվա: Սիգարի ձևը նրան խիստ նմանեցնում է տիեզերք թռչելու պատրաստ հրթիռին: Սակայն ամենագլխավորը նրա արագությունն է, որը ժամում հասնում է 100 կիլոմետրի:

ԳՈՐԾՈՒՄ Է ՊԼԱՍՏԻԿԸ

Այն տպատառերը, որոնցով տպագրվում են ինչպես մեր, այնպես էլ մյուս ամսագրերը, պատրաստված են կապարի, անագի և ծարիրի խառնուրդի հարտից:

Պլաստմասսաները վաղուց էին փորձում վերացնել հարտի մենաշնորհը, սակայն միշտ հաղթանակում էր մետաղը: Այժմ հարտին վտանգավոր մրցակից է երևան եկել. դա «ԱՏ» կառուցվածքի սոպոլիմերն է:

Այդ պլաստիկայից պատրաստած տպատառերը շատ առավելություններ ունեն. դրանք հարտից 5 անգամ երկարակյաց են, 10 անգամ թեթև, հարմար՝ աշխատանքում և անվնաս՝ գրաշարների համար:

ԻՆՔՆՕՐԻՆԱԿ ՏՈՒՆ



Ինքնօրինակ այս տունը, որի համար վտանգավոր չեն երկրաշարժերը, նախագծվել է Վրաստանի Գիտությունների ակադեմիայի շինարարական մեխանիկայի ինստիտուտում:

Առաջին հարկի ծածկը հենվում է հատուկ կոնստրուկցիայի երկաթբետոնե սյուների վրա և նրանց հետ շաղկապված է պլաստիկ ճկուն նյութերով: Նկարում՝ «ճկուն» հարկով շենքի նախագիծը:

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՌԱԴԻՈՏԵՂՈՐՈՇԻՉ

Ռադիոէլեկտրոնիկայի գծով մոսկվացի մասնագետներն իրենց ստեղծած երկրաբանական ռադիոլոկատորի (ռադիոտեղորոշիչի) օգնությամբ մշակել են ստորերկրյա ջրերի հայտաբերման ինքնօրինակ մեթոդ: Փորձերը կատարվել են Թուրքմենիայում և հայտնաբերվել են խմելու ջրերի մեծ պաշարներ:

ԱԿՈՐԴԵՈՆԸ ՀՆՉՈՒՄ Է ԵՐԳԵՀՈՆԻ ՆՄԱՆ

Նոր, ինը ռեգիստրանոց ակորդեոն է ստեղծվել Լենինգրադի «Կրասնի պարտիզան» ֆաբրիկայում: Գործիքի կառուցվածքը հնարավորություն է տալիս ռեգիստրը (ձայնի բարձրությունը, տեմբրը և ուժը փոփոխող հարմարանքը) փոխելու միջոցով ակորդեոնի ձայնածավալն ավելացնել մեկ ամբողջ օկտավայով: Օկտավային շերտաձողիկի զուգակցումը «պիկոլո» շերտաձողիկների հետ այնպիսի հնչյուն է առաջացնում, որ հիշեցնում է երգեհոնի հնչյունը:

ԼՈՒՐԵՐ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մոսկվայի կենտրոնական ցուցահանդեսային սրահում, Մանեժի հրապարակի վրա, բացվել է «Յոթնամյակը գործողության մեջ» խորագրով համամիութենական չորրորդ գեղարվեստական լուսանկարչության ցուցահանդեսը: Նրա կազմակերպողներն են ՍՍՌՄ Կուլտուրայի մինիստրությունը և ժուռնալիստների միությունը:

Ցուցահանդեսում իրենց լավագույն աշխատանքներն են ցուցադրել սովետական բոլոր հանրապետությունների լուսանկարչության վարպետները, ֆոտոսիրողները: Ներկայացված են ինչպես սև-սպիտակ, նույնպես և գունավոր մոտ հազար լուսանկարներ:

Ցուցադրված բազմաժանր աշխատանքները պատմում են սովետական ժողովրդի հերոսական առօրյայի մասին, վերապատկերում են տիեզերագնացների անօրինակ թռիչքները, խոպանը յուրացնողների աշխատանքային սխրագործությունները, այն տիտանական աշխատանքը, որ կատարվում է վիթխարի էլեկտրակայանների, հիդրոտեխնիկական կառուցվածքների շինարարությունում, մեծ անծայր երկրի քաղաքներում ու գյուղերում:

Առանձնապես հարուստ է հայ լուսանկարիչների բաժինը: Այստեղ ուշագրավ աշխատանքներ են ներկայացրել Հ. Հեքեքյանը («Արարատ», «Վերադարձը հայրենիք»), Ա. Քոչարը («Մարտիրոս Սարյանի դիմանկարը»), Ռ. Համբարձումյանը («Իմ Հայաստանը»), Վ. Ամալյանը («Մեծ քիմիայի ծնունդը»), Վ. Սևոյանը («Վերջին շողերը»), Լ. Ջալալյանը և ուրիշներ:

ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄՈՏ

Վերջերս Լենինականում հյուրախաղերով հանդես եկավ Ադրբեջանի Կիրովաբադ քաղաքի Ջաբար Ջաբարլու անվան պետական դրամատիկական թատրոնը: Ներկայացվեցին Ս. Վուրղունի «Վագիֆ», Ջ. Ջաբարլու «Թառամած ծաղիկներ», Մ. Իբրահիմովի «Գյուղացի աղջիկը» և այլ պիեսներ:

Լենինականցի հանդիսատեսները ջերմորեն էին ծափահարում Ադրբեջանական ՍՍՌ ժողովրդական արտիստներ Ի. Թալիբլիի, Սոլմազ Խանումի, վաստակավոր արտիստներ Կ. Սուլթանովի, Ա. Արասովի և ուրիշների բարձրարվեստ դերակատարումները:

Մինչ կիրովաբադցիները իրենց արվեստն էին ցուցադրում հայ բարեկամներին, նույն ժամանակ Լենինականի Ա. Մռավյանի անվան պետական դրամատիկական թատրոնի կոլեկտիվը հյուրախաղերով հանդես էր գալիս Կիրովաբադում և մերձակա շրջաններում:

Հարուստ խաղացանկ էին տարել լենինականցիները: Նրանք ներկայացրին Մուրացանի «Ռուզանը», Ալ. Շիրվանզադեի «Արմենուհին», Գ. Բորյանի «Կամուրջի վրա», Ժ. Հարությունյանի «Սաղիկների աշխարհում» և այլ բեմադրություններ:

Երկու թատրոնների ներկայացումներն էլ հայ և ադրբեջանցի աշխատավորների կողմից ընդունվեցին ջերմորեն: Արտիստական խմբերի փոխայցելությունները նպաստում են դարավոր հարևանների բարեկամական, մշակութային կապերի խորացմանը, ստեղծագործական փորձի փոխանակմանը:

ԲԵՂՄՆԱՎՈՐ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿ

Լենինականցիները սիրով նշեցին քաղաքի պիոներների և դպրոցականների պալատի 40 տարին: Չորս տասնամյակ մշակույթի այդ օջախը արգասավոր աշխատանք է կատարել երեխաների գեղագիտական և աշխատանքային դաստիարակության ուղղությամբ: Հազարավոր երեխաներ ուսումնական պարապմունքներից ազատ ժամերին պալատի բազմատեսակ խմբակներում զարգացնում են իրենց շնորհքն ու ընդունակությունները, ձեռք բերում աշխատանքային ունակություններ:

Պալատի սաները նամակագրական կապեր են հաստատել սովետական և ժողովրդական դեմոկրատիայի երկրների պիոներների հետ, նրանց պատմում են իրենց ուսման, հասարակական աշխատանքների, իրենց հարուստ ու բազմազան առօրյայի մասին:

digitised by A.R.A.R.@

Սպրինտական կյանք

Վ. ՋԱԽԱՐԵՆԿՈՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Լենինգրադում անցկացվեցին ժամանակակից հնգամարտի մրցումներ ՍՍՌՄ-ի, Շվեդիայի, Լեհաստանի և Հունգարիայի հավաքական թիմերի միջև։

Չորրորդ օրվա մրցումներից հետո ՍՍՌՄ հավաքականից Վ. Զախարենկոն (Երևան) գլխավորում էր առաջնությունը, իսկ մրցումների վերջին ձևում՝ վազքում, 4 կիլոմետր տարածությունն անցնելով 12 րոպե 57 վայրկյանում, վաստակեց 5.047 միավոր և գրավեց առաջին տեղը։

Երկրորդ տեղը գրավեց ՍՍՌՄ կրկնակի չեմպիոն Բ. Պախոմովը (Մոսկվա)։ Երրորդ, չորրորդ տեղերը համապատասխանորեն գրավեցին Վ. Միննեը (Բաքու) և Յու. Սավիցկին (Լենինգրադ)։ Հինգերորդ տեղը դուրս եկավ աշխարհի քառակի չեմպիոն Ի. Նովիկովը։

Վաստակելով 14.487 միավոր, ՍՍՌՄ հավաքականը գրավեց 1-ին տեղը, 641 միավորով առաջ անցնելով Հունգարիայի հավաքականից։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ֆուտբոլասերները մեծ հետաքրքրությամբ դիտեցին Ռիո-դե-Ժանեյրո քաղաքի «Ֆլումիննենսե» ֆուտբոլային ակումբի միջազգային ընկերական հանդիպումն «Արարատի» հետ։ Հանդիպումն ավարտվեց 5:1 հաշվով՝ հօգուտ հյուրերի։

Խաղի ընթացքում հյուրերը ցույց տվեցին բարձր վարպետություն, դաշտը լավ տեսնելու և մանևրելու, գնդակի հետ վարվելու, խաղի յուրաքանչյուր պահ ստեղծագործորեն գնահատելու հմտություն, ամբողջ թիմի նուրբ ու ճկուն տակտիկա, որոնք էլ ապահովեցին նրանց հաղթանակը։

Հաճելի և ուսանելի էր միջազգային այս ընկերական հանդիպումը։

Ամառը միշտ մարդաշատ է լինում Երևանի ամառային լողավազանը։

Այդտեղ ամեն օր իրենց հերթական պարապմունքներն են անցկացնում լողորդները, հնգամարտիկների, լողորդների խմբակների անդամները։

Ուսանկարը՝ Զ. Սարգսյանի

ՄՎՏՈՄՐՑՈՒՄՆԵՐ

Երևանի պետական ֆիարշավարտնում և Հայաստանի տարբեր մարզուղիներում անցկացվեցին ավտոռալլի հանրապետական մրցումներ։

Ուժեղագույն ավտովարորդների սպորտային պայքարին մասնակցեցին նաև եղբայրական Ադրբեջանի և Վրաստանի մի շարք վարորդ մարզիկներ։

Մրցումների մասնակիցներն անցան տարբեր վայրերով ձգվող 2.700 կիլոմետր երթուղի և իրենց հմտությունը ցուցադրեցին հրապարակային, գծային արագության և ճնավոր ավտովարման մեջ։

«Մոսկվիչ» մարկայի ավտոմեքենաների գծով հանրապետության չեմպիոնների կոչման արժանացան Գ. Հարությունյանը և Վ. Քիրաչյանը։

«Վոլգա» մարկայի մեքենաների մրցումներում չեմպիոններ դարձան Մ. Հովհաննիսյանը և Ա. Մարտիրոսյանը։

Թիմային հաշվարկում առաջնությունը նվաճեցին Երևանի № 2 մարդատար տաքսամոտորային պարկի վարորդ մարզիկները, երկրորդ և երրորդ տեղերը համապատասխանորեն գրավեցին մայրաքաղաքի № 1 տաքսամոտորային պարկի և Լենինականի մարզիկները։ Մրցանակային տեղեր գրաված կոլեկտիվներն ու վարորդները պարգևատրվեցին դիպլոմներով և գավաթներով։



ԱՐԱՔՍՑԻՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՏԵՂՈՒՄ

«Աշխատանք» սպորտընկերության Երևանի քաղաքային խորհրդի թեթև ատլետիկայի մրցումներում մարզիկներն իրենց ուժերը չափեցին 100, 200, 400 մետր վազքերից և 4×100 մետր էստաֆետից, բարձրացատկից և հեռացատկից։

Թիմային հաշվարկում առաջին տեղը գրավեցին «Արաքս» ակումբի մարզիկները։ Անհատական հաշվարկում նույնպես առաջնությունը նվաճեցին արաքսցիները։

«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԶԵՐՎՆԵՐԻ» ՓՈԽԱՆՑԻԿԸ

Ավարտվեց Հանրապետության «Աշխատանքային ռեզերվներ» սպորտային ընկերության VII սպարտակիադան, որին մասնակցեցին ավելի քան 500 մարզիկներ։

Սովորողների շրջանում սպորտային աշխատանքի լավագույն դրվածքի և «ՍՍՌՄ տուրիստ» կրծքանշանակիրների պատրաստման գործում բարձր ցուցանիշներ ձեռք բերելու համար ընկերության համամիութենական կենտրոնական խորհրդի նախագահությունը «Աշխատանքային ռեզերվներ» հանրապետական խորհրդին պարգևատրեց փոխանցիկ դրոշով։

Տուրիզմի գծով լավագույն աշխատանքի համար պրոֆտեխնիկական № 4 ուսումնարանը պարգևատրվեց կենտրոնական խորհրդի հուշադրոշով։

Հաղթող ճանաչված ուսումնարանների և սովորողներին հանձնվեցին դիպլոմներ։

ԿԱՐՃ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

✦ Վաթսունից ավելի մարզիկներ մասնակցեցին չրացատկի միջազգային մրցումներին։ Աշքի ընկնող հաջողության հասավ Երևանի Արովյանի անվան դպրոցի աշակերտ Սերյոժա Քոչարյանը, որը 10 մետրանոց աշտարակացատկի մրցումներում գրավեց 3-րդ տեղը։

✦ Թեղենիս լեռան փեշերին ընկած գեղատեսիլ վայրերում «Աշխատանք» կամավոր սպորտային ընկերության ավանդական երկրորդ հավաքին մասնակցեցին Երևանի 10 գործարանային կոլեկտիվներից 150 մարզիկներ։

Նրանք մասնակցեցին գրոսանքի, կարճ տարածության հետիոտն արշավների և մի շարք այլ միջոցառումների։

digitised by A.R.A.R.@

ԽԱՉԲԻՆ



Հորիզոնական

5. Սովետահայ կոմպոզիտոր։ 8. Սովետական հանրապետություն։ 9. Հոտավետ ծաղիկ։ 10. Սպորտսմեն։ 12. Հայ պետական գործիչ։ 17. ՍՍՌՄ ժողովրդական դերասան։ 19. Քաղաք-նավահանգիստ Չինաստանի հյուսիս-արևելքում։ 20. Աշխատանքի արդյունք։ 22. Սփյուռքահայ բանաստեղծ։ 23. Ընդարձակ դաշտավայր։ 24. Գոմիդորի տեսակ։ 26. Հագուստ։ 27. 5-րդ դարի (մեր) հույն բանաստեղծ։ 29. Խոսքի մաս։ 32. Բնակավայր Հայաստանում, ուր գտնվում էր միջնադարյան համալսարաններից մեկը։ 34. Սպորտային խաղարան։ 35. Փառահեղ տուն։ 36. Քաղաք Հայկական ՍՍՌ-ում։

Ուղղահայաց

1. Երկրի կամ երկրամասի գծագիր։ 2. Փոխադրական միջոց։ 3. Ընտանի կենդանիների խումբ։ 4. Լեռնային զանգված Հունաստանում։ 6. Գյուղ էջմիածնի շրջանում։ 7. Զգողական ուժ։ 11. Գետուիյուն Ասիայում։ 13. Հույն հռչակավոր փիլիսոփա։ 14. 18-րդ դարի իտալացի դրամատուրգ։ 15. Սովետական երգահան։ 16. Մեհյանական քաղաք պատմական Հայաստանի Շիրակի գավառում։ 18. Իտալացի ականավոր կոմպոզիտոր։ 21. Սովետահայ գրող։ 25. Կարգադրություն։ 28. Միրգ։ 30. Գ. Մերիմեի նովելներից։ 31. Քաղաք Չինաստանում։ 32. ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ։ 33. Արդյունաբերական կենտրոն Հայկական ՍՍՌ-ում։

Կազմեց՝ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆԸ

№ 7-ՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԽԱՉԲԱԹԻ ԳԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Հորիզոնական

5. Համագումար։ 8. Մուխին։ 9. Ածական։ 11. Սան։ 14. Վեզուվ։ 17. Գարեն։ 18. Վերելակ։ 19. Ռեպին։ 21. Մետրո։ 22. Ուրան։ 23. Ռիգա։ 24. Կաճառ։ 27. Տասսո։ 29. Մոլեկուլ։ 30. Վիշապ։ 31. Մկրատ։ 33. Սոմ։ 36. Սահարա։ 37. «Ավրորա»։ 38. Գլադիատոր։

Ուղղահայաց

1. Կապիկ։ 2. Կարաս։ 3. Սուսան։ 4. Մարատ։ 6. Սուխումի։ 7. «Գայլանե»։ 10. Ֆեդերացիա։ 12. Արևք։ 13. Գետրոսյան։ 15. Հեռախոս։ 16. Գապիրուս։ 20. Նռուն։ 21. Մատ։ 25. Անանաս։ 26. Դեֆո։ 28. Անկարա։ 32. Ռաբլե։ 33. Սանդո։ 34. Մական։ 35. Երշով։

ՇԱԽՄԱՏ

= Հայաստանի շախմատիստների հավաքական բիմին ՍՍՌՄ ժողովուրդների 3-րդ սպարտակիադային նախապատրաստելու նպատակով, հանրապետության շախմատային ֆեդերացիան երևան էր հրավիրել շախմատի հայտնի տեսաբան, միջազգային վարպետ Լև Աբոնինին: Բիմի ուսումնա-մարզական հավաքը ճունչս և ճուլիս ամիսների ընթացքում անցկացվեց Երևանում, ապա Կիրովականում:

= Տիգրան Պետրոսյանը աշխարհի չեմպիոնի դափնեպսակը նվաճելուց հետո ժամանեց Հայաստան և հանդիպումներ ունեցավ իր բազմաճազար երկրպագուների հետ: Այդ օրերին Երևանի, Լենինականի և Կիրովականի ֆուտբոլային խաղադաշտերը վերածվել էին յուրատեսակ լսարանների:

= Հայաստանի կույր շախմատիստների ընթացիկ տարվա հանրապետական առաջնության ընթացքում, որն ավարտվեց հուլիսին, մասնակցեցին Երևանի, Լենինականի, Կիրովականի, Հոկտեմբերյանի և Սևանի 16 ուժեղագույն շախմատիստներ: Հանրապետության չեմպիոնի կոչումը նվաճեց Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ավարտական կուրսի ուսանող Զալիբեկ Մակիչյանը: Նա հաղթեց 13 մրցակցի, մեկ խաղ ավարտեց ոչ-ոքի, կրելով միայն մեկ պարտություն: 13,5 միավոր 15 հնարավորից՝ աճա Մակիչյանի արդյունքը:

ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ԽՆԴԻՐ



Մատ երեք քայլից

№ 7-ՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐԸ ԼՈՒԾՎՈՒՄ Է ԱՅՍՊԵՍ.

1. Նf2 ef 2. Զf4 f1Ֆ(Զ) 3. Նd1×: 1... ed Զd4 2. c1Ֆ(Զ) 3. Զf3×: 2... Ud1 Նf1×:

Տուրնիրի հաղթողից մեկ ու կես միավորով ետ մնաց չեմպիոնի հավակուրսեցի Ե. Համբարձումյանը (Երևան): Լենինականի ներկայացուցիչ, բանվոր Շ. Հակոբյանը 12,5 միավորով գրավեց 3-րդ տեղը:

Հուլիսի վերջերին Հայաստանի կույր շախմատիստների հավաքական բիմը մեկնեց Լենինգրադ՝ բնկերական հանդիպում ունենալու այնտեղի ուժեղագույն կույր շախմատիստների հետ:

Գլխավոր խմբագիր՝ ՀՐ. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Խմբագրական կոլեգիա՝ Բ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Հ. ՋԱՐԴԱՐՅԱՆ, Ս. ԿՈՒՐՏԻԿՅԱՆ, Վ. ՄԿՐՏՉՅԱՆ, Գ. ՍԱՐՅԱՆ, ԳՈՒՐԳ. ՍԱՐՅԱՆ (պատ. քարտուղար), Պ. ՍԵԼՅԱՆ:

Ձևավորումը՝ ԱՆ. ՊՈՂՈՍՅԱՆԻ

«СОВЕТАКАН АЙАСТАН» (СОВЕТСКАЯ АРМЕНИЯ)

Ежемесячный общественно-литературно-художественный иллюстрированный журнал

ОРГАН АРМЯНСКОГО ОБЩЕСТВА ДРУЖБЫ И КУЛЬТУРНОЙ СВЯЗИ С ЗАРУБЕЖНЫМИ СТРАНАМИ

«SOVETAKAN HAYASTAN» (ARMENIE SOVIETIQUE)

Revue mensuelle sociale, littéraire et artistique

ORGANE DE LA SOCIÉTÉ ARMENIENNE DE L'AMITIE ET DES RELATIONS CULTURELLES AVEC LES PAYS ETRANGERS

«SOVETAKAN HAYASTAN» (SOVIET ARMENIA)

Social, art, literary illustrated monthly

ORGAN OF ARMENIAN SOCIETY FOR FRIENDLY AND CULTURAL RELATIONS WITH FOREIGN COUNTRIES

Խմբագրության հասցեն՝
Հայկական ՍՍՌ, Երևան, Աբովյան փողոց № 29
Адрес редакции — Ереван, ул. Абовяна № 29
Adresse de la rédaction — Erévan, rue Abovian № 29
Editorial address — Erevan, Abovian Street № 29

Պատվեր 1270։

Ստորագրված է տպագրության 12/VIII 1963 թ.։

ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության տպարանա-պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91։

ՊԵՏԱԿԱՆ գրադարան Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР

digitised by A.R.A.R.@

Բնության գրկում



Հանգստի ժամին:



Անտառում՝ ծա-ղիկների մեջ:



Զրույցի պահին:



Խաղերի հրապարակում:

Լուսանկարները՝ Վ. Սևոյանի



Պիոներները Սևանում:

digitised by A.R.A.R.@

77821





digitised by A.R.A.R.@